



Սիս

Սեպտեմբեր-Դեկտեմբեր

Թիւ 9-12



ԿՐՈՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐքՈՒԹԵԱՆ

Սեպտեմբեր - Դեկտեմբեր

Թիւ 9 - 12

September — December

No. 9-12


S I O N

VOL. 48

OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM
A BIMONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem

Editor-in-chief: Archbp. Shahe Ajamian Editor: Ara Kalaydjian



St. James Press
Jerusalem



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԵՌՆԱԴԻՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ



Ա. Խաչի Վերացման տօնին օրը, Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Նորին Ամենապատութիւն Տ. Եղիշէ Ս. Պատրիարքը կուսակրօն քահանայութեան կոչեց երկու նորընծաներ և վերանուանեց զանոնք Տէր Գեղարդ և Տէր Ասպետ Արեղաներ:

Ձեռնադրութեան սրտաւուչ այս արարողութիւնը ոչինչով կը բացառուէր իր նախորդներէն: Վերջին տասնչորս տարիներու ընթացքին, Նորին Ամենապատութիւն գահակալութենէն ի վեր, քսաններկորդ և քսաններեքերորդ արեղայական այս ձեռնադրութիւնները, կու գային երկարելու գեղեցիկ շարքը այն ուժատեալներուն, որոնք կը կոչուին Միաբաններ Սրբոց Յակոբեանց: Անոնք կ'ընդունէին «Աստուածային և երկնային չորհչը, որ միշտ ինու ըդուքտու կարեաց Հայաստանեաց Եկեղեցւոյ», Աստուծոյ և մարդոց առջև յայտարարելով. «Մինչեւ ցվախճան կենացս, ուր ուրեք եղտանիցիմ, հաւատարմութիւնը և սրտի մտօք ծառայել Սրբոյ Աթոռոյու և տքնիլ վասն շինութեան և պայծառութեան նորին, նաև խանձախնդիր լինել պատուոյ և փառաց նորա և պաշտպանել զաղգային իրաւունս, որ ի Տնօրինական Սրբավայրս»:

Երիտասարդ արեղաներու այս ձեռնադրութիւններով, որոնք իրարու յաջորդեցին Ս. Աթոռէն ներս, վերանորոգուեցաւ և թարմացաւ հին աւանդութիւնը Երուսաղէմի Պատրիարքութեան. Ըլլալ գինուորեալ պաշտպանը ազգային իրաւունքներուն «որ ի Տնօրինական Սրբավայրս»:

Դարերէ ի վեր Առաքելական այս Աթոռին սրբազան առաքելութիւնն է եղած վառ պահել լուսաւորչեան կանթելլը Ս. Տեղեաց Եկեղեցիներուն մէջ, անսպաս պահել Հայկական աղօթքը Քրիստոսի կեանքով նուիրագործուած Սրբատեղիներէն ներս և անընկուն հոկիչը ըլլալ ազգային իրաւունքներուն, որոնք մեր Եկեղեցին կը զասեն համահաւասար դիրքի վրայ Հռովմէական և Ուղղափառ Եկեղեցիներու շարքին, իրեւ մին երեք միակ իրաւասուեկեցիներէն, որոնք հոգ կը տանին միջազգային Սրբավայրերուն: Ս. Աթոռիս Առաքելականութիւնը մնացած պիտի ըլլար պատմական յատկանշում մը միայն, եթէ Երուսաղէմի միաբանութիւնը, Երբեմն նոյնիսկ իր արեան գնով, շարունակած չըլլար առաքելականութիւնն ընտղ իր առաքելութիւնը Ս. Երկրին մէջ:

Իրականին մէջ, քիչ անգամ արդար գնահատանքով գընահատուած են Երուսաղէմի Միաբանին անգնահատելի դոհողու-

թիւնները, որով ան գիշեր և ցերեկ, անսպառ տոկունութեամբ և անսակարկ նուիրուածութեամբ, կ'արժեցնէ մեր Եկեղեցիին դիրքը միջազգային ուշադրութեան, ախորժակներուն և սաղբանքներուն առարկայ երուսաղէմին մէջ: Իր առօրեայ և մանր հաշիներուն մէջ կորուած, մեր ժողովուրդը հեռու է բմբոնելէ կարեռ դութիւնը երուսաղէմ քաղաքին ընդհանրապէս և մեր Եկեղեցոյ դիրքին երուսաղէմի մէջ, մասնաւորապէս:

Քրիստոնէութեան առաջին օրերէն ի վեր, քրիստոնեայ մեծ ու փոքր ամէն ժողովուրդ, Արևելքէն և Արևմուտքէն, փութաց Քրիստոսի մարգեղութեամբ սրբազրծուած այս երկիրը, «կարդալու», ինչպէս կ'ըսէ Լակրանժ, «աշխարհադիր Աւետարանի» (l'Évangile Géographique). «Հինգերորդ» այս Աւետարանիր, զրուած Բեթղեհէմի քարերով, Գալիլիոյ ծովու ալիքներով և Երուսաղէմի ձիթենիներով, նոյնքուն ներչնչից և թերեւ աւելի անմիջականութէն թելաղբական քան չորս Աւետարանները: Հոռվմի կայսրին և Խաչակիր թագաւորին հետ եկան նաև Հայոց թոգուոր և Նախարար: Բեթղեհէմի Ալյոհին, Գեթսիմանիի պարտէղին և Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ հոռվմէական փառաւորութեամբ բարձրացուած տաճարներուն կողքին, Հայ իշխաններն ալ կանգնեցին հայկական տաճարներ և սրբատեղիներ: Հայուն նման եկան հաև Եղիպտոսի Ղպտիները, Միջազգեաքի Ասորիները, Կովկասի Վրացիները, Լիբանանի Մարօնիթները և երկար դարեր աիրող դիրք գրաւեցին Ս. Երկրին և մանաւանդ միջազգային Սրբավայրերուն մէջ: Ապա եկան նաև Ռւղղափառ անկախ Եկեղեցիներ, ինչպէս Ռուսականը, Ռումանականը և ուրիշներ, մեծ պետութիւններու շուրջ: Առաջինները հետքեր թողուցին միայն, յիշատակութեան մը արժանի, իսկ վերջինները Եկեղեցիներ և վանքեր կառուցին, առանց կարենալ թափանցելու Սրբատեղիներին ներս: Հայերը միայն, վեցերորդ դարէն ի վեր, հիմնեցին և կանոնագունդեցին Պատրիարքական իշխանութիւնը, իր փառքով և իրաւասութիւններով: Հոռվմէական բանակին և Խաչակիրներու սուրի ոյժին դիմաց՝ Երուսաղէմի Հայ Միարանութեան Հոգիի դէնքը և աղքային դիտակցութիւնը անդամ մը ևս փաստեցին թէ «Հոգի առաւելէ է քան զմարմին» և թէ որակր ի վերջոյ կը յաղթէ քանակին: Հարիւրաւոր միլիոններ հաշուող Լատին և Յոյն Եկեղեցիներուն դիմաց՝ Համագօր իրաւունքներու սրահանաց թիւնը մեր փոքր Եկեղեցիին ի նպաստ, Ս. Յակոբեանց Միարանին կատարած հրաշագործութիւնն է, անտարակոյս:

Եթէ հիմնած չըլլային տպարան, ընդօրինակած չըլլային ձեռագրեր, դասատուի և կրթական մշակի ծանր բեռը առած չըլլային իրենց ուսերուն, այլ նախանձախնդիր մատակարարութիւնը կատարած ըլլային Սուրբ Տեղերուն և աքնած՝ պայծառ պահելու հայկականութիւնը երուսաղէմի, բառ պէտի ըլլար այն՝ որ Երուսաղէմի զինուորեալ միարանները արժանացած ըլլային և արժանանային ազգիս երախտագէտ գնահաւատումին:

Սրբազան աւանդութիւն մըն է որ կը շարունակուի: Հայ Ե-

բուսաղէմին յատուկ ոգիով մը, որ դարերու կնիքով մըն է կըոշ-
մած ամէն զինուորեալ միաբանի հոգին, անցեալէն ժառանգը-
ւած ամէն գանձ, հոգեորթ թէ նիւթական, կը պահուի այստեղ ան-
շեղ պահպանողականութեամբ: Հպարտութեամբ մը, որուն խորքը
ցաւ է անշուշտ, կը հաստատենք թէ ոչ մէկ նուիրական Աթոռի
կամ վանքի մէջ, հայրենիքին ներս և դուրս, բծախնդրութեամբ կը
պահուի հայ ծիսակատարութիւններու, սրբազն արարողութիւն-
ներու, ժամակարգութեան և խորհրդակատարութիւններու ան-
փոխարինելի ժառանգը, իր հնամեայ հարազատութեամբ և
ամբողջական գեղեցկութեամբ, ինչպէս Երուսաղէմի Հայ եկեղե-
ցիներէն ներս:

Պահպանողականութիւնը մտայնութիւն մըն է, որ կարծ-
րացած և անթափանց կղղիացում մը կամ կեանքին հետ իր կապե-
րը կորսնցուցած կուրութիւն մը ախտանիշը հոգեկանութեան մը
հակառակ, պայծառ գիտակցութիւնը կը յարացուցէ այն եկեղե-
ցականներուն, որոնք իրենց հոգին նոյնացուցած Եկեղեցիին հետ,
կ'ապրին անոր ամբողջական կեանքով: Եկեղեցին անոնց համար,
անցեալին մէջ իր կրթական և մշակութային գերը կատարած,
այսօրուան Սփիւռքի մէջ ալ աղդային իր պատասխանատուաթիւնը
շարունակող հաստատութիւն մը չէ գիխաւորաբար, այլ հոգեկան
խորունկ այն ներկայութիւնը, որուն ընդերքէն կը հոսի հաւատքի
կենսատու ջուրը, Աստուծոյ հոգին: Առանց հաւատքի, առանց
հաւատամքի և հոգեկան այն կապին որ մեզ անդամը կ'ընէ Եկեղե-
ցիի ամբողջական մարմնին, Եկեղեցին կը վերածուի հաստատու-
թեան մը, հիմնարկի մը, կազմակերպութեան մը, ի շարս այլոց:
Ան կը պարպուի իր ոգիէն, յաւիտենականութեան առաջնորդող իր
ոյժէն, ժամանակի ժանգին և պարագաներու փոփոխականու-
թեան դիմացող ինքնավատահութենէն, որով Հայ եկեղեցականը
ինքինք կը զգայ պաշտօնեան Աստուծոյ և ոչ թէ մարդոց, ծառան
իր Եկեղեցիին և Ազգին և ոչ թէ տէրը անոնց, առաքեալը իր հա-
ւատքին և ոչ թէ գանձապահը: Սերմնացանն է ան, որ իր ժառան-
գած սերմերը, հոգեկան մեր արժէքները, կը յանձնէ հողին, խոր
այն յոյսով որ բազմապատիկ պիտի վերածնին: Հաղորդութիւն
բաշխող ձեռքն է ան, որ կը կապէ ներկան անցեալին, այսօրուան
Հայը իր հայրերու չունչին, ոգիին, հաւատքին և հայկականու-
թեան: Աղօթող բերանն է ան, որ մեր ժողովուրդին ցաւն ու տա-
ռապանքը կը մատուցանէ Խաչեցեալին, այրող խունկի նման
բարձրացներով իր հոգիին բոյրը, յարութիւն և անմահութիւն
խոստացող Քրիստոսի պարապ Գերեզմանին առջև: Թերեւս, վաղ-
ուան սուրբն է ան:

Տակաւին շատ մօտ անցեալին, Երբ չէինք աշխարհացրիւ
սփիւռք, Երուսաղէմի Սիաբանը վանական մըն էր միայն, իր վան-
քի հոգեորթ և մշակութային աշխատանքին նուիրուած: Մեր ժողո-
վուրդին հետ, նոր երկինքներու և նոր պայմաններու մէջ գաղութ
դարձած մեր կեանքը պահանջեց Երուսաղէմի Ս. Աթոռէն որ հո-
գեորթ հովուութեան դրկէ իր միաբանները: Ի գին ինքնազրկումի,

Պատրիարքարանս տրամադրեց մեր ժողովուրդին իր լաւագոյն ոյժերը։ Հայց՝ Եկեղեցիի թեմերուն մէջ՝ Երուսաղէմէն առաքուած բարձրաստիճան Եկեղեցականութիւնը և միարանները կը հաշուեն երեսուն և հինգ Արքեպիսկոպոս, Եպիսկոպոս և Վարդապետ։ Մինչև այսօր, Ս. Աթոռոս կը փորձէ հասնիլ ամէն պէտքի և գոհացնել ամէն պահանջ, երբ Եկեղեցական մը կ'ուզուի անհովիւ մնացած Եկեղեցիի մը համար։

Երուսաղէմի մէջ, վերջին տասը տարիներու ընթացքին ձեռնադրուած քսանէ աւելի Եկեղեցականներէն տասնչորսը դուրս են Ս. Աթոռոէն։ Մեր ժողովուրդի հոգեոր ծառայութեան նուիրուած այդ երիտասարդ հոգինները կը տանին Հայ համայնքներուն՝ Երուսաղէմի ողին։ Տնօրինական Սրբավայրերու պաշտամունքին մէջ թրծուած այն ողին, որ իր կոչումին երեք աղքիւրներէն կը բխի. պահել անցեալի ժառանգը, շարունակել Եկեղեցիին սրբազն առաքելութիւնը և բծախնդրութեամբ մշակել ազգային արժէքները։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Կաթողիկոսութեան հաւատարիմ թեմերէն ներս, անոնք գաղափարախօսներն են մեր Եկեղեցիի միութեան սրբազն սկզբունքին, որ հիմնաքարն է Երուսաղէմի Պատրիարքութեան Եկեցուածքին, մեր Եկեղեցին վիրաւորող պառակտումներուն դիմաց։ Մենք կը հաւատանք թէ անցեալին ժառանգուած և նոյն ժողովուրդի նահատակութեան արիւնով սրբացած մեր Եկեղեցիին միութիւնը պահել և պաշտպանել Ս. Էջմիածնի գերազոյն հեղինակութեան շուրջ, սկզբունք մըն է, որ չ' կը նար սահարկութեան և ժամանակաւոր նկատումներու զոհը ըւլալ։ Անխարդախ պահել այս համոզումը և անխռով՝ Ս. Էջմիածնի Սրբութեան խորանին նկատմամբ հաւատացեալ հոգիին սէրը, Աթոռէս թեմերու ծառայութեան գացած միարաններու նշանաբանը եղած է, երկար արքիններէ ի վեր։

Կը հաւատանք թէ ձեռնադրուած վերջին արեղանները, իրենց նախորդներուն նման, Աթոռէն ներս թէ դուրս, պիտի շարունակեն սրբազն աւանդութիւնը Ս. Յակոբեանց Առաքելական Աթոռին, իրենց հոգին ըրած կանթեղը «Աստուածային և երկնային շնորհք»ին, որ միշտ կը լեցնէ և պիտի լեցնէ «զպէտա կարեաց Հայաստանեայց Եկեղեցւոյ»։

Շ. Ա.



ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱԺԱՐԻՆ ՄԷՀ

Սեպտեմբեր 27, 28 և 29, Ռէքարդիչն կիրակիր, ուրախութեան և խոնագավառութեան կրկնակ առիթներ էին Սրբոց Յակոբանց Միաբանութեան և Հաւատացեալ ժողովուրդին համար + Կիրակի առաւօս, ըստ Հին առմարի, տօն էր Վերացման Ս. Խաչի, և Ս. Յակոբեանց Մայր Տաճարը զգեցած էր տօնական օրերու հանդիսաւոր և խորհրդաւոր մթնոլորտ մը; Պատարագիչն էր Ամեն. Տ., Եղիշէ Ս. Արքակուր. Տէքտէրեան, որ նախորդ օր կատարած էր երկու սարկաւողներու քահանացական կոչումը, և որ Կիրակի, Ս. Պատարագի բնթաց ժին, պիտի ձեռնադրէր և օծէր դանոնք իրեն կուսակրօն քահանայ:

ԴՊՐՈՒԹԵԱՆ ԱՍՏԻճԱՆԻ ՏԸՀԻՉՈՒԹԻՒՆ

Ռէքրտիթ, 27 Սեպտ. 1974, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուած երեկոյեան ժամերգութեանէն ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքակուր. Ասմանեան Ժառանգաւորաց Վարժարանի քանչորս աշակերտներու շնորհեց զպրութեան չորս ասակիանները: Աշակերտները, Տաճարի մուտքին՝ նուի ընդունեցին եկեղեցիի ծառայութեան առաջին խորհրդանշանները՝ բանալին և աւելի: Իսկ Եկեղեցիէն ներս, հաւատաւոր սիրտերով անոնք ստուցան դպրութեան աստիճաններու:

ՈՒՐԱՐԻ ՏԸՀԻՉՈՒԹԻՒՆ

Նոյն օրը, դպրութեան աստիճանի տրչութեանէն ետք, Լուսարարապետ Սրբազն Հայրը «Պահպանի» ուղղ ուրաք կրելու արտօնութեւն շնորհեց Ընծայրանի Առաջին դասարանի ուսանողներ՝ Սերոբ Գալէմտէրեանի, Յակոբ Տուրունեանի, Սիմեն Պալեանի և Պարոյր Մելքոնեանի:

ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԿՈՒԱԳՆԵՐՈՒ

Ապա, Լուսարարապետ Սրբազն Հայրը կիսասարկաւագութեան աստիճան շնորհեց Ընծայրանի երկրորդ դասարանի ուսանողներ՝ Ռէքրտիթ Յարութին Աթէշեանի և Ռէքրտիթ Հրանդ Շէքպէթեանի:

Իսկ յաջորդ օր, Շաբաթ, 28 Սեպտեմբեր, Ս. Պատարագի ընթացքին սարկաւագ ձեռնադրուելով՝ անոնք իրաւունք ստացան Ս. Աւետարանի ընթերցում, ինչպէս նաև ինկարկութիւն կատարելու:

ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿՈՒՍԱԿՐՈՒ ՔԱՀԱՆԱՆԵՐՈՒ

Ի ՞ ՞ ՞ ՞ ՞

Շաբաթ, 28 Սեպտեմբեր, երեկոյեան ժամերգութեանէն ետք Ամեն. Պատրիարք Ս. Հայրը կատարեց Երկու ընծայեալներու կոչման արարողութիւնը Ս. Յակոբեանց Տաճարին մէջ, որ լի էր Միաբանութեան հոգեշնորհ Հայրե-

բով և հաւատացեալներով։ Ընծայեալներն էին Ընծայաբանի շրջանաւարտներ Բարչ. Սարգիս Սարկաւագ Տաւուլպարեան և Բարչ. Համբարձում Սարկաւագ Պալեան։ Խարտաւիլակն էր Լուսարարապետ Ս. Հայրը, առընթերակայ ունենալով Հովչ. Տ. Վահան Վրդ. Թօփալեանի և Հովչ. Տ. Աղան Վրդ. Պալեի խօղեանը։ Խարտաւիլակ Սրբազնը վկայեց բնծայեալներու իմացական և բարյուական պատրաստութեան մասին, որմէ վերջ Ամեն։ Պատրիարք Ս. Հայրը տուաւ կոչման առաջին օրհնութիւնը. «Հեղումն չնորհաց Ս. Հովույն ծաւալսցի ի փերայ ձեր...»։ Աղա բնծայեալները համոզումով և հաւատքով արտասանեցին Ս. Գրիգոր Տաթևցիի կողմէ բանաձեռուած Հայուստաննայց Եկեղեցի հաւատամքը։

Զ Ե Ա Յ Ա Ֆ Բ Ո Ւ Թ Ի Ւ Թ

Կիրակի, 29 Սեպտեմբեր, տօն Վերացման Ս. Խաչի, կատարուեցաւ արենայական ճեռնադրութիւնը Երկու ընծայեալներուն, ճեռամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր, որ նաև պատարազիչն էր։

Ճաշու գիրքի ընթերցումն առաջ, խարտաւիլակ Լուսարարապետ Ս. Հօր և առքին թերակայ վարդապետներուն առաջնորդութեամբ բնծայեալները եկան դէպի Տաճարին յառաջամասը, ապա, ճեռնադրութեան շարժականներու երգեցողութեամբ, անոնք ծերագիր Ս. Խորան բարձրացան։

Դարձեայ ծերագիր, անոնք դարձան դէպի ժողովուրդը, աշխարհէ հրամարման ի նշան իրենց բաղուկները դլուխներէն վեր պահած։ «Աստուածացին և երկնային չնորհ»կ երգեցողութեան պահուն զպիեներ «Արժանի են» կր ձայնին, մինչ ընծայեալները կը բոլորուին Պատրիարք Ս. Հօր առջին, որ իր ձեռքերը խաչանիլ զնելով իւրաքանչչելրի գլուխին՝ կ'աղօթէ. «Ես զնիմ զնելու ի փերայ սորա, և դուք ամենեքեան աղօթա արարէք զի արժանի լինցի սա զատիճան քահանայութեան անարաս պահել առաջի սեղանոյ Տեսոն կստուծոյ։

«Ողջոյն»էն առաջ Երկու ընծայեալներուն կը չնորհուի քահանայութեան նշանակ սե փիզնը, ապա կը չնորհուին եկեղեցական միւս զգեստները՝ սաղաւարտ, փորուրար, չուրջառ, գօտի. «Խորհուրդ խորին»ի տպաւորիչ երգեցողութեան միջոցին, ընծայեալները Ս. Խորանին վրայ քաշուած վարագոյրին ետին կը զգեստաւորուին, քիչ ետք իրենց պարձառ ճակատներուն բնդունելու սրբալոյս միւռոնք։

Օծում նորընծաներու

Դպիկներ կ'եղանակեն «Ալռաքելոյ աղանոյք Հովեգմայլ շարականք», և Պատրիարք Սրբազն Հայրը իւրաքանչիւր նորընծայի ճակատն ու ափերը կ'օծէ սրբալոյս միւռոնք, նոյն պահուն իրենց նոր անուններով վերակոչեալով զիրենք։ Սարգիս Սարկաւագը՝ Տ. Գեղարդ Արեդայ, և Համբարձում Սարկաւագը՝ Տ. Ասպետ Արեդայ։ Ապա ճեռնադրի Ամեն. Սրբազնը Ս. Պատարագ մատուցանելու խորհրդանիշը՝ Ս. Սկիւր կը փոխանցէ նորընծայ արեգաներուն, որոնք հաւատացեալ բազմութեան կը բաշխեն իրենց անդրանիկ օրհնութիւնը. Պատրիարք Սրբազնը գեղեցիկ և ներշնչուած քարոզսկ մը իր Երկու Հովերոր զաւակները կը յորդորէ հաւատարիմ մալ Հայուստաննայց Եկեղեցիի գարաւոր և սուրբ աւանդութիւններուն, և ծառայել անոր իրդի անըլիուն և հաւատաւոր մշակներ։

Ապա Ս. Պատարագը կը շարունակուի Խորհրդաւոր մինոլորտի մը մէջ, և աւարտին՝ Հաւատացեալներ մօտենալով կը հոմբուրեն միւռոնաօծ տ-ջերը նորընծաներուն :

Գեղարի տրչութիւն

Երեկոյեան, Խաչվերացի Հանդիսաւոր Անդաստանէն յետոյ, Ս. Յա-կորեանց Տաճարին մէջ, ընթերցութներով և շարականներու երգեցողութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հայրը Կտարեց նորընծաներուն վեղարի տրչութիւնը:

Նոյն իրիկուն, Միաբանական սեղանատան մէջ, պաշտօնական ընթ-րիք մը կատարուեցաւ նախադահութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր, որուն ներկայ եղան նաև Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի ուսանողնե-րը: Միաբանութեան կողմէ խօսք առաւ Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարա-նի Տեսուչ Հոգչ. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Գարդիկեան, որ չնորհաւորեց երկու նո-րինծաները: Յանուն Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի խօսեցաւ Տեսուչ Հոգչ. Տ. Աղան Վրդ. Պալիօգեան որ չնորհաւորելէ ետք նորընծաները, ըստ թէ անոնք իրենց ձեռնադրութեամբ գեղեցիկ օրինակ մը կը Հանդիսանա-յին Դպրեցանքի ուսանողութեան՝ նոյն ճամբուն հետեւ ելու և ծառայելու Հայց. Եկեղեցին և ժողովուրդին: Նորընծայ Հոգչ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտլար-եան իր և իր օծակից Եղրօր կողմէ չնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, և խոստացաւ արդարացնել իրենց վրայ գրուած յոյսերն ու ահնկալութիւննե-րը: Ամեն. Պատրիարք Ս. Հայրը չնորհաւորեց նորընծաները և մաղթեց Հա-ւատարիմ մալ իրենց սուրբ կարգին, յարատեկ և աշխատիլ ի պայծառու-թիւն մէր Ս. Եկեղեցին:

* * *

Նորընծաները իրենց քառասունքը անցուցին Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ, վարժիշուսուցիչ ունենալով նոյն վանքի տեսուչ Հոգչ. Տ. Վա-Հան Վրդ. Թօփալեանը:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՆՈՐԾՆԾՎԱՆԵՐՈՒՆ

Հոգչ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտլարեան

Մնած է Պէյրութ 1951ին, Համեստ ծնողներու զաւակ՝ որոնք իր ման-կութեանը մեռած են: Բազմաթիւ գժուարութիւններով ան յաջողած է նախնա-կան իր կրթութիւնը ստանալ տեղւոյն Սսրակեան վարժարանին մէջ. ապա, 1964ին շրջանաւարտ ըլլալէ ետք դիմած է և ընդունուած Պատրիարքարանիս Ժառանգաւորաց Վարժարանը: Ներկայ Յունիսին աւարտած է Ընծայարանի դպանթացքները:


Հոգչ. Տ. Ասպիտ Արդ. Պալեան

Մնած է Գամիչչլ (Սուրբիա) 1953ին:

Ըստանիքը իր մանկութեան հաստատուած է Պէյրութ, ուր և ան ըս-տացած է իր նախնական ուսումը ազգային վարժարաններու մէջ:

1966ին դիմած է և ընդունուած Պատրիարքարանիս Ժառանգաւորաց Վարժարանը, որուն հապահեայ շրջանը աւարտելէ ետք հետևած է Ընծայարա-նի գասընթացքներուն և շրջանաւարտ եղած ներկայ տարիշրջանի Յունիսին:

: କିମ୍ବା ପଦ୍ମଶଲୀଙ୍କର ପାହାତିଥିଲାମାଙ୍କର



ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԿԱՆԱԳՆԵՐՈՒՆ

Բարշ. Յարսւելիս Արկ. Աքեղեան

Մնած է Տիգրանակերտ (Թուրքիա) 1954ին, ուր նաև ստացած է իր նախնական կրթութիւնը պետական նախակրթարանին մէջ։ 1966ին ծնողքին հետ հաստատուած է Պոլիս, և հետեւ Ա. Խաչ դպրելիքի դուրսնթացքներուն։

1967ի աշնան Երուսաղէմ գալով աշակերտուած է Ժառանդաւորաց Վարժարանին, որմէ չըջանաւարտ ըլլալէ ետք այժմ կ'ուսանի Բնծայտարանի Երկրորդ դասարանին մէջ։

Բարշ. Հրամի Արկ. Շերպեթնեան

Մնած է Պոլիս 1955ին, դաւակը Տէր Գևորգ Քահանյալի, այժմ հանգուցեալ։

Մննդավայրին խսայեան ազգային վարժարանին մէջ ստացած է իր նախնական կրթութիւնը, որուն հնդամեայ շրջանը աւարտելէ ետք ուսումը չարունակած է Միկրարեան վարժարանին մէջ, 1968-69 տարեշրջանին։

1969 Մելուեմբերին եկած է Երուսաղէմ եւ աշակերտուած Ժառանդաւորաց Վարժարանին։ Երջանաւարտ ըլլալէ ետք անցած է Բնծայտարան, և այժմ կ'ուսանի Երկրորդ Դասարանին մէջ։

ՅՈՒԺԵԼԵԱՆՆԵՐ

S. ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐք ԳՈՒՇԱԿԵԱՆ

(ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ)

1874 թուականի Խաչվերացի տօնին, Պոլսոյ արուարձաններէն Պարտիղակի մէջ, Խաչերես և Մարիամ Պիլիճեաններ կը բախտաւորուէին ժանչ զաւակով մը՝ զոր պիտի կոչէին Մկրտիչ: Ան հետագային պիտի ըլլար Ս. Երուսաղէմի Առաք. Աթոռի երախտաւոր պատրիարքներէն մին՝ S. Թորգոմ Արքեպու. Գուշակեանը:

Պատանութեան, զգալոյի իր մէջ կոշումը հոգևորական մարդուն և ագղեցութեանը տակ իր շշապատին — ընտանիք և կրթարան— կրօնաշունչ մըթնոլորտին, կը մտնէ Արմաշի Հռչակաւոր դպրեվանքը, ուր Դուքրան և Օրմաննան Սրբազններու նման Հեղինակաւոր և լուսամիտ եկեղեցականներու շունչին տակ պիտի կագմուէք իր նկարապէրը՝ ազգային և հոգեկոր զործիչի մը բոյր բարեմասնութիւններովվը:

Պիտի շխափնէ 1896ին իր քահանայական ձեռնադրութենէն եաք Արմաշի մէջ իր ունեցած դրդունչութեան ըստքը (Կառած է մինչև փոխագանձաւայրութիւն), ո՛չ ալ Սեբաստիոյ և Եղիպատոսի իր առաջնորդութիւններու ժամանին, ուր ամենէն աւելի ի յայտ պիտի դային իր վարչապէտ և կազմակերպիչ առաջնորդի մը յատիւթիւնները: Փատո՞ որ Եղիպատոսի իր առաջնորդութիւնը մերին և իր վայրենանումէն տառնամնակինը ետք իսկ իր յեշատակը այսք'ն կառ է մնացած Եղիպատոսայ գտղութիւն մէջ:

Քիչ անդամ պատահած է որ աշակերտ մը այնքան ուժգին կերպով ապդուած ըլլայ իր ուսուցչին և ունենայ այնքան անհաճան սէց ու հրացում անոր հանգէպ՝ որքան եղած ըլլայ պորպական Տ. Թորգոմ Պատրիարքին, իր անզուզական ուսուցիչ Դուքրեան Պատրիարքի նկատմամբ: Աւ երբ կոյունցու Ս. Աթոռոյ պատրիարքութեան բարձր պաշտօնին՝ իր ուսուցչին մահովի ընդհանուած դորեր չարունակելու դրսցումն էր որ չատ հաւանարար իր հոգին բեցուց աթ հրանութեամբ՝ դոր մեծ գործերու կանչուած մէծ հոգիները միայն կրիան պարէ ու ապրիլ:

Անսարակոյք որ այս գարու երեսունական թռականները — իր գահակարութեան շրջանը — հանդիսացան Ս. Աթոռոյ համար յառաջդիմութեան, պերեւքի և շնաւարարութեան Աւագայու և բացառիկ շրջան մը: Ունչուշտ, Տ. Թորգոմ Պատրիարքի անմենահան հմայքին ու կարսկութիւններուն կողքին, այդ յաջողութիւններուն իրենց նպաստու բերքին այդ օրերուն Ս. Երկրի հայութեան և Ս. Աթոռոյ Միաբանութեան պատկառելի թիւն ու երկունական թռաւ գաններու առաջին շրջանին Ս. Երկրի խոզաքական բաղդատարար հանդարտ ու պատօնութիւնը:

Ս. Աթոռէն ներս, Դուքրեանով սկզբնաւորուած կրթական ոռ մշակու-

թային գործը իր լրումին, իր գագաթնակէտին պիտի հասնէր Ամեն. Տ. Թորդ զում Սըրագանի պատրիարքութեան կարճատև լրջանին: Այդ ըշխանը ընդուրկով եօթը տարիներէն իւրաքանչիւրը գրեթէ նորութիւն մը ունէր Թրժանակիցինք Ա. Աթոռոյս տարեգրութեան մէջ, իրին կրօնական կամ կրթական նուանում:

1932ին, տակաւին իր գահակալութեան առաջին տարին շրույրած, Ս. Թարգմանչաց ազգային երկասո նախակրթարանը կու տար իր առաջին հունձքը: Քանի մը ամիսներ ետք ալ բացումը կը կատարուէր Կիւլպէնկեան Մատենադարանին, որ կուռած էր ըլլալու մտաւոր լոյսի վառարանը այս Հաստատութեան և, 1948ի Արար-Հրեայ պատերազմէն ետք, մօտ քան տարիներ, մեծագոյն գրապալատը Ս. Քաղաքին:

1933ի Հոկտեմբերին կը կազմակերպուէր հարիւրամեայ յոթեւեանը Ա. Աթոռոյս Տպարանին, որը կ'օժտուէր նոր և արդիական մեքենաներով: Իսկ Դուրեան Մատենաշարը, որ այդ օրեքուն կը հիմնուէր, նոր թափ մը պիտի տար տպագրական աշխատանքներուն և նոր ու արժէքաւոր հրատարակութիւններ պիտի գային աւելնալ Հայ մշակոյթի գանձարանին վրայ, կրօնական, պատմական, բանասիրական և այլ մարգերու մէջ:

1934ին կը կազմակերպէ ծրագիրը Ժառանքը և Ընծայարանին և յարժարանին, յարժարցներով զայն ժամանակի պահանջներուն: Պաշտօնի կը կոչէ Յ. Օշականի և Շահան Գէրպէւսանի նման բազմահմուս ու արուեստագէտ ուսուցչիներ, որոնց չունչին տակ պիտի անձէր ու ազգային զդացումներով թթուէր հոգկորականներու չնորհալի փաղանգ մը՝ որ հետագային ազգին ու եկեղեցին բոլորանուէր իր ծառայութեամբն ու իր ստացած չնորհներուն լաւագոյնս օգտագործումովը պիտի տիրանար բարձր դիրքերու մեր Եկեղեցական ասպարէջն ներս, մտային ու հոգևոր սնունդ ջամբելով աշխարհացրիւ Հայութեան Հայրենակարօս բեկորներուն:

1935ին մեծ շուրջով կը տօնուէր, ինչպէս արտասահմանի զանազան կեղրոններու՝ այնպէս ալ Ս. Երուսաղէմի մէջ, Աստուածաշունչի Հայերէն թարգմանութեան 1500ամեայ յորելեանը, նախածեռնութեամբն ու գլխաւորութեամբը Ամեն Տ. Թորդով Պատրիարքին: Երուսաղէմի մէջ կը կազմակերպըւին երեք հրապարակային հանդիսութիւններ՝ նշելու համար մեր մշակոյթի պատմութեան կարենրազոյն այդ հանդրուանին մեծութիւնը: Այդ առթիւ Հրատարակուած «Ցուշարձան» պատկառելի հատորին պատրաստութեան մէջ «առիւծի բաժին»ը կը պատկանի հոգելոյս Պատրիարքին:

Հակառակ Ս. Երկրի մէջ տիրող գործադուլին ու քաղաքական անպահով կացութեան, 1936 թուականն ալ չէր անցներ առանց ուշագրաւ նուածումի՝ այս անգամ Ս. Աթոռի կրթական մարզին մէջ: Կը հիմնուէր Յոպպէի Ս. Գլխադիր Վարժարանը, որով բազմացող այդ զաղութիւն հայորդիները կարելիս թիւնը պիտի ունենային սուանալու աղջային նախակրթութիւն:

1937ին նոյնը կը կատարուէր Ամմանի գաղութիւն մէջ: Փոքրաթիւ այդ դադութիւն ալ հայեցի մշակոյթէ չզրկելու աղնիւ մտահոգութենէն թելարքուած՝ Տ. Թորդ Պատրիարք բացումը կը կատարէր Հեթումեան տպագային նախակրթութիւնին:

1937ի վերջին օրերում՝ Պատրիարքը կ'ումենայ ստքի արկած մը, որը զինք անկողին կը գամէ չուրջ երեք ամիսներ: Այդ վիճակին մէջ իսկ ան կը չառնակէ գրել ու ստորագրել Սիրնի բովանդակալից խմբագրականները և ուրիշ արժէքաւոր աշխատութիւններ:

1938ի վերջին ամիսներուն կը մեկնի Եղիպատու, ուր երկու ամիսներ չարունակ առաջկան կ'ըլլայ իր նախկին հօտին յարգալից գուրգուրանքին : Ա. Աթոռ դարձին՝ հոգեպէս և մարմնապէս կազդուրուած, նոր թափով կը լծուի կրօնական, ուսուցչական որ գրական իր պարտականութիւններուն : Դժբախտաբար շատ կարճ կը տեէ այս շրջանը, և իր ջարմէն 46 օրեր ետք, 1939 Փետրուար 10ին, գրեթէ յանկարծամահ կը վախճանի, խոր ուուզի մատնելով բովանդակ ազգն ու եկեղեցին :

Ով որ կարդայ Սիոնի մահագրականի թիւին մէջ նկարագրութիւնը երանաչնորհ Պատրիարքի կեանքին վերջին օրուան՝ անկարծիի է որ չհամակուի խոր և ճնշիչ յուզումով, Մահացու կաթուածը ընդունելին վեց ժամ առաջ միայն հեռազրով մը իր ցաւակցութիւնը յայտնած էր Ս. Պաղաքին Ֆրանչիսկ եանց Միաբանութեան թիւը . Կիւսթուպին՝ նոյն տուաւու վախճանած զոռմին . Ս. Պիոն ֆԱ. Պապի մահուան առիթով : Եւ Հարուածէն մէկ ժամ առաջ միայն բահնուած էր իր աշակերտներին — Ընծայարանի աւանոնդ ուսրկաւագներուն, որոնց դասաւանդութեան համար քանի մը պահ էր յատկացուցած դրեթէ ամէն օր, հակառակ իր քայլայուած առողջութեան :

Թորգոմ Պատրիարքի մահուան առթիւ լոյս տեսած Սիոնի մահագրական սառուար թիւը, իր բովանդակած աւելի քան 40 դրութիւններով լաւագոյն ապացոյցն է այն սիրոյն ու յարգանքին՝ զոր Միաբանութիւն, ուսանողութիւն, զաղութ և սփիւրքահայութիւն անվերապահօրէն կը տածէին իր հանդէպ և նոյն աստեն այն խոր սուզին ու կսկիծին՝ զոր անոնք զգացին երանաշընորհ Պատրիարքին վաղաժամ մահովը :

* * *

Իր ինքնագիր քերթուածները — թէկ քանի մը տասնեակ միայն, այլ որակով բարձր—, ապացոյցը կու տան բանաստեղծական իր խորունկ զգայնութեան : Մտածում և զգացում հաւասար ուժգնութեամբ կը գունառորեն իր բանաստեղծութիւններուն իւրաքանչիւր տունը, Գերզգայուն սրտի և խորաթաթափանց մտքի արգասիքն են անոնք, ուշագրաւ՝ իրենց դաշնութեամբն ու հեղասահ կշռականութեամբը : Խսկ իր թարգմանածոյ քերթուածները՝ Ֆրանսացի ականաւոր բանաստեղծներէ, կատարուած են բացառիկ ճարտարութեամբ ու զմայլելի ոճով : Ֆրանսներէնը, իր մայրենի լեզուին նման, գաղտնիք չունէր իրեն համար :

Իր արձակ զրութիւններուն մէջ՝ «Ալամելոց Շալիդավ» հատորը պիտի մնայ իր սեռին մէջ ուշագրաւ և մեր կրօնական գրականութեան մէջ իր պատուաւոր տեղը ունեցող երկասիրութիւն մը : Հոգեւոր ապրումներու և մտասոյց ինքնամփոփումի արգասիքը եղող այդ գերքը մեզի կը բերէ հոգեւոր-քարոյական խորունկ ճշմարտութիւններ, անցած իմաստափրութեան պրիսմակէն և բիւրեղացած Աւետարանի ճառագայթող լոյսին տակ :

Խրիմեան Հայրիկի և Եղիչէ Դուրեան Պատրիարքի մենագրութիւնները կազմող իր զոյդ հատորներն ալ յատկանշական են, ու իր մէջ օրեւան կը բերէն մարդու մը ներաշխարհին ու հոգերանութեան թափանցելու ու դայն իր բորբագրուն մէջ նուաննելու ու ներհուն ու զմայլելի կարողութիւնը :

«Հնդկահայք»ը մեր գաղութներու պատմութեան մէջ ունի իր պատուայ տեղը : Ալաջին Աշխարհամարտին, Հնդկաստանի և Ինդոնեզիոյ գաղութ-

ներուն մէջ կատարած իր տռագելութիւնը՝ մէր պատճութեան աժհնէն եղեռական օրերուն այդ ափերու հայորդիներուն աջակցութիւնը տապահոյելու և մտնաւանդ աղյային զբացումները հրահրելու տեսակիցուէն, եղուծ են խիստ արդիւնաւոր և մէր դրականութիւնը հարստացուցած իր առինքնող ու վարակիչ ոճովը խիստ հետաքրքիր այս հատորով :

Ու տակաւին, «Աւետարանի ձամբէն», «Քարոզներ», «Սուրբ Ա. Տօնի», ինչպէս նաև թարգմանութիւններ՝ «Հոգիբանութիւն», «Պոդիկոս» (տաղաշափեալ), և մեծ ու փոքր այլ հրատարակութիւններ, մանաւանդ «Նարեկ»ի աշխարհաբար թարգմանութիւնը, կու դան անմահացնելու յիշատակը մեծանուն այս Պատրիարքին:

Ու ի վերջոյ, իրքի բեմի մարդ, Թորգոմ Սրբազն գիտէր հմայել ունկնդիրները իր քարոզներուն հզօր ու առինքնող թափովը։ Թարգմանութեան իր գասրնթացքները պիտի պատրաստէին Ս. Յակոբեանց ընմին ապագայ քարոզիչները։

Իր ծննդեան հարիւրամեակը յորժար առիթն է որ խոնարհնք իր անմոռանայի յիշատակին առջեւ, ուխտելով հաւատարիմ միաւ այն վսեմ սկզբունքներուն՝ որոնք իրը եղան իր կէսդարեան զործունէութեան բովանդակ ընթացքին։

Գ. Ճ.

Երուսաղէմ



«ԱՆՉԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ»

Մե՛ր ալ թիւը հասաւ երեսուն և եօթի.
Աստուած իմ, սիրոս ի՞նչպէս դէպի Քեզ կը յորդի:
Բայց թիւն ի՞նչ կ'արժէ, Տէր, շնորհէ՛ որ որակին
Նողայ փայլը մեր մէջ, սըրբութեան զինջ ոսկին:

Խընկաբոյք կարմիրով լեցուած այս բաժակն ա՛ռ:
Քամելէ վերջը մէջն ողկոյզներ բոցավառ,
Անդողդոց մատներով բայց ահով բըռնած վեր՝
Տերեր ենք զայն ընծայ սեղանիդ սըրբանուէր:

Ա՛ռ զայն, և տո՞ւր ուրիշ մը մեզի, փոխարէն.
Մեր ուխտն է ոք երեսուն և եօթներ հռ'ս բերեն
Քեզ, իբրև աօն յոյսի, հաւատչի և սիրոյ,
Անարատ կեանքերու գոհեր միշտ ի նորոյ,

Որ այս հռդն օրհնըւած, ոռոգուած քու ազով,
Ռւնճացնէ միշտ սոսոք հասկեր և որքեր ջով.
Որ հրազիդ սուրբ իւղին մընայ լոյսը անշէջ,
Ու «Անձինք նուիրեալք»ն հընչէ միշտ այս Տան մէջ:

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊՈ. ԳՈՒՇԱԿԵԱՆ



ԽԱԶԻՆ ՇԱՄԲԱՆ



ՄԵՆՔ ՀՈՆԻԲՆՔ անոր ծէսը, կաթոլիկներու պաշտամունքային այն կարգ՝ զոր կը դորժադրեն անոնք Եկեղեցոյ մէջ, Խաչելութեան պատկերաշրջի մը առջևէն թափօրական անցք կատարելով աղօթքով, երդով, Ս. Գրական ընթերցուածներով ու ծնրադրութեամբ, և զոր աւելի հանդիսաւոր եղանակաւ կը կատարեն անոնք հոս ժանաւանդ, Ս. Քաղաքին մէջ, ուխտաւորներու տողանցութեամբ այն ճամբաներէն՝ ուսկից կ'աւանդուի թէ անցաւ գատապարտուած Փրկիչը, երբ դինուորներ զԱյն դէպի Գողգոթա կ'առաջնորդէին՝ խաչը ուսին՝ չարերու հայհուշներուն և զգայուն հողիներու լացին մէջէն:

Բայց ունինք անոր խորհուրդը. զայն կը պաշտենք ո՛չ միայն խաչի տօներուն, երբ Շեմաչի քո Քրիստոս երգն ի բերան համերամ ժողովուրդով կ'երկրպագմէնք խաչին պատկերին և անով խորհրդանշուած Վեշտի և Քաջութեան մտածումին առջն. ո՛չ միայն Աւագ չարթուան ընթացքին, երբ Խաչի ձառին արեամբ լուսաւորդած էջերը կը բացուին մեր հաւաքութին առջն, եղերականօրէն ախորդ և աստուածայնօրէն վսեմ իրադարձութիւններու յաջորդականութեան մը մէջէն, այլ մասնաւորաբար Յարութեան մեծ Տօնը կանփող պաշխարութեան օրերու Քառասնորդական շրջանին, որ Մեծ Պահքն է :

Խաչին ճամբան, մեզի համար, պիտի ըսէի նոյն խոկ՝ մեր Եկեղեցւոյ ըմբռնումովը, Մեծ Պահքն է միայն: Ան է որ, իր պարտավորած ժամամփուփումի ժամերովը, կրնայ մարդուն սիրտն ու միտքը տանիլ շմեռնող Յոյսին ու ապրեցնող Սիրոյ այն խորհուրդին՝ որ խաչին ճշմարտութիւնն է ինքնին: Ասոր է որ կ'առաջնորդէ ահա մեզ Եկեղեցին, հանգրուան առ հանդրուան, եօթնեակներուն ապաշխարութեան բւղիէն:

Ապաշխարութիւն. բայց այս բառը՝ սուզի, հրաժարումի կամ պահեցողութեան հասարակ առումներէն շատ աւելի բարձր իմաստ մը ունի քրիստոնէական հաւատքին համար: Ու Եկեղեցին ա՛յլ բանն է որ կը հասկցնէ մեզի պաշտամունքի այն կարգաւորութեամբը: որուն մէջ աստուածային խօսքը, նըւիրական խորհուրդը և սրբազն երգը, այսինքն Ս. Գիրքը, Միսարանը և Շարակնոցը իրենց ամենէն հարուստ մասերը կը հիւսեն, հողիի կեանքը նորոգելու համար մեր մէջ:

Այդ բառը կը նշանակէ արդարն ինքինքը ի վիճակի դնել անկեղծօրէն քննելու իր ներքինը, կանգ առնելու տեղի ունեցած վրիպումներուն առջն, արտմելու և զջալու համար անոնց պատճառած աւերին վրայ, և, առանց ընկճուելու պատահած անկումներու պատճառած սոսկումէն, Աստուծոյ սիրոյն զպացումովը զօրացած, բաղձալ և հաւատալ բարոյական վերականգնումի կարելիութեան:

Խորհրդ, զգալ և կամենալ ուրեմն . այսինքն Հռկեզման զեանը շարժման մէջ դնել ամբողջ ապահոված, նուազած և չուարան անձը զնրանաւանականու առաջ ըլլութութոց պատկերով մը պարզ էն մէջ . ու այժ ամենը՝ հոկմութ ու թշութեան և կրծնական երկխաղաղութեան աշխարհը սրբաշխութ ու զակութիւն եր շուրջը, ուր չփարձնայ թօփանցել աշխարհը ազգեցութիւնը :

Բայց Նկեղեցին չի խուականանար լոկ գրաւիրելով զմենկ ժամանակն և զդացական ապրումներու . անիկա կերպով մը մեզի տուն կու տայ նաև այն կէտ տերը, որոնք առարկայ պէտք է լինէին ապաշխարութեան ընթացքին կատարելի անդրագարձութիւննեց : ա եօթը կիրակիներու աւետարանական պատկերներու չարքը գատաւորեան է պարզապէս մյոյի թերագրութիւններուն . թօնան նկարներ՝ որոնք հաւատացնեալին կը բացատրեն թէ, աւակից կը սկսիր, թնչ դարձակէտերէ կ'անցնի, և ո՛ւր վերջունքու կը յանդի խաչին ճամբան :

Նետեկինք վայրէեան մը իրեն . Ան կը սկսի ժարդուա ստիգմութէն նայնիսկ . առաջին երջանկութեան այն վիճակէն, որուն սպանանութ էր Ցէրը իր բանաւոր արարածը, օժտելով զայն իմացական և բարոյման միրչիրու պար գններով, ու մանաւանդ գերբնականին հասողութեան ձգուումովը :

Լուսաւոր բարձրեւնքէ մը սկսած այդ մամբան սամիայն կը մոլորի յանկարծ քէպի մթամտուեր վայրէջքներ, երբ մարդ՝ սիամէ կիրարկեւով իր ազատութեան կարողութիւնը, կը կորսնցնէ Աստուածէն իրեն չնորհուած նրինան կութիւնը :

Վիշտի կեանքը . աշխատութեան, տառապանքի և փորձութեանց կեանքըն է որ կը բացուի այն ատեն . ինկած հրեշտակ մըն է մարդը՝ ցաւոց այդ հովանին մէջ՝ որ երկինքը կ'եցաղէ : Միակ կազզոյըը զոր կ'ունենայ ան հոն, իրեն կու դայ իր հոգեկան արժէքին զգացումէն և ա՛յն ժամանակութենէն մանաւանդ թէ անհուն բարութիւնը, աստուածային սէրը, որ զաղտնիքն է տիկիդրական կեանքին, չի կրնար իր կորուստը ուղղել : Այդ ինքնածին վստահութիւնը, փրկութեան զոյթն չողը՝ չարշարանքի ճամբուն վրայ ցաթած, անհուն իրախոյսի ազդակ մըն է իրեն համար :

Վիշտին զգացումը, զոր մեղքին գիտակցութիւնը միշտ աւելի խորունկցուցած է իր մէջ, փոխուած է հրմակ չարին զէմ ճաքառումի ողիքի մը . Վայոց ձորին յաջորդած է կոռուածաշոը : Զջլումը՝ համբերութեան և քաջութեան մէջ է որ կը պտղաբերուի . բաւական չէ տիրիլ գործուած սիալին համար . անհրաժեշտ է բարոյական ոյժ հաւաքել՝ չկրկնելու համար անցեալը : Իսկ ասոր համար հարկաւոր է դիմոնալ անտեսել հոգեկան կեանքը . այսինքն ընել որ շխանգարուի հոգեկան կարողութիւններուն ներդաշնակութիւնը իրաւու հետ, որ մարմինին և հոգիին իրաւունքները շխանուին իրարու հետ, միջը շմոցնէ նպատակը, և հակադարձարար :

Բայց ներքին այդ տնտեսութիւնը, հոգիին ինքն իր մէջ ու ինքն իրեն հետ ներդաշնակուելու այդ արարքը մեծ արժէք մը պիտի չներկայացնէր ինքնին, եթէ անիկա մնար ինքն իր վրայ փակուած, առանց արտաքնանալու : Մար-

գըս կրօնական և ընկերական էակ է ի բնէ՝ այդ պատճառուաւ բարոյական անհրաժեշտութիւն է որ տնտեսութեան այդ սկզբունքը իրականանայ նաև իր անձն գէպի գուրս և գէպի վեր՝ առ ընկերն և առ Աստուած քաջարերութեան մէջ։ Պէտք է որ ընկերական կեանքը իրականանայ պարուուց և իրաւանց հաւասարակուած չափի մը վրայ, արդարութեան պարագումը ամենէն կենդանի ձգուուն ընելով խիթէին։ Խոկ ինքինքը Աստուծոյ կամքին ենթարկելու՝ անոր թագաւորութիւնը իր վրայ հրափելու տեսչը պէտք է լինի մշտական բերումը պիրտին։

Երբ հաւատացեալը կը ջանայ և կը յաջողի այսպիսի խոկումներով, այսպիսի ներշնչումներով, այսպիսի յօժարութիւններով և յանձնառութիւններով մշակել իր մէջ ներքին կեանքը, պիտի զգայ ընդհաւապ ազգումը իր մէջ հոգեկան զօրութեան մը, որ զալուստն է իր մէջ աստուածային ճշմարտութեան, և որուն ի տես՝ կը բերկրի միայն հոգին, ինչպէս պիտի բերկրէին — եթէ կաքինային զգալ ու խորհիլ անտառին ծառերը, տեսնելով՝ գարնանասկիզբին՝ թէ կոտրիչ ի ձեռին կու զայ իրենց տէրը, յօտելու և մաքրելու համար իրենց դու և վիրակոր մասերը։

Այսպէս է ահա խաչին ճշմարիտ և գաղափարական ճամբան։ Ո՞՛ տաժանքներով, զի կոփաներուն ամենէն դժուարինն է այն՝ զոր մարդ մղել կը պարաւասորուի իր բնութեան այլևս մաս զարձած կիրքերուն դէմ՝ բայց նոյն ատեն նաև երանաւէտ՝ երբ գիտակից սիրով և յօժարութեամբ անձնամատոյց կը լինինք անոր։ Կորսուած երջանկութիւնը, զայն վերապանելու համար թափուելիք ջանքը, անոր ստացումը ապահովելու համար ի գործ դրուած հոգեկան տնտեսութիւնը՝ ընկերական առաքինութիւններով և ի խորոց սրտի հաղորդակցութեամբ Աստուծոյ հետ։ ահա այդ ճամբուն հանգրուանները, որոնցմէ անցած է միշտ հաւատքի մարդը։ ու զայք մեղի մատնանիշ կ'ընէ դարձեալ ահա Մեծ Պահքը, իր ծխուական կարգաւորութեան խորհրդաւոր և պատկերալից սարուածքով։

ԹՈՂԳՈՄ ԱՐՔԵՊՍ. ԳՈՒՇԱԿԵԱՆ



ԳԻՐՔԵՐՈՒՆ ԳԻՐՔԻՆ...

Տեղ չո՛ւնին ֆեղ համար գրատունիս դարաններն,
Մեծ ու փոքր՝ ամէնքն ալ գիրքերով ծանրաբեռն:
Երկու մեծ նակատներ, բանակներ զերդ կրրկին,
Եռաթե, ուրաշեայ, կեցուածքով ահագին.
Ուրիշ գոյգ մ'իրենց մօտ, միւս մ'ալ դէմ յանդիման,
Անոնցմէ քայլ մը լոկ ետ՝ կանգուն կը մընան.
Երեքներ մինչ ուրիշ՝ քարձ ու նեղ՝ մարտկոցներ
Կը քըւին, գլուխներնին խրոխտ տընկած դէպի վեր:

Ոչ մէկ տեղ՝ ֆեղ համար, դիրքերուն մէջ այդ վէա,
Որոնցմով խուցս այս լուռ ուազիմադաշտ մ'է կարծես,
Ո՛վ գիրք սուրբ, հոգւո՞յս գանձն, Աստուծո՞յ դու մատեան,
Ուր սիրտերն երկընքին խորհուրդներն կը կարդան:

Երբ դուրսի մայրիէն մաղուած տիւը ոսկի
Լուսամուտ փեղկերէն հեղիկ ներս սողոսկի,
Կամ գիշերը, երբ որ, փառփառ լոյսը նրագին
Լեցընէ ողջ սենեակս իր վառքովը ուժգին,
Ու յանկարծ թիկունքներն ոսկեկազմ գիրքերուն
Զերդ կիտուած ասպարի՝ նըշուլեն շողշողուն,
Բըլշակնած աչքս ինչո՞ւ կը փնտուէ իսկոյն ֆեղ,
Է՞ր ֆեղի կը տենչամ անձկանքով ըղճակէզ...

Ա՛խ, մնացի՛ր դուն ինձ մօտ, սեղանիս վրայ՝ անփակ,
Այդպէս լուռ տարածած էջրդ զինջ ձախիս տակ,
Ու, նամբովը սրբտիս, փոխանցէ՛ աջիս՝ ոյժ,
Խանդ ամրիծ հաւատքի, ներշընչման յոյզ անոյշ,
Որ գրիչս յոյլ, դողդոջուն, չը սահի ձեռքէս վար,
Ու խեղդուքն խորհաւրդներս գիշերին մէջ խաւար:

1

Տեղ չունին, ֆեղ համար, գրատունիս դարաններն,
Մեծ ու փոքր, ամէնքն ալ, գիրքերով ծանրաբեռն:
Քու տեղն հո՞ս է միայն, Աստուծո՞յ ո՛վ շունչ դուն.
Սեղանի՞ս վրայ՝ Գիրք սուրբ, ո՛վ դուն լոյսը մարդուն:

ԹՈՐԴՈՄ ԱՐՔԵՊՈ. ԳՈՒՇԱԿԵԱՆ

ՆՈՐԵՆ ԱՐԻՒՆ ՈՒ ԿՐԱԿ...1

Նորէն արիւն ու կրակ եւ մահ ու աւեր,
Նորէն սըրտեր անթրբագ եւ պնբոյժ ցաւեր:

Նորէն մայրեր սեւաւոր, հայրեր սրգալի,
Նորէն քոյրեր սիրաւոր պիտ' մընան այրի:

Ու մանուկներ դեռ անծիմ՝ պիտի ծընին որբ,
Ծոցը քալուկ բախիծին ու վըշտին մէջ բորբ:

Կը հիւսէ մահը ոստայմ՝ առէչ առ առէչ,
Շէներ, գիւղեր ու ոստան նորէն բոցի մէջ...

Խօնչ է իմաստը այս յորդ արեան հեղեղի,
Զէ՞՞ որ ամենքս ենք անցորդ, կեանքն արդէն լեղի:

* * *

Շաշին, շառաչ ու քընդիւն եւ բոց ու շառափ,
Մեռնողներու իրոքնիւն, ոռոմբերու տարափ:

Պարմաններ որ ժամ մ'առաջ սէր կ'երազէին,
Նայուածքով շէջ ու սառած երկինք կը նային...

Մայրեր ցաւին մէջ անքուն՝ հիմա կը սպասեն
Զաւակներն որ գառնան տղւն, «Մայր, եկանք» ըսեն.

«Եկանք որ լոյսի, սիրական, պահենք միշտ անշէջ,
Որ մայրերը չը սրգան՝ նըստած մութին մէջ»:

* * *

Մայր, որդիդ ա'լ պիտ' չը գայ... Միրտըդ մի տանջեր,
Բազմի վազերը վըկայ՝ խօրունկ է նընջեր:

Ճակտին գընդակ է մըտեր, յօնքերին՝ արիւն,
Ծումբը թեւն է անջատեր, բայց անդորր է քունն:

Ծառի շուքին է պառկեր... ի՞նչ աղուոր հասակ,
Ճակտին վարդ է ծաղկեր՝ զերդ փառքի պրասկ:

* * *

Հրեայ, արար դուք մայրեր՝ նոյնն էք ինձ' համար,
Զեր սիրտն խինդո՞վ Վարարէր, հընչէր զերդ քրնար:

Զեր վըշտին դէմ բորբոքուն՝ կը չոքեմ ես ծունկ,
Ցայզն ամբողջ սիրտս անելուն կը մըխայ զերդ խունկ:

Մայրեր, խորան խորհուրդի, սրբութեան տանար,
Լոյսն ո՞վ մարեց ձեր սըրտի, քողուց ձեզ անհար:

* * *

Տէր կը բաւէ, քող լըռեն ա'լ ոազմի փազեր,
Արեւ մ'արդար քող սըփուէ իր տափուկ շողեր.

Ոչ մէկ մօր սիրտ ալ մաշի... Այս «Ճովտէն ցաւի»
հաղաղութիւնը հոսի ջըրովն իր ծաւի:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Մեծ միութեան մը կը դիմէ ամեն էակ, ամեն շունչ,
Գետերն ինչպէս որ կը դիմեն դէպ' ովկիանոսը անունչ.
Ատելութիւն, կարօտ ու սէր պիտի ցուրուին իրարու,
Միութեան մէջ այդ պիտ' լուծուին ցաւերն ամեն ու տըրտունց:

Քիչ ալ համբերէ, պիտի մեղմանայ
Կըրակն այս, մարի ու մոխիք դառնայ,
Բայց ադամորդին, ծերութեան ցուրտին,
Հըրազուրկ սրբով, ինչպէ՞ս դիմանայ:

Գոյութիւն չունին սուսն ու իրաւ,
Կան միայն գեղեցիկն ու տրգեղ,
Կան միայն նամբորդները ծարաւ,
Ու միայն երազները շըֆեղ:

Երգըդ ըլլայ քող յըստակ ու խոր ու իրաւ,
Որ դարեր վերջ՝ ուղևոր մը երգի ծարաւ,
Թէ պատահմաք հանդիպի օր մը քու երգին,
Ըսէ «Անմեռ պահեր է երգն՝ երգչին հոգին»:

Ի՞նչ աղուոր է այս նամբան՝ առաջնորդող լեռն ի վեր,
Քայլերդ անոր ուղգէ դուն ու բարձրացիք անվեհեր.
Տըզաս, որքան բարձրանաս՝ պիտի լայննայ հորիզոնն,
Ու կատարին թէ հասնիս՝ աստղեր կըրնաս դուն քաղել:

Քընութիւն, կը սիրեմ քեզ,
Ես հովիդ հառաջք,
Ես ծիլդ եմ, մամուռդ ու սէզ,
Քեզ դիսոզ՝ ես աչք:

Մայր երկիր, գըրկիդ մէջ պիտի նընջեմ,
Ծոցէդ, քունիս մէջ, Աստծոյ եետ վիճիմ,
Ծառերուդ մէջ պիտ' երսկումի կենամ,
Զըրերուդ մէջէն նարեկ մըրմընջեմ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՍՏՈՒԱՇԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԺԱԲԱՆՈՒԹԻՒՆ

— — — — —

142. ԱՍՏՈՒԱՇԱԾՆԻ ՎԻՃԱԿ. Հոս ի դէպէ է յիշատակել Ս. Կոյսի սկզբնական մեղքէ աղաս րլլալ, որ իբրև հաւատող դաւանութիւն Հոսոմի Եկեղեցին քարոզեց 1854ին Պիոս Թ. Պապէն արուած կողմակին հիման վրայ: Ս. Դիրքէն առնուած փաստերը, որոնց վրայ կը կարծէ հիմունի Հոսոմի Եկեղեցին՝ առնք են: «Ողջոյն քեզ, չորոշօց լիք» (Դուկ. Ա 28), զոր մէրը ունի՝ «Ուրախ լիք, Եկեղեցելու»: գարձեալ՝ «Օրճնակ ես գու ի կանայ և օրճնակ է պառուղ որովայնի բռը» (Դուկ. Ա 42): Մինչ դիւրին է ըմբռնէլ թէ այս հոսքերուն մէջ ոչ մէկ տեղ կը զանուի Մարիամի անձին համար հեռաւոր ակնարկ մ'անդամ բացառութեան՝ հանուլք մարդկային հասարակ օրէնքներէն:

143. ԱՆԱՐԱՏ ՑՂՈՒԹԵԱՆ ԿԱՐԾԽԻՔԸ. Մէր Եկեղեցական գրականութեան մէջ ոչ մէկ տեղ հոսք եղած է յուութեան մասին Տաթևացին առաջ, որ կը իսոսի այդ դարու Լատինաց դպրոցներուն մէջ յուղուած ինդրոց մասին և կ'ըսէ մեղաց վրայ գրած առեն. «Կոյսն Մարիամ աղաս էց ի մահացումէն և ի ներելոյն, բայց ոչ ի սկզբնականէն»: Ասաւածածնի յուութեան տօնն անզամ, զոր կը կատարենք Դիեկտ. 9ին, շատ ուշ մտած է մէր Տօնացոյցին մէջ, և չկայ հին գրչագիրներուն մէջ: Առաջին անզամ զայն յիշատակող Տօնացոյցիրէն մին եղած է 1642ին նոր Զուղա տպագրուածը, որ յաւելուածին մէջ կը գրէ թէ ի Քաղոցի ա. և այլն «Աւետիք է Յօվակիմաց և Աննայի, յորմէ յղացան զՍուրբ Կոյսն Մարիամ»: «Անսարաւ» բառական յաւելումը յուութեան տօնին վրայ նոր ատեններուն մուտքործեց Հոսոմէականներուն օրացոյցներուն մէջ: Վարդապետութեան նորութիւնը բաւական է արդէն ցոյց տալու համար թէ հին աւանդութենէ կ նախնական յայտնութենէ չի

դար գաղափարը, հետեաբար հարկ չկայ երկարելու այս մասին:

144. ԱՆԻՈՒՄԻՒՆ ԱՐԴԻՒՆՔԸ. Աղամէի մեղանշումով մարդկային բնութեան անկումը առիթ տուաւ նորազանդ Լուսերականներու և կոլյինականներու՝ շափաղանցել ձիրքերուն կորուստը, և ոչ միայն գերբնականներէն զրկուած ըսել մարդկային բնութիւնը՝ առաջին մեղքին պատճառաւ, այլի բնականներէն անդամ: Անոնք ոչ միայն միտքը տկարցած համարեցին բարիին ծանօթութեան հանդէպ և կամքը՝ բարիին հետեղողութեան հոմար, այլն բոլորովին կորսնցուցած կամքի աղատութիւնը: Ուստի այս ամէնը մարդուն մէջ կը իրական աղատութեան գործ մը, այլ իբրև արդիւնք անհնարար յիտակցութեան, որ կը կազմուէր երեք տեսակ աղդեցութիւններու (Հակասութեան կամ անսարքերութեան, Հակառակութեան կամ ներհակութեան, տարրերութեան կամ տեսակաւորութեան) իսաւանումով: Կ'ըսին նաև թէ մարդը մեղաց գերութեան մոտինուած է, որովհետեւ իրմէ վերցուած է աղատութիւնը, և մեղքը կը բնադատէ՝ զայն բնութեան միջոցով չարութեան գործերու մէղելով, այնպէս որ անոր գործերը ի թէ չար են, ցանկութիւնները՝ կատարելապէս մեղապարա, և բարեգործութիւններն ալ առանց հոգուո՞ւ այսինքն բնական վիճակի՝ մէջ կատարուած, որ տարբեր չէ մոլութենէն: Հետեղութիւնը գոր կը քաղեն այդ զրութենէն, զանոնք կը մզէ բարձրացնելու հաւատցին արդիւնքը, որովհետեւ ինչպէս որ անկահար հին մարդը անկարող կը համարեն որիէ բարի գործի, նոյնպէս կը պնդեն թէ փրկուած և Քրիստոսի հաւաքին եկած մարդոց հաւատցին զօրութեամբը բարի կը գործուի և հստ սրում մարդուն մէջ կ'անհետա-

նայ բնական սպասութեան զօրութիմը և բարութեան և բարեգործութեան հետ համեմատական եղող անձնական զործերու զօրութիմը : Դեռ Քրիստոսի հաւատքին չեկած՝ մեղքը կը տիրէ և ամէն ինչ չար է . Քրիստոսի հաւատքին յետոյ հաւատքը կը տիրէ և ամէն բան բարի է , իսկ մարդը իր ազատութեամբ ու զործունէկութեամբ չանցնիր անդրքան զործիական գործակցութեան վիճակները , որով իր գործերը այլևս իրենը չեն լինիր , և անոնք իրրեն մարդուն իրրեն սեփական զործեր նկատուած՝ որևէ արժէք չեն ներկայացներ արդարութեան ու փրկութեան մասին : Ահա այս կերպով կ'ուպեն ապացուցանել թէ մարդ զործն չէ որ կ'արդարանայ , այլ՝ հաւատքին , և թէ մարդը գործերու էտ որ կը կարօտի , այլ՝ հաւատքի , արդարութեան և փրկութեան համար :

145. ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՏԵՇՈՂՈՒԹԻՒՆԸ . Մարդուն բնակուն և կատարեալ ազատութեան խողիրը աւելի իմաստասիրական է և կ'ապացուցուի ներքին գիտակցութեան , ընկերային պայմաններու և ընդհանուր գուացանց գաստերով : Եւ օրովհետեւ շատ կը սիրեն Յ . Գիրքին հանել գուցմունքներ , բաւական լրաց բանել թէ միշտ և ամէն պարտգայի մէջ աստուածային պատգամները և հրամանները կը պատուիրեն մարդուն՝ բարիք գործել , օրէնքը պահէլ , սրբութիւնը սիրել , արդարութիւնը կատարել , սիրոյ հետեիլ , առա-

քինութիւն գործելու հետամուտ ըլլալ , շարիֆների եա դառնալ , մէկ խօսքով՝ անձամբ զործել և ինքնութիւն մնչել ինքնինք , մրգիս . զի արդարանայ և հաճոյ ըլլայ Աստուծոյ . պատուէրներ՝ որոնք անշուշտ պիտի շտրուէին եթէ մարդը կարողութիւն չունենար իր կամեցածը ընելու և բարիէն հեռանալով շտրին կողմը միաելու :

146. Ա . ԳԻՒՔԻ ԽՕՍՔՆԲՐԸ . Գրտենք մէնք ալ թէ Ս . Գրոց մէջ չատ խօսքեր կան , ուր ամէն բան Աստուծոյ կը վերագրուի և ոչինչ կը համարուին մարդուն կամքն ու կարը : Այսպիսի վկայութիւններ կը բարգեն հակառակորդները , ոյց տալու համար թէ մարդը ադապութիւն չունի բարիք գործելու : Սակայն պիտի կոսքերը չատ հեռու են պարզելիք այնպիսի իմաստ մը զոր իրենք կ'ուպեն տալ , որովհետեւ անոնք երբեք չեն հաւատեր թէ մարդը մեղքով կորպուցած է սպասութիւնը , այլ միշտ ուկին նպատակ կամ բարձրացնելու Աստուծոյ ամենակալ կարողութիւնը , կամ յանդիմանելու իրենց յոյսը իրենց անձերուն վրայ դրած յանցաւրներուն սիստանքը , և կամ ցոյց տալու թէ մարդս մեղքով կորսընցուցած է իր առաջին արդարութիւնը : Վասնցի եթէ այլպէս չընելը , երբեք կարելի չէր բայր մարդերը յանդիմանել իրենց ըրած չարիքներուն համար , ոչ ալ զջլումի հրաւիրել զանոնք և խրատել որ բարի գործերու հետամուտ ըլլան :

ՑԱՂԱԳՍ ԽՈՐՃՐԴՈՅ ՄԱՐԴԵՐՈՒԹԵԱՆ

147. ՄԵՄԻԱՎԱՆՈՒԹԻՒՆ . Մարդեղութեան վլուխին առաջին մասը պէտք է ցոյց տար Քրիստոսի մեսիսականութիւնը , որը սահամ դանց կ'ընենք , ինչպէս աստուածաբանական նիւթերէն ուրիշ ժամեր ես : Ու մարդեղութեան ընդարձակ հառէն կ'ուպենք յառաջ բերել մի միայն Քրիստոսի մարդկութեան և անտուածութեան հաստատուն ժամեր , ինչպէս նաև Քրիստոսի մէջ աստուածութեան և մարդկութեան միաւորութեան բանարարենք :

148. ՄԱՐԴԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՃՐԴՈՅ ԻՄԿԱՍԸ . Մարդեղութեան խորճուրդը բացարած է Պօղոս ,

շոենով . Եւ յայտնի իսկ մեծ է խորհուրդն աստուածապաշտութեան , որ երեսցաւ մարմնայի , արդարացաւ հովովզ , յայտնեցաւ Հըրբայակաց , քարոնիկցաւ ի հեթանոս , հաւատարիմ նզն յաշխափհի և վերացաւ փառքք (Ա . ՑՄթ . կ . 16) :

Եինթական հանգանակը , որ Արքսուի դէմ նկոյեան կոսկենցաւ այս խորհուրդին , կունաւիշ զաւանի զաւանի թէ կը հաւատանք եւել ի մի Յար Քիսաւ Քրիստոս , Արդին Աստուծոյ , ծնեալ յինդունոյ Զօրէ , Միածին , այսինքն յիհթենէ Հօր ... որ յաղակ մեր մարդկան և վան ժերոյ Քրիստութեան թշեալ ի յերկնից Մարմիակաւ , Մարդացաւ . . . որով էառ զիար

մին, գհողի և զմիթ, և զամենայն որ ինչ է ի մարդ ճշխրսապէս և ոչ կարծեօք։ Որուն վրայ կաւելցնէ մեր բացատրական համբառնակն աչ և են եղաւ Աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ Հոգեով և մտօք և մործնոց, մի անձն, մի դէմ, և միտոքար մի բը-նութիւն։

Աննաք որ Խորհրդային ճշմարտութիւնը մերեցին, և մի հերետիկուները, ամենէն առաջ Քրիստոսի ճշմարիս մարդկութիւնը ու բացան և բար թէ Աստուածոյ Որդին մարդոց ան եղած և առ աչօք մարդեղութեամբ մի ամի, ոչ թէ մարդացած այլ իրեք մարդ երեցած։ Այս ուրացողներէն են նազրացիներ և Գնուատիկաններէն Գէտերուն ճրւզը և Երևանիանները։ Ասոնց կարդին կը համարուի նաև Մարկիոն։

Ասոնցմէ ետքը երեսն եկան Քրիստոսի պատուածութիւնը ուրացողները, սկսած Սադէ յանաններէն մինչև Ազիտանուսեաններու յետին մեացորդները, որոնք, իրացմէ աստիճանաբար գտարորշուած, Քրիստոսի մասին ենթագրեցին ինչ որ իրենց երեակայութիւնը կը թիւացրէ իրենց, սկսած հասարակ մարդկութիւնէ մինչև գրեթէ աստուածութիւնը՝ իրեք գերազանց արարտն մը, և Աստուածոյ Գրամմանով ասեղուդ միւս արարածներուն։

Ու երբ Նիկոփոյ և Կ. Պոլոսյ վճրուներով ջախջախուեցան այդ երկու մորութիւնները, առ առանձ մէջտեղ եկան մարդեղութեան և զանակին մոլոր և սուուցիչները, որոնց մասին սիստի խօսինք՝ ցոյց առաջ մերջ թէ Քրիստոս Աստուած է կատարեալ և մարդ է կատարեալ։ Սակայն ոչ ոք թող կարծէ թէ այսպէսով կ'ուղենք երկու ասրբեր և ասրորդ Քրիստոսաններ ցոյց տայ մէկ Քրիստոսի մէջ, անոնց նմանն որոնք վրիստոս մարդ և զիրիստոս Աստուած երկուքի կը առանձն։ այլ կը խօսինք պատկառ մնալով միայն տրամարտնակն կարգի պարզութեամբ, և ուզելով պատշոցափառները պարեւ իրեք վիրուծեալ առարքը բարերեց Քրիստոսի մի միակ Աստուածամարդ անձնատրութեամբ։

149. ՅՈՎԱՆՆՈՒ ԱԼԵՏԱՐԱՆԻՆ ՍԿԶԲ-ՆԱՅՐՈՒԹԻՒՆՆԵՐ, Քրիստոսի պատուածութեան առաջին և գլխաւոր գտարե կու զայ մեղի Յովհաննէսին, իր Աւետարանին սկրիուր, թէ՛ առանձին և թէ անոր բովանդակ ըն-

թացքին մէջ։ մի սկզբանէ էր Բանն, և Բանն կը տա Աստուած, և Աստուած էր Բանն։

Մէկ շարքի վրայ այս երեք նախադասութիւնները իրաք կը բացայացնեն և իրարու հետ կը շագկապուին, Ասոնց մէջ խօսք կ'ըլլայ Բանին մասին, խօսք՝ որ կը շարունակուի մինչև 18րդ համարը։ Խօսքին կարգը Թոյլ շի տար փոխէ ենթականները, զի երէ ենթական փոխէր՝ կը խանդարուէր խօսքին կարգը։ Բանին մասին իրեք ենթակայի մասին, կը հաստատէ Սոյնաննէս թէ սկիզբն էր, թէ առ Աստուած էր, և թէ Աստուած էր։ Բանին մասին հաստատութեամբ մինչ յարկանականութիւնը, զի ի սկզբանէ էր թէ կ'ընէ, և ոչ թէ եղաւ։ «Երժ որոշեան չկար ժամանակի մը երբ չըլլար»։

Մինչ աստրոդէլին է աստատածային երուածը, զի ինչպէս ի բախտնից էր, և այսպէս ենթակայաբու առ Աստուած էր, այսինքն ենթակայաբու գտարուցուած և գութենարար ժայցուած։ և այդ երածը մտորք կը կոչէ Մընունդ, երբ Բանը կ'անուանէ Սիածին։ Այդ երկու յայնին ստորոգութիւններէն ետքը, Բանին իրեք ստորոգութիւն պատուած աստուածութիւնը նկարագրական իմաստով միայն կնայ իմացողալի։ Յւ Բանը ելաւ էր, ուսկը և արարիչ է ու զայդ կը բացատրէ յաջար բորք համարներուն մէջ։ Ան կ'անցնի խօսիլ Յովհաննու վարդապետութեան ժամանին, որովորի նամքայ բանայ բացատրելու համար Բանին մարդեղութիւնը, զիր առաջ լոյսի փոխարերութեամբ կը մէկնարանէ, որովհետև առաջին մասին վերջին խօսքին ալ նոյն փոխարերութեամբ առարտեցն։ Բայց առանց փոխելու խօսքին ենթական, կը շարունակէ։ «Եթիւրն եկնա և այլն, որ է մարդեղութիւնը՝ զոր ի վիրջոյ կը փակէ եղրակացնելով։ «Եւ Բանն մարմին եղաւ և բանկաց զիստուն ներա իրեն զիմաննի առ ի Հօրէ»։ Եւ խօսին կը յարէ թէ մարմացանցար այս Բանն է որուն մասին վկայեց Յովհաննէս և կը կնքէ խօսքը՝ մարմացանց Բանին առնունք տալով, զի կ'ըսէ և Շնորհը և ճամարտութիւն ի մէռն Յիսուսի Քրիստոսի ետէն։ Զիստուած ոչ ոք եսկան ցոյց Միածինն Որդի որ է ի ծոց Հօր։ նա պատմեաց մէրդ։

Այսպէս հաստատելով մարդեղութեան բնդիբը, և թէ իրն Յիսուս Քրիստոս է մարդացանց Աստուած Բանը, կը շարունակէ

պատմել Յովհաննու վկայութիւնը և Քրիստոսի առաջակացած գործերը, մինչև որ կը կիրք խօսքը՝ որոյն խօսքին զառնալով. «Այլ որչումի ինչ դրեցա զի Հաւատասալիք եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ» (Յովկ. Ա. 1-19, ի 31):

150. ՎԿԱՅՈՒԹԻՒԹԻՒՆՆԵՐԻ ԻՐ ԱՆՁԻՆ ՄԱՍԻՆ. Երկրորդ փաստը կը քաղենք այս վկայութիւններէն, որոնց մէջ ինք Քրիստոս է որ կ'ուսուցանէ իր աստուծութիւնը, ու այս վարդապետութեան վրայ կ'ուզէ հիմնել իրմէ Հաստատած կրօնը:

ա) «Ելիանէս սիրեց Աստուծած զաշխարհ, մինչև զՊրդին իւր Միածին ետ, զի ամենայն որ Հաւատայ ի նա մի՛ կորդիչէ, այլ շնկալցի զիեանս յութենականս ... որ Հաւատայ ի նա, մի՛ գտատապարտեցի, և որ ոչ Հաւատայ ի նու. արդէն իսկ գտատապարտալ է, զի ոչ Հաւատաց յանուն Միածնի Որդուոյն Աստուծոյց» (Յովկ. Գ. 16 և 18): Որդիութեան որոշիչ յատկութեամբ, միանութիւնը ճշշմարտէս աստուծային որդիութիւնն է, իրրորդութեան մէջ տառցուած:

բ) Նշնակէն ճշմարիտ որդիութիւնը աստամացին է, որ մեղքէն ազատելու աստուծային իշխանութիւնը կը վարէ. «Ինի արդ եթէ Որդին գենէ ազատեցուացէ, ճշմարիտ ազատ լինիթիք» (Յովկ. Ա. 26):

գ) Քրիստոս ասձարի կը կոչէ առն իր հօր և իր տունը, որ է առն Աստուծոյ. «Մի՛ առնէք գտուն Զօր իմոյ տուն վաճառի» (Յովկ. Բ. 16), «Գրեալ է առն իմ տուն ազօթից կունցի, և գուռ արարէ զդու այրու ապակաց» (Մատթ. Իլ 13):

դ) Քրիստոս իր անձնն կը սեփականէ Աստուծոյ պէս աստուծային օրէնք առլու իշխանութիւնը. «Այլ եռ ասեմ ձեզ» (Մատթ. Ե 22 և 27), «Երիխոն և երկիր անցցեն և բանք իմ մի՛ անցցեն» (Մատթ. Իթ 35), «Այլ ամենայն որ ասէ ցիս Տէր, Տէր, մտցէ յարքայութիւն երկնից» (Մատթ. ի 2), «Ամէն ասեմ ձեզ, եթէ ոք զրան իմ պահեսցէ, զմահ մի՛ անցցէ» (Յովկ. Ը 51):

ե) Քրիստոս իր վրայ կը մասնաւորէ Աստուծոյ որդիութեան Հանգամանքը. «Ազա արդի մի՛ էր սիրելի, զնա առաջեաց առ նուա յետոյ, և ասէ, թերես ամաչեսցն յօրդու աստի իմմէ» (Մարկ. ԺԲ 6), ուր

յշակները մարդարէ կ'անուանուին, ինքը Որդի, իսկ իր Հայրը տէրը այդիին՝ Աստուծած:

զ) Քրիստոս իրեն Համար կ'ըսէ թէ Արքանմէն ալ առաջ է. «Ամէն ամէն ասեմ ձեզ, յառաջ քան զինելն Արքահամեռ եմ ես» (Յովկ. ԺԲ 58), ու այս խօսքին մէկնութիւնը կը տեսնուի յաջորդ ուա խօսքին մէջ. «Եւ ու ոք ել յերկին, եթէ ոչ որ էն յերկնից Որդին մարդոյ, որ էն յերկին» (Յովկ. Գ. 13):

է) Ինքինքին կը սեփականէ Հօրը Հետամագոյնթիւնը. «Զի գփտասնչիք ե ծանիցէ եթէ Հայր յիս է և ես ի Հայր» (Յովկ. Ժ. 38), «Են և Հայր իմ մի եմք» (Յովկ. Ժ 30), «Եւ ոչ ոք ճանաչէ զՊրդի, եթէ ոչ Հայր, և ոչ դՀայր ոչ ճանաչէ՝ եթէ ոչ Որդի» (Մատթ. Ժ. 27):

ը) Քրիստոս Յովկաննու մասին խօսելով՝ անոր Համար կ'ըսէ թէ հրեշտակ է, որ պէտք է Աստուծոյ առջևէն երթայ, Մաղաքիայի Համեմատ: «Զի նա չ վանուորոյ գրեան չ. Անօթ ևս առաքեմ զհրեչտակ իմ առաջի երեսաց ժող, որ պատրաստեցէ զնանապարհ» զու (Մատթ. Ժ. 21):

ը) Քրիստոս գոյից Հաւատացը անոնց՝ որոնք կը դաւանէին թէ ինքնիշխանութեամբ կրնայ ընել ամէն բան. կը սրբէր տյի դորոստ որ կ'ըսէր. «Ճէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբէր» (Մատթ. Ը 2). կը լսէր այն Հարիրապետը որ կ'ըսէր թէ Քրիստոս կարող է Հրամայիլ Հիւանդութիւններուն անհակս ինչպէս ինքը իր պինուորներուն (Մատթ. Ը 9):

ժ) Քրիստոս պատասխանելով՝ անոնց որ կ'ըսէն թէ «Ո՞վ կարէ Ռողով զմեզ», եթէ ոչ միայն Աստուծօ», կը պնդէ թէ «Փիշանութիւնն աւնել Որդի մարդոյ ի վերայ երկրի, Ռողով զմեզ» և ի Հաստատութիւն իր բանքին, կը թշչէ անդամալոյնէք. «Այլ զի գփտասնչիք ... քեզ ասեմ, արի, առ զմահինս քո և ... և յարեա, եւ առաջի ամենեցուն» ու ամէնքը զարմացան, թէ այսպիս բան մը դեռ երբէք տեսած չէին (Մարկ. Բ. 7-12):

Այսպիսի շատ խօսքեր և գործեր կան զես, ըստած կամ կատարուած Քրիստոսէ, որոնց ընդարձակ քաղուածոն կը թողունք ընդարձակ գրիչներու:

151. ԴԱՐՁԵԱԱ ՎԿԱՅՈՒԹԻՒԽՆՆԵՐԻ ԻՐ

ԱՐՁՈՒՆ ՄԱՍԻՆ. Երբորդ փաստը կր քաղենք այս վկայութիւններէն, որոնց մէջ Քրիստոս ինը կր ծանուցանէ ինքնինք իրի Աստուած՝ իր աշակերտաներուն և հետեւզններուն, որպէսողի բառ այնմ դաւանին:

ա) Ի ծնէ կոյցը թժ չկելէն վերջ կը հարցնէ անոր. «Դու հաւատա՞ս» յլրդին Աստուածոյց, ու երբ ան կր հարցնէ թէ ո՞ի է անիկա, Յիսուս կր պատասխանէ. «Եւ տեսէր զնա և որ խօսիգ բնդ քեզ՝ նա է. և նա ասէ, հաւատած, Տէր, և երկիր եղագ նման» (Յովէ. թ 35:38):

բ) Եխուս Մարթայի կ'ըսէ. «Ես իսկ եմ յարութիւն և կեանք. որ հաւատայ յիս, թէ պէտք մեռանի՝ կեցցէ». ու Մարթա կ'ըսէ. «Ելլոյ Տէր, ես հաւատամ Եթէ դու ես Քրիստոս Ռոդի Աստուածոյ, որ յաշխարհ գալոց էիր» (Յովէ. թի. 25:27):

զ) Գետրոսի կ գիմաց առաքեալներուն կը դաւանի. «Դու ես Քրիստոս Ռոդի Աստուածոյ կենդանույթ» (Յովէ. թ 70 և Մատթ. թի 16), ու Քրիստոս կը հաւատաէ այդ խօսքը և կ'երանէ դաւանողները:

դ) Նէրջին կտակին մէջ Քրիստոսի մասին տոտուած խօսքերը, վերաբերմամբ անոր՝ Զօր Հետ միութեան, միսիթարիչին առաքման, պատուիրանապահներուն հետ լինելուն՝ Քրիստոսի աստուածութիւնը կ'արտայայտնն; Երկար պիտի ըլլար հոս դանոնք յառաջ թբել մի բառ միոջէ, և արդէն անոնցմէ մաս մը ցոյց տուած ենք՝ Երրորդութեան և Ս. Հոգիի աստուածութեան մասին խօսած ատեն:

Եւ արդ սպեսուիւ մարտիրոսական, քահանարական և մարգարէական աեւլեամբ, և հայրապետական փառաւորութեամբ, և արիւնամերկ ծիրանեաւք, և զարդարէամբ կարմրագոյն պատճու հանդառ զարդարէալ ես, և քահաւու պայծառութեամբ մնամեալ զամ, և ջահասդիւտեալ հընչառակալերպ քահանայստական սպեսուիւ պայծառաւացիր, և առաքելական զերտրկուաւ, զի իւսն գակաթ եզաք ի քեզ: Աւրախացիր և զու ընդ ուրախացիր և ասէին մերի, որպէս և մեր

ընդ քո ուրախութիւնդ, և արդ ուրախ լեր և բերկրեա, զի վարձք քո բազում
են յերկինս :

ինկ մեք զինչ կարասցուք զնա գովութեամբ մեծարել, որ աւրինակը
երանելոյս այսպիսի վերաբերի : Ի յունաց զպատուեալն, ի հոռմայեցւոց զմե-
ծարեալն, ի Հայուստանեաց Մեծաց զերկըրպագեալն :

Առենք և մեք զնա այր ցանկալի, զի ցանկալի եղիւ ամենեցունց ի ձեռն
բազում և գուտարակիր տանջունաց իւրոց : Եւ ոստք բարի արմատոյս այս, մով-
սէսական չնորհաւքն պայծառացան, ոչ եթի աստուածատեսութեամբն քողասո-
գողեալ, այլ աստուածապիծ գրովն վայելեալ, ոչ եթէ զամանէր ժողովուրդն
զոտիր ձուլեալ գուտիր խոսակերին, այլ զտախտակս սրտից բացեալ առ ի լին-
դունել զաստուածապարգև գիրսն, որով բարբառն իւրեանց բոլորիւր, և այնիւ
զրանս լուսաշար, զոր քերթեալ ի յունական բարբառոյն թարգմանէին, և ընդ
զրունս լսելեաց արկանէին այնոցիկ, որք աչաւք պայծառանային ի լուսաշար
աստեղակիրս մատենից անտի :

Ասացից զսա կրկին Կեփաս՝ քակելով զհիմունա մեհենից և զտաճարս
զրաւչից, և հարտատեալ զիսարիսիս եկեղեցեաց աստուածային տեալեանն հը-
րամանաւ :

Ասացից և կրկին Պաւլոս, զի շրջելով ընդ աշխարհս Հայուստանեաց,
ներեաց չարչարանաց, և դանաղան տանձանաց, մինչև զբաւանդակ աշխարհ մի
ի մոլեգնութենէ կռապաշտութեան՝ զտրձոյց ի լուսաւորութիւն աստուած-
պաշտութեան :

Եւ արդ որպէս զանազան առաքինութեամբ զարդարեալ է, այնպէս և
զանազան պսակաւք պայծառացեալ : Խտաբելոցն կռապաշտութեան, սիւն լու-
սեղին առաջնորդն, սասուցելոցն հիւսիւսային հողմաւն՝ Հարաւային ջերմամ-
բըն ջեռուցանողն, իջեցն ի խորո խաւարային կապարակիր բնեամքը, զգե-
ցուցանող թեա քերաթուիչ լինելով յերկինս անթիւ բիւրոցն առաջնորդու-
թեամբ : Ընդ անթիւ բանակս հրեշտակաց զասաւորեալ յափշտակութեամբ ի
ձեռաց անեցուցանողին զգախակողմանն, փոխափիետուր գործելով զիսեաւակի-
գրն ջոկն, ի ջանակիցն աւելեաց կերպարանն, որով աջակողմանքն բազմանա-
յին յամաւաթ արարողին անդընդպային բնակողին :

Եւ պայծառացեալ երեսաւքն առաջի երկնարնակ արքային, անսասա-
նէլի վէմի յուռնահարութեան նախանձողին մնալ անբեկանելի : Անդամանէեա
խարիսխն փշրող ստոմացեալ ուռանցն ուժգնահարա(ն)ցն . մարմնաւոր վանո-
ղըն անձմարմնոց, որով բազումք վանէին վահանն ամբագոյն . մանրող աղեղան-
ցըն Հպաւրաց, զրահն աստուածահիւա . փշրող նետիցն միսեալ չարին, և ամե-
նայն սպառապինաւէն Ա. Սպառապինաւալ, և բայթող ամենայն մեքենայիցն իշ-
խանութեանցն և պետութեանցն, և աշխարհակալութեան խաւարին այսոյն
պղծոյն : Եւ արդ եթէ Հրացեալ եմ յոյժ փափազանաւք, և երանէի զանձն իմ
լինելով ականատես առնն այնպիսայ երիցս երանելոյ և լուսաւորչի :

Որպիսի երանութեամբ երանեցից զանոսիկ, որք հաւատովք տեսին
զայնոսիկ, որ աստուածային կերպարանաւն, աստուածաստեղծ պատկերաւն
փառաւորիւր, որով լուսաւորեցան մոլորելքն ի խաւարի, որոյ և թագապար-
զըն հաւանեցաւ, և երկըրպագելին յանթիւ բիւրաւորաց, թագին այն լինէր
երկըրպագառ անարգելոյն յիւրմէ, հանգեր երկըրպագելովն իւրովք, մե-
ծամեծաւք իշխանաւք, կուտակարաւք, պետաւք և ամենայն զինուրաւք իւ-
րովք . որ վասն միոյ բանի, որ ելանէին ի բերանոյ նորա, բազումք կուտէին ի
վերայ նորա, խոշտանկելով հարկանէին, և բանից բերանոյ նորա անթիւ բա-

զումք հաւանէին, զանարդեալի ի նոցանէ մեծապէս պատուէին, զանդուսնեալն գովէին, զրամբասեան բարեբանէին, զատեցեալն սիրէին։ Որք ձեռաւք իւրեանց կապէին զձեռս և զոտս նորա, գլխովն իւրեանց և երեսաւք ըրջէին առ ուրբա նորա, որ բրաւք հարկանէին զլուուխ նորա, բերանովք համբուրէին դդարշապարս նորա։

Կապաւզք ձեռաց նորա՝ կապեալ ձեռաւք կանկնեալ լինէին առաջի նորա։ որք աչաւք արհամարհէին զուեկին նորա, իրք անարգող աստուածոց, այնիւ պատկառէին ի նմանէ իրք ի պատկերէ Աստուծոյ, լեզուք՝ որք անարդէին զնա իրթե անարգող կոսցն, այնիւ գովէին և բարեբանէին իրք գհրեշտակ Աստուծոյ։ Զայնպիսի զայր փառաւոր, զիստրդ կարացից գոյնել անարժան իմով լեզուաւ զդովէլին երկնայնոց զուարթնոցն, այլ հայր զըթառէր ի վերայ որդուոց իւրոց, զան թերախաւութեան տարահասակ լեզուաց մանացն իւրոց, ոչ լինի գեկամակ, և հեշտանալովն ոչ լինի անարդեալ ի նմանէ։

Գթա՛յ, Հայր որդեսէր, ի վերայ թերալեզու բարբառոյ իմոյ, որ առեալ համարձակութիւն ի գովութեան քրզիսէ զարբարատ իւր, որ զամենայն կենցազս քր կատարեցեր վաստակաւք, նաին մատնելով զնձն քր ի զանազան շարչարան զան փրկութեան անարգողաց քոց, և յիտ այնորիկ շրջելովն և ուսուցանելովն, և կալ հանապազ ի հրակումն որպէս կանթեղ անշիշանելի, իրք պատրուզաւ մարմնոյ վաստակաւք, իրք ձիթոյ կերպարանաւ ողորմութեամբ, և իրք լուսով պայծառութեան վարդապետութեամբ։

Եւ զիտեմ զի աշխատանաւք այնոքիկ, որով զարդի պատերազմ պատերազմեցար, զընթացան կատարեցեր, գհաւատսն պահեցեր, և փութացար ի վայրել զարդարութեան պըսակն, և վայրելեցեր զուեկին ուր տունն է անշրանկաց, և ձայնս մաքուր տաշնուզ, ուր և ցանկն ի խոնարհ նկատելով բանակը հրբեշտակաց անաւ տընկեցաւ արմատանալով։ Որ աստ քերչաւ սրով, հրով, ապակաւք, թարշամեցուցեալ լինէին, և անդ իրքն արմատենի ծաղկէր, իրքն մանուշակ ծիրանանայր վըկայութեան արեամբն, և իրքն վարդ պայծառանայր, և իրքն խնձոր հովովն սրով զարդազունէր յաստուածաստեղծ դրախտին, այսպիսի փառաւք փառաւորիւր երիցս երանելին Գրիգորիոս, ի ծեռն աշխատանաց և վաստակոց մարմնոյ իւրոց, և համբերութեան չարշարանաց, և ճգնութեան և աճեցուցանելով գհաւատս Հովուապետին։

Կարծեմ եթե ասէր ցհողին աստուածազարդ մարմինն, ով կենդանութիւն իմ, զի ինև կենդանացք ի փառաց նորա, որ կարէ զանմահ գոյացեալդ, սպանանել իրքն զմահկանացու օսեղծեալս։ Եթե որքան հաեցիստ աշխատանաւք իմովք աւանդեցի քեզ, կամ որպիսի սփեստի պայծառապէս զարդարեցի զեզ մերկութեամբ և գելարանաւք իմովք, կամ որպիսի պսակաւք պայծառաւթեամբ պայծառացուցի զլուուխ քրանահարութեան զլիոյ իմոյ, կամ յորպիսի փափկութիւն ծաղկապայծառ եղեմա զուարթնացուցանեմ զեզ, կոչկոճամբ իմով և զանազան տանինաւք, որպէս քի զանցաւը կենդանութիւնն զայելեցի, և զլոյս արեգական այս մտանելի, այնպէս և ես փութոցայ զի ինև զայելեցեն զանանցանելի կենդանութիւնն, և զլոյս անմատոյց արեգական արդարութեան։

Ով երանէլի փոխմանն այն, ով ցանկալի, ոչ եթե մահուան, այլ կենդանութեան, Ով փափակելի երթարոյս այս ի մէնջ, յերկրաւորացս յայս, առերկնաւորսն, ի մարդկանէ առ արարիչն մարդկան, ով բաժանմանդ այդ ցանկալի, որ միաւորութեամբն ընդ մեզ մինի հանապազ։ Ով բաժանմումն անեսեալի, որ միաւորութեամբն ընդ մեզ մինի հանապազ։ Ով մահութեամբն մարմնոյ, որ պատճառ է ուրախութեան և ոչ տրտմութեան։ Ով մահութեամբն մարմնոյ, որ արժանի է զուարթնանալոյ, և ոչ արտասումլոյ։ Եւ ես իսկ փոխա-

նակ արդամութեան՝ ցանկութեամբ վառեալ պապակիմ, զի արժանի լինէի տեսութեան, ուզ զիբագումն մարմնոյ չղճառութեան, չիբացո՞յ հոգուց վայէլ մամբ, և արժանացոյ դանարժան, դոկարութիւն մարմնոյ է բաց մերկանալ:

Ոյ մարմին, իբրև անմարմին ժուժկալող, թերեւ կարայց հռուտես լինել հոգու քեզ, որ մարմնոյ կարի յեայ նեկայս տնտի, ուստի ըստ մարմնոյ արեղակն լուսաւորիչ ծաղկցար, ուստի նեկի որպէս դու, այլ ո՛չ իբրև զքեզ, այլ և զամ այնիւ որով [գ?] նացեր, իբրև զքեզ, այլ ոչ երեխ որպէս դու:

Են արդ ոչ կարայց աղաշան մատուցանել առ քեզ, զի քոյով բարեխաւութեամբ վայինցից մի յաւթեվանաց, որ են ի տան հաւը նորա, զոր դու զշարչարեան և զենուան՝ ճշմարիտ կատուած քարոզեցիր ի մէջ պաշտաւզաց անմահից տատուածոց. արժանաւորեցաց լինել ժառանդող, որ և մեծագունին և պայծառապունին հասեր վայերման: Սակայն տանուցաց քոյ իւր բարեխաւ առ ջէրն տերանց, և թագաւորն թագաւորաց, թագաւորաց զիսաղողաթեան ժամանակ պարգենեա ի նահասակուղին, յորոյ տնուն նահասակեցար, և ամենայն զաւրապետաց և զինուորութեանց պաղատի նոցա յաղթութիւն ի վերայ թշնամեաց, յորոյ անուն զինուորուցար և յաղթեցիր զիմամարտին; Եկեղեցից և քահանայից, և ամենայն մանկանց նեկեղեցականաց զահնչերձնածակն հասասատութիւն չնորեն, և զինորին խաղաղութիւն, ի քոհանային հրկնաւորէն, յորոյ քահանայացար բարւոք և սրբութեամբ և դամենայն հասա բանաւորս պահէն առանց փայլուիլ:

Հայցեան՝ ի հովուապետէն բարի, որոյ ընտրեցար և կացեր հովիւ քաջ, և ալպածեցեր զվարատահացեան ի քեզ, զոշնարս, զիսաշնու և զդաւոինս, յազակս որոյ առաւելապէս սիրեցեր զնա, և առաւելապէս սիրեցար ի նմանէ, զի ամենենքան քահանայիք և քահանոյապէտք, հարք և հայրապետք, կղերիկոսք և ամենայն դասք սարկաւազաց և ժառանդր տոպքելակն և կաթուղիէ եկեղեցեաց, զթակաւորս և զիշխանս, զմէծամեծս և զկուսակալս, զիմաստուն և ըլուամիկս, զծերս և զտպայս, զայրս և զկանայս, և զամենայն հասակօ պահէի ի խաղաղութեան, և տալ նոցա հոգի զիտութեան, և ժոմանակ զդիման, և ջերսութիւն ապաշխարութեան, զի մերկացին յաղտեղութենէ յանցանաց, և ըրդենուցուն զպայծառացեալ սկսաս ապաշխարութեան, որով ոչ անարդեցին յուրախալի հարսանեացն, այլ ընդ հրաւերեալսն և ընդ կոշեցեալսն վայելիսցն զանտրառում ուրախութիւնն, որոյ իլից մէղ մամենցուն վայէլէն չնորհաւը և մարդասիրութեամբ Տեսան մերոյ և փրկին թի. թի. որ շարչարանաւք իւրով պատարասկեցաւ ի վերայ խաչին, և ընդունեցաւ զքեզ առանց զինուորութեան, որով ոչ անարդեցին յուրախալի հարսանեացն, այլ ընդ հրաւերեալսն և ընդ կոշեցեալսն վայելիսցն զանտրառում ուրախութիւնն, որոյ իլից մէղ մամենցուն վայէլէն չնորհաւը և մարդասիրութեամբ Տեսան մերոյ և փրկին թի. թի. որ շարչարանաւք իւրով պատարասկեցաւ ի վերայ խաչին, և ընդունեցաւ զքեզ առանց զինուորութեան, որով ոչ անարդեցին յուրախալի հարսանեացն, և քահանայացոյց զպահանայպետութիւն իւրոյ, նմա վայէլէ փառք և պատի և իշխանութիւն և երկրրապուրութիւն, հանդերձ Հարր ամենակսլի անբակիզն, և զուույն կենդանարարի և համապոյակցի, Սրբոյ երրորդութեանն և մի Աստուածութեանն, վայել է զոհութիւն և փառաւորութիւն, անդազար ըստ հրեշտակակն երեխորբեան աւրհնութեանցրն, այժմ և միշտ և յախտեանս յաւիտենից, ամէն:

Թարգմանեցաւ լուսապարդ և վայելչաշար ճառս այս ի յունականէն ի մերս, հրամանաւ երիցս երանեալ հայրապետին Տեսան Գրիկորիսի Հայոց Մեծաց կաթողիկոսի, ի ձեռն իմաստուն և Հանճարեղ թարգմանչին թէոփիստէի: Զոր և մինչ ցայժմ ճրագս այս թաքուցալ էր ընդ մահճաւք և ծածկէալ էր ընդ գրուանաւ: Խոկի ի հրաման Ալք. յայտնեցաւ սա ի Սը. Վանս յիշքակաղնիս:

Իսկ իմոյ անարժանիս յոդնամեղ և անպիտան կը բաւանաւորի Պաւլոսի

լղձալի փափառանաւք դրեալ եղի զսա ի հոյակապ մայրաքաղաքացեալ Սր. Անապատա Արքայիաղնիս, ի յիշատակ մեղաւոր հոգւոյ իմոյ և ծնաւղաց իմոց :

Իսկ համբաւ սորա իրբե զպոսկապարդ թագաւորի, հասեալ ի յիրկնանման Սր. և աստուածաբնակ Անապատն ի յԱկներն, առ լուսասգես սբ. և երջոնիկ Հայրն Ստեփանոս, և նորա առաքեալ որակս և հրամայիաց գրել և աւանդել զսա ի դրունս սբ. Տաճարին Աստուածամաւրն, ի պայծառութիւն տաւնի մեր Լուսաւորչին և յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց և իմոյ ամենամեղի : Եւ ես ըստ իմում կարի գրեցի և առաքեցի :

Եւ աղերսալի պազատանաւք աղաչեմ, ով սրովրէանման դասք լուսերամից, յիշեսիք աղաւթիւք զաստուածուպատուեալ Հայրն զՍտեփանոս, զառաջնորդ Սր. Ռւխտիս Ականց Անապատիս, և զծնաւղան իւր և զիմաստուն երաժիշտն զՄանուէլ, որ ուսով իւրով բերաւզ եղի ճառիս ի Վանս, և զաշխատաւզ գրիչս զՊաւղոս և զծնաւղան մեր և զամենայն ի Քս. Հաւատացեալս : Եւ Քս. առհասարակ յիշաւղացդ և յիշեցելոց ողորմեացի, և նմա փառք յաւիտեանս, ամէն :

Հրատ. Ա. Յ. ՍրձՈՒնի

(Ծար. 5)

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

ՑՈՒՑԱԿ ԶԵՌԱԳՐԱՑ

ՀԱՐԹՁԵՐՏԻ ԱՍՏՈՒԱԹԱԲԱՆԱԿԱՆ ԺԵՄԱՐԱՆԻ

Տարիներ առաջ Հարդֆըրտ այցելութեան մը առթիւ կազմեցի ցուցակ ար հօն պահուած հայերէն ձեռագրաց հաւաքածոյի մը։ Հաւախծոն կազմը-ւած է Հարդֆըրտի Աստուածարանական ձեմարանին համար հանդուցեալ Փրօփ. Մարտիրոս Յարութիւն Անանիկեանի, որ կը դասաւանդէր այդ ձեմա-րանին մէջ։ Ան հոս ներկայացուած ձեռագիրները ձեռք բերաւ Մերաւոր Արե-ւելիք իր ուսաւմնական ճամբորդութեանց ընթացքին, ձեմարանին նիւթական միջոցներով։

Թիւ 1

ՏՕՆԱՑՈՅՑ, ՏՈՒՄԱՐ ևն.

1658

Թերթ՝ 315։ Մաւալ՝ 9-5×13 սմ.։ Գրչութիւն՝ միասիւն, բոլորդիր, 19 տող, սկ մելան։ Նիւթ՝ մագաղաթ։ Կազմ՝ կաշեպատ տախտակ, աստառ-ուած մետաքս և բամպակ տպածոյ շահեկան կտորով։ Մագաղաթ պահպանակ ունեցեր է, այժմ պոկուած։ Հանդամանք լաւ, սկիզբէն թերթ մը պոկուած։

Պարունակութիւն։

Էջ 1ա. հասարակ խորան և լուսանցազարդ։ Կը սկսի «Աստուածայայտ-նութիւն ճրագալուցին»։

Էջ 42բ. կիսախորան հասարակ։ Կը սկսի «Պենտակոստէի գիշերն հրա-կումն է...»։

Էջ 68ա. կիսախորամի տեղ պարապ։ Ունի լուսանցազարդ և գարդա-գիր։ Կը սկսի «Եւալթներորդ կիրակին վարդապառ է...»։

Էջ 84բ-86բ. նոր գրչէ յաւելումներ լուսանցքներուն։ Նաև 90բ. լու-սանցքի տակ։

Էջ 105ա. հասարակ կիսախորան ևն։ Կը սկսի ճայնագրեալ «Թագաւոր-բաց ալէլուք»։

Էջ 145ա. հասարակ կիսախորան ևն։ Նոյնը էջ 212ա.։ Կը սկսի «Շա-րական զգեստու. Խորհուրդ խորին անհասըն»։

Էջ 238բ, 253բ պարապ։

Էջ 248ա. «Ճաղ Յարութեան»։

Էջ 250ա. «Ճաղ վասն մահուան Աստուածածնին»։ Ուրիշ տաղեր մին-չն էջ 256ա.։

Էջ 256բ. Սկիզբն առևմարին։

Էջ 264ա. պարապ։ Նոտր գրչէ. «Որ ես եկամինց պարոն Մինասըս գիր գրէ»։ Գրչափորձ։

Էջ 274ա. պարագ:

Էջ 309բ. պարագ, թերթին մասեր պատռած:

Էջ 310ա—313ա. տումարական շրջանակներ:

Էջ 313ր. Կը սկսի «Թժական ՌՀՀ (1637) բահալի առաջի զիրու, ձէն է»:

Թերթ 314ի ստարին մասը պատռած:

Էջ 315ա. զիխանոր յիշատակարան գրչեն: «Փառք...: Որ ես կարող ութիւն փանարքի և տեղարն անձին Եղիսարեթի. հասանիլ ի յաւարա տառիս. որ կոչի տաւանցոյց, Թագաւորաց ալէլուք. տումարք. և այլ բաղում երդք: Արդ՝ զրեցաւ սա ձեռամբ յոդնամեղ և թշուան անձին Եղիսարեթի. ի ներ և յանձուկ ժամանակին վասն բաղմանալոյ (Էջ 315ր) անաւորնութեան: ի հայրապետութեան Տեառն Ցակորայ ընդ հովանեաւ Բոստաթէի. Նպիսկոպոսութեան Տէր Մեռուսին և Տէր Պաւոսին: ի Թիշականին Հայոց. Ռաձի (1658): Արդ երեսս անկեալ աղաւեմ զդեղ ով մաքրամիտ բնթերցողք որք հանդիսիք մատ կարդարով կամ յաւրինակերով յիշեցէք և թողութիւն մեղաց ինդրեցէք զգարշ մեղաւք խոցուեալ Հոգուոյ և զուք լինիք յիշման արժանի ի քրիստոսէ աստուծոյն մերոյ աւրհնելոյն յաւիտեանս ամէն:

«Դարձեալ աղաւեմ զդեղ ով մանկունք սիսնի. լի բե...»: Մհացեալ ինիած թերթով կը պահի:

Եղիսարեթ գրիչ մեր եսպաւադէպ կին գրիչներին է: Եղիսարեթ ի Հայական լինոր գրած է 1654ին Երևանի թիւ 7113 Նարակինոց: Այս երկու էր կարելի է հոյնացնել:

Թիւ 2

ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

1732

Մաւալ՝ 7.5×12.5 սմ.: Էջ՝ 260: Գրչութիւն՝ միասիւն, մանր գեղեցիկ բոլորդիր, 30 տող: Նիւթ՝ թուղթ: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Հանգամանիք՝ լաւ: Ակգրեանթերթին վրայ կարմրաւ բոլորդրով և նոտրգրով ուստիւգուր: «Գուշակումն եղանակաց ի սմա պարունակին աստղաբաշխութիւն տօմարք և տօնացոյցք Լաթիացոց. Հայոց, և Ցունաց ըստ լուսնացուցին: Յօրինեցեալն յենտօնէ վարդապետէ Կոստանդինուպոլսեցւոյ: Գրեցաւ 1732: Մարտի 21»:

Անի շատ խնամով և մահուր պատրաստաւած աղիւակներ: Մաղկում չութի:

Թիւ 3

ՇԱՐԱԿԱՆ

ԺԳ Դար

Մաւալ՝ 9×13 սմ.: Գրչութիւն՝ միասիւն, ձայնագրեալ, բոլորդիր, գմոււար ընթեռնի, 21 տող: Կազմ՝ կաշեպատ տախտակ բայթացուած: Նիւթ՝ թուղթ: Հանգամանիք՝ վաս: Բազմիցս նորագուած ըլլակավ ունի զանազանգրք շուրթիւններ: Վերջին արևապահին վրայ նուրբ գրչէ: «Թիւն ՌիմՌէ 1647» յիշեայ տէր, պատճառ գրոյն այս է ար տէր Արդարենց տիրացուակարձեածինք գրէ»:

Զեռագրին սկիզբան, անգլերէն՝ գնումբուած թէ Ա. Պ. Ք. Ընկա տառ 11 մ:

Թիւ 4 (հաւաքման A 195/201)

ՔԱՐՈՇԳԻՐՔ, ԺՈՂՈՎԱԾՈՒԻ

1302

Թերը՝ 152: Մաւալ՝ 13·5×17 սմ.: Գրչութիւն՝ միասիւն, տարրեր զբարարթեամբ բոլորդիր, հին, 23 տող: Նիւթ՝ թուղթ: Կազմ՝ կաշեպատ տախ-տակ: Հանգամանեմ՝ միջակ: Մաղկաւմ՝ չուեի:

Ա. կողին ենևը գքչափոք: «Եթշատակ է այս քարոզաց գիրքս Վար-դերսի և որդոց հանգուցեալ Սարդիսին հոգոյն որ ես ի ձեռն»: Միշտ նոտր-զրով: «Գեղվանքցի տէր Մինասի որդին Աբրահամ վարդապետին»: Նոյնը կրիմուելէ վերջ: «Թշին ՌՄԽ (1791): Դարձան՝ «Հանդուցեալ Վառվառին հարսին Մարիամին դրեցաւ Մանճուսուն գուղն մայիսի Զ(6) օրն»: Վերատին: «Հանգուցեալ Ակոր կողակցին Անայ մէկ շապիկ Անայ հանգուցեալ Կարապետ... Մարեմ»:

Ցաղորդ էջին վրայ նոտրգրով: «Աղաճայ իսանքն աէրտէր Ռւշաղի Դը-րիգոր Նիկողոս»: Խոչ էջին ստոր ութամիւն ամբոնքնիլի կնիք:

Էջ 1ա. կոպիտ նոտրգրով: «Վառվառին Մարամին Պաղտասարին Կա-րապետին ժամուց տիրացու Գրիդորն...ին Լուսիկ...ին...մէկ շապիկ Վառ-վառ Մարիամ Պաղտասար 1 ժամուց ալթուն, 1 շապիկ հանգուցեալ Առաքելին իւր Կողակցոյն...Մարիամին: 1 ժամուց Մարթին 1 ժամուց սառայ 1 ժամուց Կարապետ 1 ժամուց Կուլիխթուն 1 ժամուց Արութին 1 ժամուց Աթմազողի Խօ-ձայ Կարապետ 1 շապիկ Եղիսայրեկն 1 ճանպայայ 1 ժամուց տիրացու Վարդոկ 1 ժամուց Միսակ 1 ժամուց Պայրամ 1 ժամուց տէր Մկրտիչ 1 ժամուց Թորոս 1 ժամուց Աւետիս 1 ժամուց Ակոր 1 ժամուց Ռիշանէս 1 ժամուց Կարապետ 1 ժամուց տիրացու Գէկորք 1 ժամուց Պետրոս 1 ժամուց Պողոս 1 ժամուց Մելքոն»:

Բուժ ձեռագիրը կը սկսի կարմրաւ: «Խաւաք իմաստամիրաց և ուղա-փառ վարդապետաց մասն զավանաց և սոլոց և ոյք ի նոսա սահմանեայ կան»:

Էջ 60ր. գրչէն: «Ալրդ աղաչեմ զամենեսեան զԱսիլ սարկաւազ և զծր-նաւզն իմ մրով տէր ողորմափի լիշես: և զգորդ գրիս զԱսիլ դաիր. և զստացող սորա յիշեսիլիք ի աեր և ասոււած զձեզ յիշէ իւր»: Որմէ վերջ: «Բժշկական սումար: Մեկնութիւն չորմի տարից: ի նմանութիւն չորից յիշանակաց տա-րոյն խառնուածքին ի մարմին...»: Կաւարտի էջ 6աս, ուր գրչէն կայ: «Եթէ կամիցիս դիմել յԱղամամինչեւ յաւըն յորում ես եթի քանի ամ է...»:

Էջ 65ա, գրչէն: «Այլ քառասնաւրեան զարմտեան տեառն ի տաճարն»: Մինչև էջ 68ա կէսը, ուր կը սկսի «Գէկորք վարդապետի բանք մասն կանուն և անգան զատկի»:

Այս հատուածը հաւանաբար Գէկորք վարդապետ երգեկացիի գրչէն է: Հրատարակուած չգույա: Տամարական շանեկան գործ մըն է:

«Դիցուք սուղ ինչ և վասն տէրունական լըրմանցն յետ և յառաջ խո-ղալոյ: Զի թէպէս և իմաստոցն յայտնին է այլ բաղում անգամ յազագս ան-պատրաստութեան ընդ անծանաթիս առնեն զհաշ: Արդ բուն և ստոյդ պատճառ լրման գատկին կանուի և անագան լինելոյն յայինքն զի կատարէ արեղակն ըգ-տարին յաւուրս Յնի(365) իսկ լուսին ՅԾԴ(354), ԺԱ(11) աւր պակաս քան զի յամին այն ամաց կեսաւր թողու լուսինն. ի ԺԲ(12) ամիսն Զ(6) աւր և Ե(5) աւելեացն որ ամի ամի բարդի ի վերա լուսնին և կոչի վերադիր և ըստ յաւել-ուածութեան յառաջ վարէ զատիկն. մինչև յերեք ամի լինի ԼԳ(33) աւր յորում ամի ԺԳ(13) յուսին լինի. և կարի անազան զատիկ: Խոչ Հետազա տարին Գ(3) լինի վերադիրն, և լինի կանուխ զատիկ: Եւ ի մատջիր այսպէս: Զորաւրինակ

թաղաւորք, երկուս սպասաւորք կարգէ, հաց և զինի պատրաստել ի պէտան, և որոյ հաց կը ին դործ անփոփոխ ի Դ(4) աւըն կատարէ զերթն ու դարձն : Խսէ զիներերն երբեմն յերեքո, և երբեմն ի Դ(4) : Եւ զի ի Հինգ ևս և ի վեց կամեց-Լալ թաղաւորին խրախճանութիւն առնել, տառքէ զնոսա բերել զհաց և զինի և թէ զուշաշափ զիսկեցի երկուցն ճանապարհն . զրեթէ առաքեալք ի չորեքշարթի ոչ դարձն ի շարաթու, և իսկոյն ընդ այգանալ կիւրակէին առնէ խրախճանութիւն, իսկ եթէ զինին յամեաց հարկ է մալ մինչեւ եկեսէ, ի Հինգերորդ կամ ի Ժեցերորդ աւուրն անապան կամ ևս անապան : Ի վերայ այսորիկ և կիրակէի ևս հարկ է մընալ խրախճանութեան : Արդ է թաղաւորն աստուած և արքունիք աւստի մնթանան դարնանամուտն խրախճանութիւն սուրբ զատիկն, և սպասաւորն արեգակն և լուսինն հացակերն անհաւասար, վասն ԺԱ(11) աւուրցն թողլոյ առնէ զտարին աւուրք ՅԾԴ(354), ՅԿԵ(365), ՅՀԶ(375), ՅՀԷ(387) : Գիտեմ զի սուզ ինչ զանազանի ի գրելոցն զոր ասեմս այլ վասն նոր ազանիցն գիւրահասութեամբ այսպէս եղի : Եւ զի նախ պարտ է դարնանամուտն լինի և ապա լրումն զատիկի զի տարոյն մուտ զարուն, և աշխարհիս լինելու Թեան ժամանակն երթիցուք մտաւք աւըն յորում եղեն լուսաւորքն որ է քանն Մարտի տմոսյ յորում աւուրք սկսան զընթաց տարոյն : Արդ եկ զու ինձ ասոտնուուր ըստ սուաջին պայմանին նկատեայ զՄարտի քանն սկիւրն ընթացից արեգականն և լուսինի աւըն առաջին, որ թէպէտ ի միում աւուրք սկսան, այլ վասն կէսկէս աւուրցն թողլոյ ամսոյ ամսոյ ԺԱ(11) աւուրք յառաջ կատարի լուսինն զտարին Երկոյստասան լրմամբ : Ակսեալ ընդ արեգականն ի քըսանն Մարտի կատարէ չըջապատեալ հասեալ ԻԸ(28) և Մարտի, և առեալ ծնունդ Ի(20) յինձ Մարտի սկսանի նոր տարի յառաջ քան զարեգակն :

«Գայ և արեգակն զինի նորա և կատարի զտարին ԺԹ(19) Մարտի և սկսանի ի քանն նոր տարի : Լուսինն զի կանուխ սկսալ յինի յայնմ աւուրք մետասահարեայ այսինքն ի քանն Մարտի, յորոյ ի քանն և Հինգ լրացեալ առնէ զատիկ : Ժողովի ապա ի վերա նորայ առաջին և երկորդ ամին վերադիրքն այսինքն է աւուրք ԻԲ(22), և թէպէտ և փութայ զարձեալ և զտարին զոր ըստ կառա յինն Մարտի, ԺԲ (երկոստաս)ան լուսնով կատարէ ի ԻԸ(27) Փետրուարի, այլ զի կարի կանուխ է քան դշասարսկածն, յաւելու ի վերա նորա և երրորդ ամին յաւելուածն, որ նա ինքն վերադիրն, այսինքն ԼԳ(33) : Հարկ առնէ ի նրմայ յայնմ տարոյն ԺԹ(30) առնէ զլուսին վասն ամի ամի յաւելուածին իրքրա լինելոյն նմին իրի թէպէտ կարի կանուխ էր ԲԺ (երկոստաս)ան լուսնին զոր կատարեցաք ի քանն Ե(5) Փետրուարի, այլ յաժինն ի վերայ նորայ ամսոյ Ժիոյ կարի հւեղանայ քան զարեգակն, զի զնունդն զոր առնէ, ի ԻԶ(26) Փետրուարի լրացեալ ԺԲ(12) Մարտի, և բովանդակեալ զայն ի ԻԶ(26) Մարտի զինի հասարակածին, և ԻԸ(27) Մարտի առեալ ծնունդ, սկսանի իւր նոր տարի, և լրացուցեալ զինքն ի ԺԲ(12) Ապրիլի կարի հեռացեալ ի դարնանայտէն առնէ ի գուլս զատիկ : Բայց պատճառ կիսոցն զոր թողլոյ լուսինն է այս : Զի որպէտ ասի քան զարեգակն ընդ առաւաւն է ստեղծուած և զլուսինն ընդ երեկոյ, և ի ստեղծման լուսինն ԺԱ(11) մասն պակաս էր յերկոստասան ժամուց արեգականն, և այն ԺԱ(11) մասն ամենայն աւուրք ժողովի ի վերա լուսնին : Ի յինի ի յամինս ժամոյ ԺԱ(11) և ի տարին աւուրք ԺԱ(11), և այլ է պատճառ նախասացեալ լրմանցըն կանխելոյ : Բայց գոյ տարակոյս՝ զի թէ յորեգականչն էր ԺԱ(11), մասն պակաս ի վերա լուսինն Է՞ր ան :

«Զի զայնքան մասունսըն թւոյից լուսինն գեռ ևս արեգակն էլմէր՝ և ոչ լուսինն : Վասն որոյ զոր ընդ լոյս արեգականն եկն յիւրն պակասեցոյց յիշ խսանութենէ, զի զերկոստասան ժամը ի լրոյն ո՛չ ժամանեաց լուսաւորին : զի

ժինչ գլու ԺԱ(11) մասն պակաս էր ի գիշերոյն ի մայր էմուտ չեւ ևս ծագեալ առ բեղակն, և խաւար մնաց գիշերոյն մասունա ԺԱ(11), որ և աւուր աւուր ժողով-ը եղական, և խաւար մնաց գիշերոյն մասունա ԺԱ(11), որ է կեսաւը սուզ ինչ պակաս բաստ ԻԴ(24) ժամուց աւուրն»:

Էջ 93ա. «Վասն ցանկութեան»:

Էջ 96ա. «Երանելոյն Եփրեմի»:

Էջ 97ա. «Յոհանու Ռոկերերանի յաղագու պահոց և աղաթից և խոստ-քանութեան»:

Էջ 117բ. «Բ Հարանց վարուց»:

Էջ 127ա. «Պատճառ աւուրց արարչութեան»:

Էջ 134բ. «Յաղազ սուրբ մարտիրոսացն»:

Էջ 143ա. «Պատճառք Երկրորդ Գալլսատեանն»:

Էջ 147բ. «Վասն Թուականաց անցելոց մի քրիստոսի ծննդենէն մինչ և սուրբ Գրիգոր, ամք. ՅԶ(306). ի սուրբ Գրիգորէ մինչև ի Հայ Թուականն ամք ՄԱ(240). յլդամայ մինչև ի Հայ Թուականն ամք ԵՌ-ԶՄԱ(5751)։ ՅԱդամա մինչև յայս տարիս որ է ԶՄԱ(1302), և ԶՄԷՃԱ(6701) տարի է։ ի քրիստոս մինչև ի յայս ԽՄՂԶ(1296)։ ի սուրբ Գրիգորէ ամք ԶՂ(990)։ Հոս նկատենք որ Քրիստոսի ԽՄՂԶ(1296) չը համապատասխաներ Հայոց ԶՄԱ(1302)-ին։ Քրիստոսի քուականը մեր գրիշներէն սովորաբար զօրծածուած չըլլալով նման սխալներ կը պատահին։ Մենք գրչութեան քուական ընդունեցինք ԶՄԱ(1302)։

Շարումակելով. «Գրեցաք վասն յետին Թուականին» և կը տրուի հետևեալ ծամանակարգութիւնը։ «Ի թվին Կի(618) ելն սամձկաց ի Հայք. ի թվին ՇՃ(1106). ելն սուրբանացն որ սալչուքիկ կոչեցան. ի թվին ՈԿԹ(1220) թութարին երև. ի թվին ՈՂԴ(1225) խորազմին ելաւ. ի թվին ՈՀէ(1228). սուրբան Յայտատին էտո զեղսկան։ ի թվին ՈԶ(1231). Սոփնոցին կոտարումն ի թաթրէն. ի թվին ՈՂԱ(1242). սուրբան Յալատին մեռաւ և նստաւ Ղիաթատինն. Պաշան էտո զերանու քաղաք. ի թվին ՈՂԲ(1242). էտո զՄԿաստ և զկեսարիա և զեղնկան. ի թվին ԶԱ(1252). մորեին կերաւ զվաստակն որ սով եղաւ սաստիկ. ի թվին ԶԳ(1254). չարժ եղի սաստիկ որ եղնկան անցաւ. ի թվին ԶԴ(1255). Պաշան եկն և զնաց ի Հոռաւմք (Սելնուզմներու երկիրը) և կոտրեց զուրլանն. ի թվին ԶԵ(1256). Խատազան եկն յեղնկան. ի թվին ԶԶ(1257). սուրբան Յազմատինն և Հոռովնատինն կովեցան ընդ իրար. ի թվին ԶԺԴ(1265). ազեր աստղն ելաւ յարեւլ. մեռաւ Հոռլապունն և նստաւ Ապաղան. ի թվին ԶԺԴ(1265) Տէր Սարգիս սուրբ եպիսկոպոսն նզընկային զնաց ի թագաւորութիւն ի Ստըմպաւէն հրամանաւ Հոռլայունին և էրեր զԴէսպինան. ի թվին ԶԻԲ(1273) Տէր Ներսէսի նշխարքն երեւեցաւ. ի թվին ԶԻԵ(1276). Տէր Սարգիս ըսպանաւ ի Տութարէն ու ի Զալապուն. ի թվին ԶԻԶ(1277). Ապաղան եկն յեղնկան բազում հւեծելաւ. ի թվին ԶԼԱ(1282). Ապաղան մեռաւ և նստաւ Ահմատն զան. ի թվին ԶԼԳ(1284) գիրքը սուրբանն սպանին յեղնկան. ի թվին ԶԼԳ(1284). Ահմատ զանն սպանաւ յԱրդունէն և նստաւ Արդաւնն զան. ի թվին ԶԼԳ(1284). Հոռլաղուն և Քեղաթուն յեղնկային դաշտն ձմերեցին. ի թվին ԶԼԸ(1289) չարժ եղի յեղնկան և բազումք կորեան և նզնկան անցաւ. ի թվին ԶԿԱ(1292) Արդաւնն դեղով մեռաւ ի մեծամեծաց իւրց. ի թվին ԶԿԱ(1292). Ծըռազատին. ի թվին ԶԽԲ(1293). Հոռովնկան առաւ ի մարցուն և աւերեց. ի թվին ԶԽԴ(1295). Քեղաթուն սպաննաւ և նստաւ Պարդուն։ ի թվին ԶԽԴ(1295) նստաւ Խաղանն զան և հրամանք ելաւ ի Խաղանէն և ի նաւուրքէն. յաւըն աւերժանց եկեղեցացն. և խոցատէլ զքրիստոնեայ։ ի թվին ԶԽԵ(1296)

Խութլու զանն մեծ հեծելաւ ի հռուամք էմուս որ զՊալթաւն բռնէր . և Պալթաւն փախեաւ և գուուղան բռնեց և տարաւ . ի թվին ԶԽԶ(1297) . Սըմբատ թռու դաւորն զնաց ի Խազանն . և կին էտա յազգէն զանին , ի թվին ԶԽէ(1298) . լուսինն խաւարեցաւ սաստիկ որ Բ (երկու) պահ չերևեցաւ և ասու մի երևեցաւ ազմոր : ի թվին ԶԽէ(1298) . Պաշիրոտն երեկ վասն թուրքմնին . ի թվին ԶԽէ (1299) . Սուլամիշն մառեց ի Խազանէն և սպան զիայանչարն և զՊիտուրն որ ի հռոմք արդումիք էին . և հրամանք երաւ ի զանին որ շարժեցաւ թաթարն . և վրացին . ի թվին ԶԽԸ(1299) . եղև յերկար և պինդ ձմեռն որ պտղարեքն մանցան . և հեծելն թաղողվ անցոյց զերկիրս և ապա զնաց ի հռոմք վասն Սուլամիշին . և Սուլամիշ փախաւ . և հեծելն դարձաւ ի զանն ի թվին ԶԽԱ(1302) ի Խաւասարդի ամսոյն ի ԺԵ(15) . բռնվեցաւ լուսինն ; ի թվին ԶԽԳ(1304) . Խազան խանն մեռաւ և նստաւ ի յաթուն Խարանդան խան ի թվին ԶԽԴ(1305) . Խառիսուու ջուրն երեկ յեղնկան և բաղում զնան արար . ի թվին ԶԽԳ Ամբար աղան երէկ մելիք նղղնկիս . ի թվին ԶԽԸ(1309) Պուլար զան երեկ նղղնկին մեւէք . ի թվին ԶԿԲ(1313) Հալառուն խան Խնուրուին թաթարն յայսդիս անցաւ ի թվին ԶԿԴ . (1315) . զՄեկիտինի աւերեց շափցին (Փախասկոսցին) . և շատ կոտորեց . ի նոյն ամի Լուլւուն նղղնկին մելիք էր . զսանուսէր քաղաքին ի մատանն էշար սրով , և բաղումք մեռան և այլք կիսամահ եղան . Հաւշթան երեկ ի զանին ու բռնեց զւուրան ու չար չչեց ու ի տուֆրան ի դիր ու ի կախարն էր գիշերն . թվին ԶԿԵ(1316) Խարապանդա զան մեռաւ և նստաւ Բուսափին զան . թվին ԶԿԶ(1321) . ի թվին ԶՀ(1321) թուրքերն ի յեղնկան զիրենց մզկիթն առականեցին վասն թափակութեան և աստուած խափանեց . ապա զանն թափակութեան զպարոն ֆուանին և ի նոյն ամս Դամուրդաշն եմուս Կիլիկէ և աստուածային զաւրութեամբն պահեցաւ երկիրն Հայոց : Եւ էր յեղիկան մեւէք Լուլւուն ի եղեւ խիստ խաշնամահ :

Տարբեր գրչէ : «Դամուրդաշն և բազում դառնութիւն անցոյց յազգս Հայոց հարկապահանջութեամբ և վասն հաւատոյ սասանէր ազգս Հայոց . իսկ արարիշն ողորմածութեամբ Հայեցաւ ի տկարութիւնս մեր և յարոյց ի վերա որդոյն Քհայրն ԶՇապանն : ի թվին ԶՀԳ(1324) որ երեկ ի մէջ ձմռան բազում դաւրաւէ ի հռոմք բռնեաւ և տարաւ ի յորտուն և էր մելիք յեղնկան Փերաւծն : ի թվին ԶՀԴ(1325) զնաց Զոպանն բազում գօրաք ի ներքի ի թաթարն և չոյս գարձաւ վասն ահի : ի թվին ԶՀԸ(1326) դարձեալ երեկ Տամուրտաշն ի հռոմք ի վերա իր հակառակացն : ի թվին ԶՀԶ(1327) Զոպանն զնաց ի Խորասան դիմացն ներքի ի տաթրին (բարպարին) և նոյն ամն գւեղեղն զթափէժ տարաւ . և ի նոյն ամն Զոպանն ի Պուսալիդ խանէն փախաւ և մեռաւ . Եւ նոյն ամն Տամուրտաշն ի հռոմք բազում չարիս գործեաց և զԵղնիին կէ երկիրն աւերեցին և փախաւ . ի Սուր (Նգիպառս) և անդ սպանաւ ի սուղնայ : ի թվին ԶՀԷ (1328) բազում չարիք հասուցին նղնկիս հռոմաց պարոնային , զՄիր Մահմատրն որ ի Տամուրտաշին տեղն էր՝ և Մուսավարն և Ղատին որ Սահիպ Դիրանէն և հռոմութունուուն :

Դարբեր գրչէ : «Ի թվին ԶՀԲ(1329) նղնկիս տանուտեքն ի վեր ի խանն զնացին ու զիսարաճն ու այլ շատ չարեր բարձին Պուսակիդ խանին բանիւ . և ոչ զնաց յառաջ ի չար պարոնացն ձեռաց : ի թվին ԶՀԹ(1330) հպիկոպոս Տէր Սարգիսն ի վեր ի Պուսակիդ խանն զնաց : ի թվին ԶՀ(1331) զարձաւ եպիսկոպոսն պատուով . ի թվին ԶԶ(1331) երեկ ի յեղնկան հռոմաց Սահիպ Յաղատին քաշին ու խանսով շատ մալ էտաւ : ի թվին ԶՀԱ(1332) երեկ ի կամախ Աղճառան ու Շեր Հասանն իր որդիին »:

Տարբեր գրչէ : «Ի թվին ԶՀԲ(1333) Տամուրտաշին որդիին Շեր Հա-

առն Եկն ի յեղնկառ և խիստ հարկապահանջութեամբ նեղեաց զալզա քրիստոնէից . ի սոյն ամ զնաց ի հոռոմք և տիրեաց հոռոմաց . ի թվին ԶՀԵ(1336) մեռաւ Պուայիի զանն և նստաւ ի տեղի նորա Արփաքայունն կիսամ և սպանաւ ի զարգաց իւրոց և եղեւ իսովութիւն ի մէջ նոցա , ի սոյն ամ նստաւ ի տեղի նորա Մուսայ խանն Գ (Երեք) ամիս : Ի սոյն ամ զնաց Շեխ Հասանն որդի Աղճաթային ի յաւրդան և երազ զՄուսա խանն և եռ իր զԱհմատ խանն տարի մի և էր յԵղնկառ մէկիք Այնա պակն : Ի թվին ԶՀԵ յայտնեցաւ . . . Տամուլուսան Համբաւով և ինքն և իւր որդին Շեխ Հասանն միաբանեցան և եկին ի վերայ Եղնկին և սղարհցին (պաշարեցին) զամիսն Գ (չորս) . և գարձեալ զնացին յաւրտուն և եղեւ պատերազմ և սպանաւ Ահմատ զանն և կայց աշխարհ ի տարակութիւն վասն անիշխանութիւնն և Եղնկա ի մեծ տարակութիւն : Եւ ի սոյն ամ Յաթաթնան սղարհց զՄուսա մինչ ի սովուն նեղեալ տուին դրազաքն» :

Տարբեր գրչէ : «Ի թվին ՆՀԲ(1029) . եղեւ ահաւոր նշան ի Ե (հինգ) Հսկաւմբերի . պատճառեցաւ Հաստատութիւնդ և Հերձաւ երկինք, յարկելից մինչև ի մարս և լոյր հոսէր յերկիր . և եղեւ ահաւոր դոչիւն և խաւար . երիէին աստեղք որ պատճեաց . Կոդէրն . . .» : Քաղուած Մատրէոս Ռւլահյեցիի պատմութենին, Խաչակրաքան մասին : «Եւ այս էր պատճառ յերանելոյն, քոնդի մինչ տիրէին սկիւթացիք յերուսաղէմի, և առուին գարձս ի մտելոցն ի սուրբ Գերեզմանն . գիպեցաւ (Էջ 150ր.) Կոմս Փոանդ ազգաւուր զի անշափ դանեցին զնա (մահմետականիք) մինչ խոկցաւ ակն նորա զոր առեալ պահէր, և գարձեայ ի Հոռմ ցուցանէր, և ի նախանձն շարժեալ երանէին փառուր զՄուսարքն բաղում զօրաւուք . և եկեաւ յաղթեն, զիլիճ Ասլան սուրբանն . Բ (Երկու) անդամ : Առին զերկիայ, և ետուն յելէքսն Առին զերուսաղէմ և եղին թագաւոր ի վերայ նորա որ է թագաւոր յերուսաղէմի ՅՌ(300,000) ձիւորով եհար զՄայահատինն ի գուռն երուսաղէմի . զօրութեամբ սուրբ խաչին որ էր ՃՌ(140,000) զօրուք զի առնոյր զերուսաղէմ . ԿՌ(60,000) ուզտ ջրաբեր էին զհւտ նորա . յուռաջ ՌւսուՓ էր անուն» :

Տարբեր գրչէ : «Ի թվին ԶԽԹ(1300) եղեւ սով սաստիկ յաշխարհն Հոռոմոց, ևս առաւել ի Սևաստ զի եղեւ չինիկ մի ցորենն Յ(300) սպիտակ . և նուկի մի և կէս հացի Ա (մէկ) սպիտակ : Դարչէլի իրք ու զչուն, և դիատուս և . . . զմիս մեռեալ մարդոյ . ոհ դառնութիւն ի կեսարիա ըմպոնեցին կին մի որ Հերիս արարին . ԻԶ(26) լիոր մարդոյ եղ իր ծախելն և յերկարեց սովն տարի մի և կէս» :

Ասիլ սարկաւագ կամ դպիր գրած է Երևանի թիւ 1098 ժողովածուն 1320ին և թիւ 1275 Մեհնութիւն Եղէկիւլի 1322ին : Հին բալորզով այս ձեռագիրն ալ՝ 1302ին :

Թիւ 5

ՀԱՐԱԿԱՆ

ԺԴ Դար

Մաւալ՝ 11×16 ամ . : Գրչութիւն՝ միտուին, նոտր դրչութեան նմանող չին բոլորդով, 25 տող, ձայնագրեալ : Նիւթ՝ թուղթ : Կազմ՝ կաշեպատ տախտակ : Մատկում՝ Հասարակ : Հանգանանք՝ թէկ սկիզբէն և յերջէն պակասաւոր, սակայն լաւ, Սկիզբն ու վերջը երկուական թերթ մադաղաթ, լատին և երէն :

Թիւ 6

ԱԽԵՏԱՐԱՆ

1299

Գրչուքիւն՝ երկսիւն, համարարառաեալ, 19 տող, բոլորգիր։ Նիւք՝ թուղթ, կազմ՝ կաշեպատ տախտակ։ Պահպանակ՝ սկիզբ ու վերջը երեքական թուղթէ Աւետարանէ մը։ Հանգամանն՝ ըստ երեսյթի կրակէ ազատուած։ Խոնութենէ վնասուած։ Վերակադրութեան տաեն լուսանցքները կարուած։ Մանրանկարչուքիւն՝ շահեկան է Յովհաննու սկիզբի խորանը, և քանի մը լուսանցաղարդեր։ Մնացեալ վերանորոգութեան տաեն կանաչոյ և մութ կարմիւրոյ պատրաստուած։ Աւետարանիւներու նկարներ, խորաններ և այլն։

Պարունակութիւն։

Էջ 1ա. պարապ։

Էջ 1բ. Մատրէսի նկարը։

Էջ 2ա. սկզբանարամ, և այլն։

Ղուկասի վերջը, գրչէն կարմրաւ։ «ԶՄարգարէ գրիչ որ բազում աշխատութեամբ գրեցի զուուրը աւետարանս յիշենջիք ի տէր քրիստոս և աստուած որ առասն է ողորմութեամքր...» և այլն։

Ցովհաննու վերջը զիխաւոր յիշաստակարան բօն գրչէն։ «Ճէր ասուածք... ի յամս Հայկակեան թուարերութեան տումարին յորում էր թիւ Համբաց թուականին Թորգոմեան տումին Զիլը (1299) աւարտադրծեալ եղի սուրբ և կենսատու աւետարանս...» (կը տրուի աւետարաններու գրաւելում պատմութիւնը) «...զուի իմ անարժանի և սննդիտան և սուս անուն կրաւենաւորի. որ տեսի զարդինակ գովելի և անսղալ վկայեալ ի բազմաց. և ցանկացող եղէ որպէս պատուական մարգարտի և զրեցի զաւ իմ անմիմաստ և տկար մատաւքս, բնդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս. արդ աղաչէմ զամենեսեան որ հոնդիպիք սուրբ աւետարանիս, զմեղապարտ գծողս Ստեփանոս, և զծնողս իմ, և դեղարասն իմ յիշենջիք ի մաքրափայլ յաղակիս ձեր։

«Նաև զհոյեոր եղբարս իմ զմովսէս կրաւնաւոր և զծնողսն նորա, և զեղբայրն իւրայստքն հանդերձ ամեն, և զհայր վանիցս զՅոյշաննէս քահանայ և զայլ կրաւնաւոր եղբարքքս, և զմիախանք սուրբ ուխտիս և զառանորդ գաւառի զառաքելաշնորհ և զպատուական հայրապետս մեր զճէր Միխթար և զծնողս նորայ որ Հայրական գթութեամբ իւրով զարդինակ պարզենաց։ և է յոյժ երախտաւոր մեզ։ Ցիշուղաց և յիշեցելոցս ողորմեսից։ Քրիստոս ասուածք բարիխաւուութեամբ սուրբ ծնողներ իւրոյ, և սրբոց հրեշտակապետացն ուրոյ այսեր էր յիշաստակս, յաւուրն համառաւտիք և նմա փառք նաև զինհեմամիս առաքելաշնորհ և զրազձալի և զանյախիթ բարունիս մեր որոյ անուն Պահ ճանաչի. որ բազում աշխատեցաւ ի սուրբ աւետարանս գոր մեք լրբացաք և հարկեցաք զաւ որ գրեաց զդիխաւոր գիրս. Ռ. և ՃկԲ (1162). յիշատակ իւր հոյն և ծնողաց իւր և զարմաց կենդանաց և հանգուցելոց։»

Թիւ 7

ԿԻՒՐԵՂԻ ԿՈՉՈՒՄՆ ԸՆԾԱՑՈՒԹԵԱՆ

1708

Ծաւալ՝ 16×26։ Գրչուքիւն՝ նստրգիր, սկիզբ երկսիւն մինչև և պրբակ և անկէ վերջ միասիւն, սև մելան, զրչութիւնը բաժնուած լուսանցքներէն բակ

կարմրագիծով : Տող՝ 30 : Նիւթ՝ թուղթ, կազմ՝ կաշեպատ տախտակ : Հանգամանիք՝ քայլայուած, թէն լաւ :

Պարունակութիւն :

Կը սկսի ոսկեզիծ գումազեղ ի լուսանցազարդով :

Գլխաւոր յիշատակարան քրչէն ձեռագրին վերջը : «Փառք... պրեցի և կատարեցի զծաղկահաւաք մատեանս սրբոյն Կիւրզի որ կոչի Կոչումն Ընծայութեան . որ էր զրած ի սուրբ արանց ի հին ժամանակի և անարդ ընկեցեալ կայր ի մէջ ազրիւսաց եկեղեցոյ . և իմ առեալ թափ տվի ի յաղոքն, և տեսի փատօնալ և ցից կերեալ . և զիրն անոպա երկաթագրին յանհարմարն . մնամ թէ վասն դըրին անընդունելի և ընկեցիկ եղեալ էր . և ես ետնեալս և, մեզաւորս և, անպիտան լաշին Կիւրէցի փափառանօք զայ զրեցի . ոչ եթէ զկատարեալն, բյլ մէկ գըլ-խէն մինչեւ ի չորսն չկայր . ի հինոր զլիսէն ըսկեցի գրել, չորս մնաց առաջնոցն . եթէ ի դիպող ժամուռ գտանեմ զան ևս ի վերջն, գրելոց եմ պատուծով : ԱՌ իմ խոհեմ եղրայր զայս գիրքս որ ես գտի գրեալ էր վաղուց ժամանակաց ի յառաջին թագաւորաց ձայոց և յիշատակարան նորա զրեալ էր թէ երկրորդ նորոգումն զրոյն եղի ի թիին ՆԱԾ(1048) . և դարձեալ զրեալ էր թէ երկրորդ նորոգումը եղի գրոյն ԾՃ(1359) և չորրորդ նորոգումն էր ՌՀԴ(1625) թիին այսպէս աննման մատեանս ո՛չ կարդացող կայ ո՛չ ֆնող . վայ մեզ որ յամենայնէ զրեալ եմք վասն մնդաց մերոց և անաւրինութեան մերոյ . անտէք և անայցելու լինելուվ . . . : Դարձեալ անպիտան յմտնեալս ի յամենայն բարեաց Լաշինս գրեցի զայ յինափափաք սիրով ի թիին Հայոց ՌՃԾէ(1708) ի հոկտեմբերի ժԴ(14) օրն ի վայելումն անձին իմոյ : Դարձեալ ով իմ սիրելի եղրայր յիշեցէք ի ժաքարափայլ յազօթս ձեր . գեղկելի գրիչս և զկողակիցն իմ զիանզատէն, և զորդիքն իմ զլիթունն և զՊողոսն և զամենայն մերձաւորս իմ . Դարձեալ յիշեցէք երկնադնաց յազօթս ձեր զանազուցեալ հայրն իմ զՊողոսն և զմայրն իմ ըղ-Մարդամն, և զպազս իմ զմահանք Լաշին և զմամն իմ զլրամբնն և զամենայն հանգուցեալն մեր միով հայր մեզայիւ, և յուսկ կտոր զլային զրիչս յիշեցէք և զմեղացն իմ թողութիւն հայցեցէք, և կողակցոյս իմոյ եէնդատէին և որդուցրս յԱլթունին և Պողոսին և զմեզ յիշողեղ յիշեալ միջիք յառաջի առաջի մեծին աստուծոյ ամմէնք :

Լաշին գրիչ գրած է Երևանի թիւ 1453 Ժողովածուն 1692ին ի Թախար : Խոկ մահունեսի Լաշին մը ստացած է 1616ին և 1624ին գրուած Երևանի թիւ 7369 և 7370 Ցայսմաւորքները, Կափա գրուած : Յիշատակարանը կը յիշէ Մահունի Լաշինի Սսեցի ըլլալը . բան մը ոք մեզ կը քաջալերէ զինքը նոյնացնլ մեր վերի զրչիմ՝ Լաշին Կիւրէցիի պապուն ենտ, ոք կը յիշաւի իբր Մահունի Լաշին իբ քոռան յիշատակարանին մէջ :

Թիւ 8

ՇԱԲԱԿԱՆ

ԺԵ Դար

Մաւալ՝ 8×11 սմ . : Գրչութիւն՝ միասիւն, բոլորդիր, 19 տող, ձայնագրեալ, Նիւթ՝ մակաղաթ : Կազմ՝ կը մնան միայն տախտակները : Հանգամանիք՝ խոնաւութենէ զրութիւնը, նկարներն ու ծաղկումները տեղ տեղ փճացած, աւրիւսած :

Թիւ 9
ԱՀԵՑԱՐԱՆ

1658

Նաւալ՝ 16×22 սմ.: Գոչուրիւմ՝ բոլորիքը, երկուին, 23 տող, նիւթ՝ ժագաղաթ: Մանրանկարչուրիւմ՝ ճոխ կերպով, թէև սովորական ոճով:

Գլխաւոր յիշառակարան գրչէն Յովիանանու վերցը: «Փառք... Արդ այս աստուածապտուում և քրիստոնաւուու տառիս ցանկացաւզ եղեալ այրս այս ամենայն առաքինութեամբ զարդարեալ խոնայ Կարապետն ետ գրել զսա յիշառակ հոգաց իւրոյ և իւր ծնողաց, և իւր եղբարցն ի պայծառութիւն ողբրոց եկեղեցւոյ: Ի թուարերութեան Ասքանացնան և Յարեթական տումարի Խճ և է. (1658) և Լ(30) ս նորում շըշանի. ԽԱ(41) և ի գալստենէ կենարարին. ԽՈԾԸ(1658) և յելիցն Աղամայ ի դրախտէն ԽՁԱ(7081). ի հայրապետութեան Տեառն Յակորա. և յառանորդութեան ամենայն հիւսիսական կողմանն Տէր Դիմիորի աւրհնաշոնչ քահանայապետի զոր տէր ստորուած պահեցէ ի կամս ողբրութեան իւրոյ: Բայց զրեցաւ սայ յաշխարհս Հոնաց և յերկիրս Դրիմի ի հոյակապ և ի հոչակաւոր քաղաքիս կոչի Կաֆոս ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սրբոյն Սարգսի զաւրափարին, և այլ բազմահաւաք սրբոց մեռամբ Նիկողայոս ոմն անարժանի: Այժմ ազաշնմ գամենենան զդասս լուսկամմից. որք Հանդիպիք այս աստուածային խրախնձութեան յիշենջիք ի ժաքափայլ յաղաւթս ձեր զիքափաքմամբ ստացաւզ սորա խոլոյ Եասկիւլին զեղմայրքն իւր զնահապետն, և զկարապետն որ պատճու եղեւ ի գրելն սորա. և զիւսկանն և զեղբարորդիքն իւր զհայրապետն և Զաքարիան և զիւրզամն, և զձլախանն, և զծնաւզն իւր Զաքարիան և զկիւրիծիւնն եղբարց կողակիցն իւր զըմիւլտանն, և զվելամն և զեթերն և զամենայն արեան զեմբրակայն իւր: Նաև զուսուցիչն իմ զհոգոյ զծէր Զաքարիա սրբազն քահանայն յիշենջիք ի տէր սէռն սիրով որ բազում աշխատանք կրեց ի վերայ մէր, զոր տէր ստորուածն ամենայնի և նմա ողբրմեսցի ի միւս անզամ զալստեանն ամէն: Նաև թէ արժանի Համարիք անարժան գծաւոց զնիկողայոս մեղապարտ ծառայ ծառայիցդ աստուծոյ և զծնաւզն իմ ցաւակցարար յիշման ի փառաւոր և ի սոսկալի ատեանն ...» ևայլ:

Ներքին կողմին վրայ մատիսու: «Բարեբախտութիւնը ունեցանք տեսնելու այս ընտիր և սուրբ մատեանն 1887 Հոկտեմբեր 17 Բերդակ: Պօղոս Պաշտամ Բալուցիցի»:

Նիկողայոս զրիչ, որ ինքնինք այլուր Մելանաւոր կը կոչէ, բազմալաստակ զրիչ մըն է որմէ երկու տասնեակ և աւելի մեռազիք հասած է մեզի: Զեռազիքը ժամանակին հաւանարար արծաթապատ էր:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

(Շար. 1)



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԱՆՑԻՑ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔԱԶԱԳՈՐԾՈՒԹԵԱՆՑ ԽԱՐԱՊԱՂՑԻ ԽԱՇԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ

(Անտիպ)



Լոս Աննելասի Գալիֆորնիոյ Համալսարանից հայերէն ձեռագրաց նոխ հաւաքածոյին մէջ կը գտնաւի «Ժողովածու» մը, որ, ի միջի այլոց, կը բովանդակէ հարապաղցի Խաչատոր Վարդապետի վիպասանութիւնը՝ հեղինակուրեամբ Խլֆայեցի Մանուկ Շահնազարեան դպրի:

Նախքան յիշեալ բնագրին հրատարակութիւնը, աներաժեշտ կը նկատենի հակիրճ տեղեկութիւններ տալ ձեռագրին և անոր բովանդակութեան մասին:

Մատեանը գրուած է քուղրի վրայ և կը բազկանայ մատիտով համարակալուած 190 էջերէ: Ձեռագրին մեծութիւնն է $21 \cdot 5 \times 17 \cdot 5$ սմ., գրուած միասիւն նօտրգրով, իւրաքանչիւր էջի վրայ 22 տողավ: Հետազային՝ բան ձեռագրին կցուած են նաև 17 քուղրեր (էջ 203-236), որոնց մեծութիւնն է $21 \cdot 8 \times 18$ սմ.: Այս մասը ևս գրուած է միասիւն նօտրգիրով՝ տարրեր գրիչի մը ձեռնով, իւրաքանչիւր էջի վրայ 29-30 տողով:

Ձեռագրիր կազմուած է քաւին կաշիով, առջիկ և ներքնի կողենքը գրաշմագրուած են: Մատեանին սկզբանարաւրեան կայ միէշեայ գանաւոր մանրանկար մը, որ կը ներկայացնէ Խաչատոր Վարդապետ՝ ձիու վրայ նատած: Ասկէ զատ՝ ձեռագրին մէջ որկէ նկարագրուում չկայ:

Խաչատոր Վարդապետի վիպասանութեան վերջաւորութեան (էջ 27) կը գտնենք հետեւեալ տեղեկութիւնները բնագրի հեղինակին և ձեռագրի գրչութեան մասին. «...Զայս պատմագրութիւն զոր համառու ի գիր արձանացուցի՛ անձամբ անձին ականատես են եղեալ իրազործութեանց, ես անարժան մահուսի Մանուկ գափիրս Խլֆայեցի Շահնազարեան, հանգուցեալ Յօհաննեսի որդի, որ այժմ ի սուրբ Կարապետի երաշալի վանս, որ ի Կեսարեայ...»: Ձեռագրին յաջորդ բնագրի վերջաւորութեան ևս կայ հետևեալ յիշատակագրութիւնը. «Գրեցա և բաղդասեցաւ ընդ բուն օրինակին, որ ի սուրբ Կարապետ Կեսարիոյ, 1836, օգոստոս 25. ձեռամբ Խլֆայեցի Շահնազարեան մահուսի Մանուկ դպրի» (էջ 74): Այս տուեալներէն կը հետևեցուի, թէ «Ժողովածու»ն գրուած է Խլֆայեցի Մանուկ Շահնազարեան դպրի ձեռնով 1836 քուականին, Կեսարիոյ Ս. Կարապետ վանին մէջ:

Սուրբ համառուակի կերպով կու տանք ձեռագրին բովանդակութիւնը.

Էջ 1-28. Վիպասանութիւն անցից և պատմութիւն քաջագործութեանց Խարա-

պաղցի Խաշատուր Վարդապետի . և որ և վկայօքին վասն որ ոռ Քըր ըիստոս հաւատոց կատարումն բարի մահուան նորա և գասաւորւթիւն նորա մնաց նահատակա . «Գիտել արժան է աստանօր . նախ պատերազմն . որ ի հաւատոյ մասին կրկին սումանի ի քաջուսումն վարդապետաց . . . » :

Էջ 29—74. Միլիթար քահանայի Սկեռացոյ որ պանդխոտութեամբ ի Սկեռիայ , Յաղաղոյ համապատութեան երկուսանի առաջելոցն առաջեալ բան ընդդիմ այնոցիկ՝ որ նուազ ասեն զմետասանսն ըստ իշխանութեան բան զպրո : Եւ որք զպատիրաբն մեծ ասեն քան զկաթուղիկուրն : Ի Հրամանէ թաղաւորին Հայոց Հեթմոյ . և յորդորմանէ եպիսկոպոսին կատաղօնոյ : «Անհասանելի ի անծանօր ծոցյ ծնունդ միայնոյ հօր միածինն որդի . . . » :

Էջ 75—88. Գլխաւոր պատճառ որոշման եկեղեցւոյն Հռօմայ ի Հայոց . «Պարտ է ամենայն քրիստոնէից հաւատալ և խոստվանիլ զառաքեալ Պետրոս . . . » :

Էջ 89—104. Զուարճալի կրթութիւն քերականութեան իբրու պատերազմ մասանց բանի ընդ միմէան վասն նախազանութեան : «Զիմանալի սահմանն ժ. ին . կոչեցեալ եերբոզութիւն կային ուր տիրապետ . . . » :

Էջ 105—139. Հարցումն Փիլոնի և պատասխան Պրօխորոսի . «Յորաւմ ժաման կամեցաւ Փիլոն եւ պատասխանեցաւ Պրօխորոս, ի Պատմոս ի ջահաւար հազարի . . . » :

Էջ 140—167. Զուարճալի պատմութիւնք ի տառնեակ գրքուկէն հաւաքանաւ . (Այս բաժինը կը բովանդակէ երեսուն զուարեալի պատմութիւններ զրբուած արձակ ոնով . նոյնպէս երեք երկար շափածոյ պատմութիւններ . . .)

Էջ 168—169. Ամենապատիւ եւ զերափառ տէր (Պոտանաւոր) . «Բաղրմ անագործոյն . / Ցետ ֆեցելոյ զգմեզ ուրոյն . / Ի մեր ծնողաց զարովաշատ . / Եւր գանուութեան ոչ ասաց շատ . . . » :

Էջ 170—171. Յիշասակարան սենեկի երից աքրորականաց , Կարապետի , Յակուայ և Պօղոտի . (Պոտանաւոր) . «Յարափոնի և կայր բաղրմին քելադինալով . / Մեր հայրէնիք կասրեցին զմեզ ազգով . . . » :

Էջ 171. (Պոտանաւոր . անվերնազիք) . «Յօրինինուած պայծառ , յարկիս նորասանի . / Արամեանց ծագեալ , զինց արևոյ նաշանչ . . . » : (Պոտանաւորին սկզբանասաները կը կազմեն «Յալվանի» անունը .)

Էջ 171—172. Ի վերայ ութից մասանց քերականութեան . (Պոտանաւոր) . «Հանդէս կարգեան , տանան կանգնեան զարմացական . / Սեղան ջամբեան , ինչոյն կազմեան ախորդական . . . » :

Էջ 172. (Պոտանաւոր . անվերնազիք) . «Ո՞վ ուր սենեկ պատսպարամ , որոց ի եեզ բազմեցան . / Տեսեալ զիեզ միշտ սեփական՝ աստ եերքեան մերժեցան . . . » :

Էջ 173. (Պոտանաւոր . անվերնազիք) . «Աշխարհի չիք եանգիստ , չիք արդարութիւն . / Մինչ բարձեալ ի միմեանց սէր ընկերութիւն . . . » :

Էջ 173—174. Մակրեր (Պոտանաւոր) . «Ոչ է պատեն մկան զափիւ ծնանել . / Եւ ոչ արժան տոփի զմակ արտաքրի . . . » :

Էջ 174—175. Մակրեր (Պոտանաւոր) . «Ո՞ւր զեր կ կեամբ , ո՞ւր ինչէ և փառք / , Գնաց բարձան ի քէն եամայնք . . . » :

Էջ 175—176. Մուտանեսի (Պոտանաւոր) . «Ե՞կ զու զըրիչ՝ խօսեա կրկիմ , / Կաւուեա ի շար զիմաստ բանին . . . » :

- Էջ 176—177. **Մակրեր** (Ոտանաւոր). «Մի՛ կարծեսցիս քէ զուր գործես, / Շուրջ եղիրց մընալ անես...»:
- Էջ 177—181. (Ոտանաւոր. անվերնագիր). «Մանուկ զի՞նչ է որ զբեզ նեղէ, / Ընդէ՛ր իսկ լաւ և անծին պարա...»:
- Էջ 181—183. **Զարդեան աշխարհի դիպուտածք**, փոխարքարական հայկարանեալ ի Յօհան վարժապետէ (Ոտանաւոր). «Նապաստակաց երամ կազմեալ՝ ապօրինակ խօրհուրդ առնեն, / Հզվուց իւրեանց զավտութիւնի ի ձեռս ածել հետազոտեն...»:
- Էջ 183—184. **Տապանագիր** ի վերոյ Գեղորգեայ պատելոյն (Ոտանաւոր). «Ե՞ր դանահամբոյր ճայն եղերերգուաց, / Պատէ տիրութեամբ ըզդաշտ դամբանաց...»:
- Էջ 185—187. **Հաղներդութիւն մաղթողական ճօնեալ** ի նուէր տեամն Աստուածապատիւ և գերիմաստ Գօղոսի արհի եպիսկոպոսի և բարեկարգ Պատրիարքի կոստանդնովոլուցեցոյ (Ոտանաւոր, որում եեղինակն է Յովհանմէն Եղեկիսմ). «Ո՞ր Թրակացւոյն, քնար քաղցրախօս, զնիշ քաջազանց. / Գեղգեղել այսօր պանծալի վեհիդ դրուատ մեծապանծ...»:
- Էջ 187—188. **Պայքար ճակատամարտիւ** (Ոտանաւոր). «Սարսափ կրից, դաշին կենաց, այիշ ծովալ ծփական, / Ի յարտահին տեսանելեաց, ի ներգ ի խոր արհաւիր...»:
- Էջ 188. (Ոտանաւոր. անվերնագիր). «Տարօնի փոքրիկ, տարեալն անհում. / Տումն ննջող, բակենալի անհում...»:
- Էջ 189. (Թրքերէն ոտանաւոր. անվերնագիր):
- Էջ 190. (Դատարկ):
- Էջ 191. (Ոտանաւոր բրժերէն լեզուով):
- Էջ 192—202. (Դատարկ):
- Էջ 203—218. **Համառոտակի բանք յօրինակ ծանուցման.** Հանդէրձ բընարանիւք և ճեռնարկութեամբ. «Համեմարեն եղողով՝ իմաստութեամբ տայ զպատախանիս...» (Բովամբակութիւնը բրժերէն լեզուով):
- Էջ 219—234. **Գիր օրհնաւթեան** (օրինաւթեան զիրերու զանազան օրինակներ. Վերջանորութեան քուրք ինկած է):

Խնչակու վերեւ տեսանեն, մեզ շահագրզող բնագիրը, որ կը կրէ «Վիպասանաւթիւն անցից և պատմութիւն քաջազրծութեամց խարապացի խաչատուր Վարդապետիւ. . .» յորագիրը, հեղինակութիւնն է Խլիֆայեցի Մանուկ Շահնազարեամ դպրին, որում իմբնաւթիւնը անյայտ է մեր մատնագրութեամ մէջ: Մանուկ դպիրը իմեզինքնի համար կը գործածէ մահուեսի մակդիրը, սակայն անոր ուխտաւութեամբ նրաւաստէմ այցելութեամ մասին որմէ տեղեկութիւն չենք գտնենք Միրտիչ Արքեպոս. Աղաւմութիւնի Միաբանք և Այցելուք Հայ Երրուսաղէմի (Երաւագէմ, 1929) երկասիրութեամ մէջ: Մանուկ դպիրը, որ ըստ երեւոյթին անդամ էր Ալաշկերուի դաշտին մէջ գտնուած Թագաւանի Ս. Յավհաննեն կամ Խչէիխու մեծահաշակ մենասանենն է իբրև ակամատես զրած է խաչառուք Վարդապետի քաջազրծութեամց պատմութիւնը և մահուան պարագաները, ետուազային միաբանակցած է Կեսարիոյ Ս. Կարապետի ուխտին, ուր և զրած է մեր բնագիրը 1836 թուականին:

Պատմութեամ եերանին՝ խաչառուք Վարդապետի նկատմամբ մանրամասն ուռեւալներ կը պակսին մեր եկեղեցական գրականութեամ մէջ: Մանուկ դպիրի հայրայքած տեղեկաւթեան համաձայն, վանահայր Սահակ Արքեպիսկոպոսի օրով՝ խաչառուք մասուց տարիին պարսկական գրաւման տակ գտնը-

ւող Խարապազ հազարէն կու գոյ Ս. Յովհաննէսի կամ Խչքիլիսէի մենատանը : Իր ուշիմութեան և յաջողակ ընթացին բերումնով, Սահակ վահանայրը զայն կ'ըմդումի որպէս իր եռզեզաւակը, և անոր կրօնական դաստիարակութիւնը կը յանձնէ մենատանի «Ժաշիւսա» և աշակերտ գրաց, Գարուս Վարդապետին : Վերջոյն շունչին մերքն, Խաչառուրը կը յառաջանայ «Ենրքաղական արիստիր», իմ և նոր կատարած համերգ, մինչև ջառագովին բացմաց բարորա զատենարանութիւն . յես որոյ էաւ զատենան վարդապետութեան, ի Ասահակ Արքեպիսկոպոսէ, իրեն գերեւի ունի ի յառուկ ժարողաց »: Միջավայրին պահանջներուն համաճայն, Խաչառուր Վարդապետ ցյաւել ի սորա բզձիավարդութիւն և գորսորդութիւն, յարո պարապէք երրեք երրեք ըստ տեղայն գործածութեամբ », յատիսպէտ անոր համար որ Քիւրու այրումին յահախակի ասպառակաւրիւններով ծանր կորուսոններու կը մասնելք երկրին քնակաւթիւնը և պարքերաբար վամեց ինչպէս նուռ մենատանին կալաւածները կողապատի կ'ենքարիկը : Այսուհետեւ՝ Մանուկ գպիրը մահամասնօրէն կը նկարագրէ Քիւրու ասպառակներու դէմ Խաչառուր Վարդապետի կատարած սիրազործութիւնները :

Բնագրի վերջաւորութեան, Մանուկ գպիրը կը հաւատուէ քէ երկանի Պարփակի իշխան Հասան Խանը՝ Ս. Յովհաննէսի վանիք կողապտի ենք՝ կը կալանաւորէ Խաչառուր Վարդապետու և իր հետ կը տանի երկան, ուր կը փարձէ բնադատուն Խաչառուր որ ուրանայ քրիստոնեական հաւատքը և կը խոստանայ իրեն տալ ժիշխանութիւն և ալվագութիւն յառաջանալ և ստանալ զանում, որ մեծ է քան գենու հաւատ : ապա քէ ոչ երգուեալ է իմ չըզգու զեզ կենդանիի »: Խաչառուր Վարդապետ, սակայն, կը մերձէ հաւատուրաց դասնալ, պատասխանելով զյու է իմ մեռամի, քան երեւի յազգի իմում վատանում : Այս մերժումին հետևածնով, Խաչառուր Վարդապետ բանուրկուելով կ'ենքարիկը բազմապիսի չարչարաններու : Տարի մը ետք, սակայն, միջնորդութեամբ Հասան Խանի բարեկամ երկու Հայ աղաներու, այսինքն՝ Արքացցի Ասպահ Սիրութեանի և Օսկանի, Խաչառուր Վարդապետ ազատ արակուելով կը վերադանայ Ս. Յովհաննէսի վանքը : Մենատանին աւերեալ վիճակը և ուխտինին միարաններում շխառութիւնը կը հարկածըն Խաչառուր Վարդապետին, «վիրաւորեալ մարմնով կազ ուսիւք ի վերայ երկունց փայտից», շրջի աստ և անդ և նուիրաբերումներու շնորհի վանականներուն ապրուսոր հոգալ : Այս շրջագայութիւններու ընթացքին է, որ ան կը վախճանի Կորայի Ս. Դամելիի վանքին մէջ : Մանուկ գպիրը կը հաւատուէ քէ, նոյն վանքին մէջ բաղուիէ ետք, չունին վանահայրն և բարդ միարանի զոյս պայծառ ծագեալ ի իշեալ ի վերայ գերեզմանին »:

Կենագրական այս հակիրն տեղեկութիւնները կը հաստատեն, քէ Մանուկ գպիրն երկասիրութիւնը կարելի չէ, քանի տառացի իմաստով, «կայարանական զրականութեան շարքին դասել»: Արդարն, ենդինակը իր գործը կը բնորոշէ որպէս «վիխառանութիւն» հան քէ «վկայարանութիւն»: Այսուհանգերա, իր մանաքանին մէջ, Մանուկ գպիր հաւատուր Վարդապետը կը դասէ մարտիրոսներու շարքին՝ առարկելով . «...Այս հակառակ այսր փորձութեանն որ իմ մէնին ի քշնամեաց դիպի ի փոքր ինչ պատեանց եւ ընդ երշան մեծանայ, և մասն հաւատոյ անկեալ ի մէջ և ի պատմառ նօրս գրաւէ ոք ի կենաց՝ դասէ ասմէ ընդ մարտիրոսս և ընդ նահատակս, որպիսի եղին երշանիկ վարդապետու այս Խաչառուր . . .»: Խոյնպէս, իր վերջարանին մէջ, Մանուկ գպիր կը հաւատուէ, քէ Խաչառուր Վարդապետ ցյանձն էաւ զնականութեամբ, ոչ միայն է ենքմամբ արեան, այլ համաւոր չարչարանու գմբան յանձն առեւլ, որ է գործ մեծ ի սէր Քիւրուսի . . .»:

Պէտք է դիտել տալ, թէ մեր «վիպասանութեան» բնագիրը ծանօթ չէ հղած Հրաշեայ Անտառանին և թակոր Մանանդեանին, առոնց խմբագրութեամբ հրատարակուած են 1885-1843 բուականներսւն քրիստոնէական հաւատքի համար զգեստած Հայ մարտիրոսմերտն վկայարանութիւնները (տե՛ս Հ. Անտառան և Յ. Մանանդեան, Հայոց նոր վկանները, 2 հատոր, Վաղարշապատ, տրապարան Ս. Էջմիածնի, 1902): Խաչատուր Վարդապետ սիրագրութիւնները, ոսկայն, բոլորպին անձանօթ չեն մնացած: Հ. Անդրիս էփրիկեան (տե՛ս Բընաշխարհի Բառուարան, Հասոր Ա, Վեհետիկ, 1903-1905, էջ 359-360), «Բագաւան կամ Բագուան» յօդուածին տակ ենունեալ ակնարկութիւնները կ'ընէ Ս. Յովիկաննեկը (= Խչքիլիկ): Վամեին կապակցութեամբ: «...Ովտասկն տեղ մը լինելուս եամար թէկ շատ նույներով կը նոյնանար և կը բարգաւանէր վանքն, բայց միանգամայն շրջապատճակ լինելով Քրդերէ, շատ անզամներ կը կողովառուէր: Անցած ջարու մէջ ևս տուշ տիխուր գետքերու եանդիսանես եղած է վանքն, և ամբաշշէն լինելում պատմառու, շրջակայ գիւղերու բնակիչներն ևս վանակի ժամանակ իւր մէջ կ'ապաստանէին: Երևանի խանի 1821ին Ալաշկերտի վրայ արշաւած ժամանակ, մեծ դեր խաղաց Ճունանցի հաչատուր վարդապետը, որ օգնական էր վանաց առաջնորդ Սահակ եպիսկոպոսին. ոչ միայն մէջը ապաստանողները այլ և գերի բռնուղներն ազատելով. քէպէտն յետոյ բռնուեալ տարի ու կէտ երկանի բանոր մնաց. բայց վերջը ազալիցաւ: ...1808 բուհն 1829 սարիներու մէջ հանդիպածներն երկարուէն զրած է Պօղոս Յ. Մուրաստեան...»: Վերջին հանադասութենէն դասունով, հաշատուր Վարդապետի վերաբերեալ տեղեկուր իւնեները էփրիկեան քաղած ըլլալու է Մուրաստեանի գրութենէն: Դժբախտաբար, էփրիկեանը անհրաժեշտ մանրամասնութիւնները շի հայրայր եր Պօղոս Յ. Մուրաստեանի ինքնուրեան և անոր հեղինակած երկասիրութեան մասին: Սոյոյ չէ նաև, թէ այս աշխատուր թիւնը հրատարակուած է կամ ոչ: Այս կամ այն պարագային, Մուրաստեանը արդեօն ծանօթ եղած է Մանուկ դարի «վիպասանութեան». մեր կարծիքով՝ ասիկ հաւանական չի թուիր:

Բացի հաշատուր Վարդապետի կեանքին, սիրագործուր եանց և մանուած պարագաներու, վերաբերեալ շահեկան տեղեկուր թիւններէն, Մանուկ դրաբի հեղինակած «վիպասանութեանը» կը հանդիսանայ նաև որպէս պատմական կարեւոր սկզբանդրիւր մը: Այս վաւերազրին մէջ հետաքրքրական տուեալներ կան Օսմաննեան և Պարսկական տէրութեանց միջն ռազմական բնդիարումներու, Քիւրս իշխաններու և ասպատակներու բռնաբարութեանց, և վանական հաստատուր թիւններու, յատկապէտ Բագրատին Ս. Յովիկաննեւ մենասամին և վանականներու, կրած ունաճուր թիւններուն մասին:

Համոզաւած որ մեր բնագիրը շատ կարեւոր սկզբանդրիւր մը է Հայ եկեղեցական գրականուր եան և Մերձաւար Արևելքի հաղաքական պատմութեան համար, զայն առաջին անզամ ըլլալով կը յանձնենք շահագրգուռող պատմաբներու և հայագիտներու ուշադրութեան:

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԱՆՑԻՑ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔԱՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԽԱՐԱՍՊԱՂՑԻ ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՐԴԱՊԵՏԻ ՍՈՐԻՆ ՎԱՐԱՄԱՆ ՈՐ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՀԱԿԱՏՈՑ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԲԱՐԻ ՄԱՀԱՆՈՒԱՆ ՆՈՐԱ ԵՒ ԴԱՍԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՆՈՐԱ ԵՒ ԴԱՍԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՆՈՐԱ

ԸՆԴ ՆԱՀԱՏԱԿԱՆ

Գիտել արժան է աստանօթ. նախ պատերազմն, որ ի հաւատոյ մասին

իրկին սահմանի ի քաջուսում վարդապետաց . առաջին որ գասն հաւատոյ . և երկրորդ ընդ անհաւատութ :

Պատերազմն հաւատոյ այս է որ ընդ հակոռակիլ թշնամոյ վասն քրիստոնական հաւատոց մինչ յոտանդ կայ առաջի . որշափ կար իցէ ջանալ տրժոն է վանել զիանեալոն խաչին Քրիստոսի և ներգործութեամբ իսկ դինու զնել զանձն ի վասանց մահու և փոխանակիլ դիեանս ընդ մահուն Քրիստոսի համարձակ խոստավանելով զանուն նորա . այս է կատարեալ սէր որ մերժէ զերկիւց որոյ սակ իսկ և զան ունի խոստավանիլ Քրիստոս առաջի հօր իւրոյ որ յերկինս է ընդ անսուտ վճռոյ աւետարանական վարդապետութեան :

Իսկ ընդ անհաւատու այս է մինչ հեթանոս տէրութեան ոք . (որպիսի եղել բազմիցս ի ժամանակին պարսից և կոսչափից տէրութեանց) հալածէ և նեղէ զհաւատացեալ դարձուցանել և առաջ ուրանալ զհաւատոս նաև յայնժամ ոչ միայն պատերազմաւ վանել զթշնամին է քաջութիւն , այլ և կատարին բարի մահաւամբ ի պատճառու հաւատոց , ի նահաւակութիւն ի փառս կոսութանու :

Իսկ տրտաքոյ այսոցի երկուց ճանապարհաց է միւս ևս ինքնին առանց ուրուք գրիպելոց վաս նա ինքն հետամուռ լինի զգրուու զթշնամին ի վերայ իւր . բայ ամաց իւրաց համարելոյ թէ ընդ նահաւատու ունի դասի առն է ի գումը . և բայայսրայ կամելով ասել յիմարութիւն յորոց զբազումս յամք եթէ միջամուի լիու . հայուրին և նահաւատոն զանհաւատոս ի փոքր փորձութեանց դիմիւրց զայս ճանապարհ ո՞չ կամի կատուած ի տարախարտուց մասնել զանձն ի մահ :

Այլ հակառակ այսր փորձութեանն որ ինքնին ի թշնամեաց դիսի ի փոքր ինչ պատճառաց և ընդ երդալին մեծանայ , և մասն հաւատոյ անկեաւ ի մէջ և ի պատճառաց նորա զրաւէ ոք ի կենաց՝ դասէ ասեմ ընդ մարտիրոսս և ընդ նահաւատու որպիսի եղել երթանիկ վարդապետս այս թաշատուք՝ զորժէ ունիմք պատճել զծննդենէն զարդենէն զքաջութեանց , և զմտհուանէն նորա եւ որ մեծն է հրաշիւք իմն զծագմանէ յուսոյ ի յերայ նորաւ :

Պ ա տ մ ու թ ի ւ ն

Ի ցանկալի մենաստանն արեւելեան Բագրեանդ առձայնեալ և բայ սովորականն լվուի Խւչքիչինէ մեծառուակ վանք , որոյ ի կառավարութիւն և ի գերատեսչութիւն նստէր Սահակ Արքեպիսկոպոս :

Ի ժամանակի նորա հետեցաւ թաշատու վարդապետ ի կրօնաւորութիւն ի նոյն փերոյիչեալ վանս մանուկ տիոք , ի պարսիկ յաշխարհէ ի նարապաղ քաղաքէն և ի տիս անդ մատաղ հասակի զմուխիսեան թերէր օրինակ կայառ դիմօք :

Տեսեալ զորայ ճննդական միտս և զուշմութիւն և զյաջնողակ շարժ մունս վանահօրն , կալաւ իւր ինքեան հոգեզաւակ . և պատուիրեաց միանդամայն զիարուստ վարդապետն (որ էր քաջիմասս և աշակերտ դրոց .) իրը զի առ սոս նորա կրթեսից լսու յասին գիտութեան , որոյ հովանաւորութեամբ անցանէր զանձանէր գրէ թէ յատաջանեալ ի լաւ անդք երերթողական արհեստի . հին և նոր կոտակարանօք հանդերձ , մինչն զատագովել բազմաց զատենարանութիւն . յեւ որոյ էառ զատարիճան վարդապետութեան , ի Սահակ Արքեպիսկոպոսէ , իրը գերեւելի ուն ի յատուկ քարոզչաց :

Եւ ի վերայ այսր ամենայնի բնութիւնն որ երբեմն երկոքումբ տայ թեւոք թռչչի հոգենորաւ ասեմ և մարմնաւորաւ , յաւել ի վերայ տորա գծիավարժութիւն և զորսորդութիւն , յորս պարապէր երբեք ըստ տեղոյն դորժածութեամբ :

Ասացի ըստ տեղոյն, վասն զի երկիրն այն որպէս ստուգեալ եմք ի բազմաց ականատես անձանց, չթողուն հանդարտ քիւրտ այրուժիք. մանաւանդ տան բազմից վնաս մինչև կողոպտել զինչև վանուց. սրոց ի պատճառս ըստ մեծի մասին կրթեալն էր այս Խաչատուր վարդապետ դիւր ինքն որոց ընդդէմ յոլով քաջութիւնս արար որպէս ունիմք պատմել փոքր ի շատի:

Արդ յամի տեսան 1814:

Մահմուտ բոշխն որ իր իւր իւր սեպհականեալ նստէր ի Շաւարշան, որ է Բաեազիս քաղաք, տեսեալ զմարդադիմի և զազդի ազգի անդրաւութիւն Մարաց գոր հանապազ զործէին յայտնի եւ ծածուկ երթեւեկ ճանապարհորդաց. ոյր սակրս չհանդուրժեալ ընդ ոճրագործութիւն նոցա կալաւ զգինառուս ի նոցանէ զիկուսալ աղայ և զիկի աղայ, և եղ զիոսս ասստիկ կապանօք ի բանտի զամ մի բոլոր:

Եւ ի լինելն այսր այսպէս, գթացեալ յԱստալ աղայն՝ աղատեաց զնա. և զիւս զիկի աղայն քանի մի երեւի արամբք իսկ նսդգամահ արար:

Եւ ի յաջորդի միւսոյ ամի մեռաւ Մահմուտ քաջ բոշխն. և կալաւ գուեղի նորա կրտսեր որդի նորա, որ էր այր և զոյր իրքն զհայր իւր, որ տեսեալ թէ ըստ առաջնոյն վնասս բարումս տանեն Մարգք՝ որոց թամկեալ էին ըզկողմարք լերանց, հայ ազդի անձանց և որոց ի ճանապարհի վաճառականաց: Ես հնարիւք իմն կանուլ զարս վեց երեւելիս Մալպաթի՝ որ է Պէկ անուանեալ ի նոսա. և հրաման արար սպասաւորացն իւրոց վետս արկանել յոտս նոցա և րաթիւք՝ ընդ ներբան ոտից նոցա, և այնպէս այսր և անդք շրմնցոյց և մահացնց զնուց:

Իսկ մինչ բոշխորդի Մահմուտ փաշային մեռաւ ի միւս ամին, յաջորդեաց ի տեղի նորա նսդգահի(մ) փաշայ, եղբայր Մահմուտ փաշայի, որ էր թէպէսե այր Հըսկայ և անձնեայ՝ բայց ըստ քաջութեանն ոչ իրքն զնախնիս իւր: Ուստի յաւուրս սորա ապստամբեալ Մարաց տարածեցան և ընդարձակեցան նախի գիւղն Խլթոյ, ուր կային շտեմարանք և ամբարանոցք ցորենոյ բոշխին, ուր պատերազմեալ առին զառ և զապուք. և սպանին քրազումս, յափշտակեցին զցորեանն. և եղեւ զիւղն այն սոնակովի ի նոցանէ, և աւերակ:

Եւ այնպէս ցրուեցան ի շնոս և ի զիւղօրէս և ըստ կամաց իւրեանց կողապտելով լուռէն զցանկութիւն սրտից իւրեանց. և ո՛չ այսափ միայն՝ այլ և միաբանեալ որ ի նոցանէ գլխաւորք Ապտալ աղայ Սիսպացի, Հիւսէն աղայ Զիլանցի, Ղասըմ աղայ Հայտարցի, և Սալիք աղայ Մէմանցի: Սոքա սկսան աւերել և խանգարել զինեղծ բնակիչս և զերկիրս, մինչև առ ահի երկիւղին ոչ ուրուք զնալ այսր և անդր:

Իսկ ի ծիւճան անուանեալ գիւղ՝ յոր բերեան էր Ավասկիլ թագաւոր ըզկաշափայն, բնաւ իսկ ոչ կարացին զմուռտ ունել, ընդ որում և որ ի նմա եկեղեցին յանուն սրբոյ Տիքամօրն էր կառուցեալ հրաշեւք իմն երեւեալ ի կերպարանս կնօթ, ընդ իւր նաև երիտասարդ մի նստեալ ի ծի, վանէին փորս միանդամ մտանել կամէինն ի թշնամեաց. և որչափ արձակէին սոքա յարտաքստ հրամանս և ուուրս, վերադառնայր հուրն առ ինքեանս, վնասէր և հրգէհէր զնուսա:

Եւ յաւուր միում եկին արք իրքն հարիւր և տասն ի Մարաց, և հարին վիրանս առ եզր Պօթուն Ջրոյ, և սկսան վնասել զարտորայս, և հովիւր նոցա և սուուն արածել խաչանց իւրեանց ի կրտսավատի պարակն վանուց:

Նա յայնժամ գործակալք և մըշակք վանուց աղաղակ բարձին զնօքօք ի քիւրս լիդու, և ասեն. «Է՞յ քուրմաննէ քէր հուն չըմայտըմէրինին զելիքան», որ է ասել, «Ո՞վ էլ Մարք, ընդէ՞ր է ձեզ արածել զհոսս յարտորեայս մեր»:

իսկ նոքա թէ «չէ այս ագարակ ցորենոյ և դի՞նչ վնաս իցէ թող արածեցին ոչխարքէ» :

Եւ իրբի տեսին մշակքն եթէ շանսան ինքեանց՝ եկեալ ի վան և պատմեցին վանահօրն և Խաչատուր վարդապետն զայը լուեալ վերստին առաքեցին և ասեն՝ «ի բաց հանէ՛ք գոչխարսդ» և Հովհիք ընդդէմ նոցա պատասխանին, «քարձէ՛ք դուք յառաջոյ ոչխարացդ զարսո ձեր զի մի արածիցին ոչխարք մեր» : Իրբն ետեւ Խաչատուր վարդապետն եթէ ոչ ինչ օգտեցաւ, ի բաց հան դիեղարն, և եղ գդիլովին գծիքանեայ փիսկ և առ զովորականն զին, և նստեալ յիրվար, զդիմեաց ի վերայ Մարացն :

Զայն տեսնեալ թշնամեացն թէ զայ ի վերայ նոցա քաջ ոմն նստեալ ի ձի, և առողջի գիտացին եթէ հանդերձեալ են ըմպել զրան, յապճեպս ընթացւոյ հասին առ որս ի վրանի մեծամեծք և գլխաւորք նոցա, և բողոք բարձին եթէ «հարին զմեղ. աշաւասիկ թողեալ զնուս մազապուրծ ճողովրեալ հազիւ ժամանեցաք այսր» : Եւ որպէս կարծեմքո ոչ թողին բնաւին յոչխարացն զորս ոչ զանեցին և վիրաւորեցին :

Եւ իրբի այս եղի՝ էր անդէն ի Մարաց ոմն համբաւաւոր ի քաջութեան փութով առ ընդ իւր զարս իրբն քառասուն, ընթաց առ Խաչատուր վարդապետն, ուր էրն տեսնանել զերկոցունց քաջաց զմիմեամբք հանդիպումն աստի և ունետի. մինչև ըստ հեծելոցն ի նուսա արիականաց . և նժոյդ երիվարաց անզամ կուրծ դիրծովք միրձիլ և Կոլի. ուր քաջ զինքն ցուցանէր Խաչատուր վարդապետն առ զմիւն. մինչ որ ի ձեռին ունիք տիգաւ խոցեալ զամուածիլո նորա հանդերձ երիվարաւն տապաստ յերկիր արկանէր կործանէր . և որոց ընդ նմա էին, տեսնեալ զայն և ընդ իւրեանց առեալ զոչխարս փախստեայ հաղիւ ժամանեցին ի վրան իւրեանց :

Իսկ այրն դիրաւորեալ յիտ ժամանակաց ինչ իրբն ողջացաւ՝ եկն ի վանս այյով իւրիք պատճառու, առ ի տեղեկանալ թէ ո՞յ այս իցէ որ վիրաւորեացն զնու : Եւ այն ինչ իրբն գիտաց եթէ Խաչատուր վարդապետ է՝ երգմանը ասէր եթէ չյօրէ յայնանէ՝ յորում դիպէր ինձ ձիավարել և կոուիլ ընդ բարձաց, ո՞չ ոք բնաւ կարաց ինձ համբաւնալ զձեռն և շարժել զդէն, արդ որո՞յ յաղթեցիր զօրութեամբ» : Զայս տասցեալ յորդորէր զնա բարեկոսմանալ ընդ նմա . իսկ Խաչատուր վարդապետ ի ցոյց և ի նշան այնր կապակցութեամն՝ եռ ցնա զմետաքսեայ զեղեցիլ լոգիկ ինչ վասն պահելոյ զմէր մինչն ցմահ :

Եւ մինչ ինչէր այս յամի տեսուն 1815:

Պատմաս առեալ Մարաց ազգին յայսմ իրագործութեան յաւուր միւս ի կիւրակէի այս ինչ զուուրք պատարազին կատարէաք վլորհուրդ, թափեցան Հովհիք վանուց ի դուռն սրբոյ տաճարին, եթէ քառասուն արք ի գարանի կացեալ զնուս վանուց վարեցին ի նպաստ [հաւանաբար՝ նպատ] լիոնէ անտի:

Զայն լրտեալ Խաչատուր վարդապետի՝ շնամուրժեալ առ ի հաներ զոր զդեցեալն էր զշապիկն, պատառեաց յառաջն կողմանէ և առ ընդ իւր զերկուս, զՅավէիկ և զլսոն, և զգեցեալ զգէն իւր փութացաւ երկիվարաւ և հասեալ ըլլուք պատերազմէր բարդումն, էնար սպան զգիս երիս ի թշնամեաց :

Եւ այսու ո՞չ բաւականացեալ յաւել առազակէլ. «ո՞վ զ աղդք Մարաց՝ ժամ է այսունեալ ինձ ուղղել զշապանն առ ձնզ. և սկսաւ ի ընդուռ նոցա քարբառել և ասել, «Խօսէ՛ չըհասովով իրօց զգ տղըը պըզէ սէրէ ժըվոյա նատարմ» : Տէր կայ լիցի Աստուած յաւուր յարմէկ զի մինչչև իցէ ժեռնեալ ինձ շէք բաւական առնուք զշարսդ իմ : Յաշնամ սուսդի ծանեան Մարգն եթէ չն կարօ ընդդիմանալ՝ թողեալ զնուսն զնացին փախստեայ :

» իսկ Խաչատուր վարդապետ՝ ընդ իւր և կրկու թիկնապահք ժողովեալ

զնաւուն ածին գէպ ի վանս հեռի իրքեւ ժամաւ միով, ուր հասին իսկ և ի վանացըն ի թիկունս նորա յօդնութիւն :

Ուր գաբձեալ տեսին եթէ զունդ մի այրուճի ի Մարաց անոտի զինուորեալ իրին անձինք հարիւր, զան և դիմեն ի վերայ իւրեանց՝ զարձոյց յայնժամ նաշատուր վարդապետ զերիվար իւր իւրախոյս բառնայր և յորդորէր զիւրսն, մի՛ ամենենին թիկունս զարձուցանել և մի՛ երկնչիլ զի ահա արօր է ասեր՝ ցուցանել առն զքաջութիւն իւր, ուր հասանէին իրքն զկատաղիս և թնամիք նոցա ձայն բարձեալ առ միմեանս և սկսան տալ պատերազմ ուր տեսանելի էր զարիւական մրգնունս նաշատուր վարդապետի, և զանինչէր արշաւումն մտանէր իւզամիք յարձակէր և իրքն մանգուղաւ խուզէր յաջ և յահեակ՝ զոմանց յի՞րաւորեալ զգլուխս, զայլոց զմարմինս արհամմր թաթաւեալ և զկիսոց զերիվատը ըստ վտանգեալ :

Իսկ Մարացն ոչ կարացեալ զգէմ ունիլ, զարձան ընդ կրունկն, Խաչտուր վարդապետ անմիսա իւրայնովքն առեալ զհամու ոչխարաց դարձան ի սուրբ վանս առ մեծաւոր ծերունաղարդ հայր վանացն և առ կրօնաւորս, ողք զազօթն ստէպ մատուցանէին վասն նոցա առ Աստուած և առ սուրբն Գրիգոր :

Զայր քաջազործութիւն Խաչտուր վարդապետի տեսեալ Մարաց և սրոմուհալ ստուգիր եղին այնուհետ զմուս, ի վերին երեսս շրջնով գէտո ոչխարաց վանուց Հնարիւք իմն ի դէպ ժամանակի կալուուլ զնոյն ինքն Խաչտուր վարդապետ, որ և ի նոյն ժամանակի տասն արսմբ շրջէր յզգուշութիւն հստին :

Եւ եզկ օր ինչ՝ մինչ ոչխարք վանուց և գիւղից նստէին զիսորչական առ եղր զեառյն Եփրատայ, յերիս յառաջս բաժանեալ Մարաց կէս մի՛ ի վերայ հոգի վանուցն, և երկուքն ի վերայ գիւղից ի յափշտակել, Նա յայնժամ Խաչտուր վարդապետ քան մի արամբք զէտեալ նոցա դարձոյց յոչխարս վանուց. իսկ ի միւս կողմանէ վարեցին զնոսու գիւղից, և զնախիրս վանուց յափշտակեցին :

Եւ յետ այսր ամենայնի շրջակայ Մարք որք տեսին և որք լսեցինն զայն, զարձան և եղեն թշնամի առ Խաչտուր վարդապետն. զտիւ և զդիչեր խորհէին ընդ միմեանս ժամ պարապ զտանեյ ածել ի ձեռս, և սպանանել :

Զորմէ քաջ տեղեկացեալ վանահօր, եթէ չունի նա ապատ մնալ յանօրինաց՝ խորհեցաւ առ ժամանակս ինչ թոյլ տալ զնա և հեռացուցանել յաչաց նոցա մինչև թափեացին զթոյն ի սրտից իւրեանց :

Վասն որոյ յարմար իմն պատճառաւ թէ կամէ ի պէտս վանուց ժողով առնել, առաքեալ զԽաչտուր վարդապետն ի մեծն Պօյիս առ Պօղոս պարիսարդ. որ և բազում մարդապիրութիւնս եցոյց նմա, և ետ ցնա կոնդակ և հըրաման ըստ կամացն շրջէլ ուր և կամիցի :

Այլ արդ՝ յետ բարուօք աւարտելոյ զգործ իւր Խաչտուր վարդապետի, և արդինաւորութեամբ վերագառնայոյ նորա ի սուրբ վանս՝ ուր անցանէին ամք իրքն զշորս : Հասան իսան, որ նստէր ի յերեան, ելանէր իսազայր երեսուն և երեք հազար հեծելովք, և բազում պատճառաւութեամբ ի վերայ Աէլիմ բղեշին: Եղն եկաց և նստաւ առ ժօտ վանուցն, յեղր գետոյն Եփրատայ, և սկսան զօքքն ցիր և ցան այսր և անզը յափշտակութեամբ վարիլ:

Առաքէր վանահայրն ազգել բգեշին եթէ չնորհ մեծ առնէ դնելով ի մէջ վանուց այր մի ի գլխաւորաց յիւր կողմանէ ի պահպանութիւն վանուցն. որ իսկ և իսկ առաքեաց պահպան մի՛ Սահրէնկ անուն քանի մի արամբք, որ նստահալ պահէր և կեղծաւորութեամբ վարէր ընդ մեծաւորն մինչև երեկոյ, սւատի կամեցաւ մեծաւորն պարզեօք շահել զնա փոխանակ կտրծեցեալ երախտեացն. ուստի և այրն որ զմտաւ եղեալ էր կողոպտել զիանս, առ երեսս մարդապարութեամբ չկամէր ընդունել. առ որ բազում ազաշամս մատուցին վանա-

Հայրն և միաբանք, իսկ նա թէ «փոխանակ պարզմի բաւական է ինձ աղօթք ձեր» :

Զայս առացեալ յանիրաւս մտարերեալ լինէր անօրէնն . և խօսէր ի պարսկական լեզու իւրայնոցն և տայր ամրափակել զդրունա որպէս թէ կամք են նմա ի պահպանել զվանս . և պատուիրէր գոռոյշ կալ մինչեւ յառաւօտ : Եւ ընդ առաւօտն՝ յելանել զօրաց բանակին և մեք զնամք ասէր ընդ նոսաւ :

Եւս այսորիկ ասէր ցցոր իւր . «արդ երթիցի իւրաքանչիւր ի սենեակ իւր, և մի՛ ոք մնասցէ ասս դի բանք են ինձ լուեկայն ընդ մեծաւորն և ընդ Խաչատուր վարդապետնք : Եւ իրքն կատարեցաւ հրամանն, և մեծաւոր և Խաչատուր վարդապետն և այլ և երիք վարդապետք նստան ի գոււռն եկեղեցւոյ յապառով տեղով :

Նա յայնժամ պատուիրէր սպասաւորացն իւրոց ի պարսիկ լեզու, ըզ կուշանալ երկոցունց գրանց . մի՛ ումէք մտանել և ելանել : Զայս ասելն՝ ակնարկէր կալնու զմեծաւորն և զմաշատուր վարդապետն և զայլս : Խօս սպասաւորքն զմանարար կուտեալ զգիւոյլ նոցա հարգամտէին աքցի բանցի, և զծածուկ անդամն և զամորձին նոցա սաստիկ ուրբեալ՝ տային աղաղակել :

Խօս Խաչատուր վարդապետ ճարտարութեամբ իմն փրկելով դինքն աղաչէր զնոսա գօնէ թոյլ տալ ծերունի գանահօրն, և ասէր՝ «զի՞նչ և կամք են մի՛ տացուք» : Եւ նոքա ինդրէին զհարիւր քանակ . և մինչ գնաց Խաչատուր վարդապետն՝ սոքա շրջնցան այսր և ամեր և ի սենեակս, և յամենայն վայրոյ յորս կային պատուական զարդք սենեակս բառ տանելոյ իւրեամց կողոպտի . և քառարուն ևս ոչխար առեալ ելին փութով ի բանակն :

Եւ իրքն այս եղի՝ դրեցին առերսանօք առ Հասան խան և ի ձեռն երեւելի ազնուորդուոյ միոյ որ բարեկամ էր ի Մարաց, ծանուցին եթէ առյդ Մահարէնի, զոր առաքեցեր ի պահպանութիւն վանուց, այսչափ ինչ զնաս գործեաց . և կողոպտեաց զորոր սենեակս և թողում զբարում անց զորս ընդ մեզ և չարշարեաց զմեզ :

Եւ ի լսէլն զայս ամբաստանութիւն Հասան խանին, կոչեաց զլաւէրէնկն և ասէ՝ «զի՞նչ չարախօսութիւնդ այդ զբէն . զի՞նչ զործ անխայէլ գործեցէր . ևս զեղի առաքեցի ի պահպանութիւն վանուց ի թշնամեաց . արդ՝ փոխանակ այնր դու եղեր կողոպտիք» : Խօս նա յողոքս անձեւալ սնուտի աղաշանօք ասէր . «Ես զմի ինչ ի վնասելեաց ամեննին ոչ ցուցի նոցա . բայց դիտացէ տէրդ իմ եթէ ի պէտս օպասաւորաց զերիս ոչխարս առի, և այն մանաւանդ ինքիանք իսկ ետուն ի չնորհն ձեր տէրութեան, և եթէ այլ ինչ զործեալ է իմ չար՝ առ նոսա եկեցցին և յանդիման լիցուք միմեանց» :

Նա յայնժամ ի վերին երեսս բարկացեալ առ ընթեր Մարաց, ի վերայ Սահրէնիի, և սրբամտեալ ի սրտի ասէր . «Եթէ լինիցի ինձ ողջամբ վերադառնալ ի Մըլչոյ, չթողից գքար ի քարի վերայ, և մի՛ ոք զիտացէ ընաւ եթէ կա՞յր տննդր շինուած, և անհետ արարից զտեղի վանուցդ» :

Զայս առացեալ իսազար զնաց ի վերայ Սէլիմ բդէշին Մշոյ, ընդ ոք պատերազմեալ յաւարի էտա զրազում ինչ երկրացց և կոխան արար առ հասարակ զգիւղորայս, և զրազումս ի նոցա սպան, և յաղթեյոյի նկուն արար բզրդէշին տեղոյն, և զյուլովս յերենիք Մարաց զերի առեալ ընդ իւր դառնայր վետինին ի կողմումն մեր :

Եւ լուեալ մեր զգալուսա նորա, որ եղեալ էր զմտաւ կանուփ իրքն ըսթունաւոր իժս թափէլ զմազդ իւր առ խնդնալի վանս և առ բալոր միարանութիւնս : Նաի առ Աստուած ապաւինութեամբ, գրեցաք ծանուցաք թուղթով առ Մըրազան Եփրեմ կաթուղիկոսն, եթէ «Հասան խան և որ ընդ նմա Սահրէնկն հաստատուն եղեալ են ի մտի աւերել և խանդարել զվանս, առաւել քան զառաւ

ջինն, զոր անիրաւութեամբ գործեցին. արդէ՝ զու ո՞վ սրբազն, այժմ կամք յերերի, տե՛ս փութով զնար սորա և կանխեա՛ գրութեամբ իւլիք յօդնութիւն ժեղ. որ ըստ անենայնի ի նեղ անկիալ չունիմք ապաւինութիւն յուստեքէ, բայց ի քէն, և արդ ժամ է քեզ զհայրանադ ցուցանել զինամ» :

Ի լսել Սրբազնին զայս աղերսանն առաջնորդին և միարանից, փութով զրեաց առ Հասան խան և առ Սահրէնկն, և ի ձեռն Հազար եպիսկոպոսին առաջեցաց, յօրինակ զայր :

«Ալմենազոր գորութեամբ Տեառն գորացեալ քաջահամբաւ յաղթականի ի պատիւ մեծութեան խնդալ :

«Գիտէ այր քաջ կառաւարել զաշխարհ ամենայն առաջնորդութեամբ ձեղապիսի մեծազօր տէրութեան զոր տեսանեմք և մեմք, «որ յամենայնի ընդ տարածեալ և սփռեալ գորութեանդ և իշխանութեանդ, ունիք և զգութիւ վերայ հասարակաց, որպէս և ներկայ իրազործութիւնք զոր ցուցիք առ թշնամիս ձեր յաղթութեամբ, ի պէտս հասարակութեան, որպէս զի բարուօք և հանդիսաց վախեցն ջառագոլութեամբ մեծահամբաւ անուան ձեր :

«Արդ՝ որպէս ի բարեկամական սրտի մատուցանեմ աղերս առ ձեղ ի վանո Բագրեվանդայ աղքատիկ բնակարանիդ, մի տալ զօրացդ համարձակ առանց Հրամանի ձեր մուտ և եւ առնել զվայրօքն և վնաս ինչ հասուցանել, որով առեմ թէ և ոչինչ օրուտ յայնպիսի խոճալիք արանց. բայց ի նուազ ինչ վնասուէ և ի սակաւ ինչ առթից՝ արաստ արկանի արիսկան քաջագործութեանցդ. և ձեր տէրութեան և իշխանութիւն անուանարկ լինի. ուստի յայսպիսեաց դրուզութեամբ և ևս ունիք տերամբ բարձրանալ և առաւելու. վասն որոյ որ ինչ զըթութիւն ցուցանէք վերոյիշեալ վանուցդ և միարանից՝ վերաբերին այն ամենայն առ մեղ՝ զայր արարեալ չնորդ մեծ ցուցանէք մերումս նուասուութեան որ մեք ի ընէ բարեհացակամ մեծափառ ինքնակալութեան ձերում. ողջ լեր ի յամայր ամս փառաւոր տէրութեամբ,

ի ցնծութիւն արտի Եփրեմ

նուաստ կաթողիկոսիս ամենայն Հայոց»

Եւ եղեւ մինչ ընթերձան զի՞ուղին հասան խսն և Սահրէնկն, կոչչեաց վերստին Հասան խան զգլիսառոր մի ի գորականաց և զերեսուն արս ընդ նման երթալ և բարուօք պահպանել, որ և զգուշացեալ ըստ հրամանի նորա անանան և անվտանգ պահեր զվանն և զմիքրանութիւնս : Եւ այսպէս կացեալ զգիշերն ողջոյն, և ընդ առաւետն հանձերձ բանական յուղի անկեալ գնացին ի Պարս :

Այլ արդ՝ զայր ամենայն անցր զոր անցին ընդ ազգու հայոց ընդ վանս և ընդ ինզն միաբանութիւնս յարեան արբու զազանաց աչօք մերովք իսկ տեսեալ ոչինչ գանգազեմք ի պաստել ըստ կարգգ ընթանալով :

Կայր ի նմին ժամանակի ազնուորդիք Համըստիկ անուանեալ, և ընակէր ի Թօրբաքալայ. որ և էտա ի կնութիւն իւր զգուատոր Հեւսէն ազայիք : Այրըս այս Հեւսէին ազայն նախանձեալ Պէլուկ բգեշլիխն, որ էր եղանգորդիք փեսային իւրոյ : Կամէր փոխանակ նորա նասուցանել ի անդին զփեսայն իւր զշամիս պէկն . ուստի յորդորեաց զնա լինել փաշայ Բասեազառու, զի ասէր՝ «նի՞ստ զու միայն անդ ի սեփհական ժառանգութեան հայրեննացդ և զոր ինչ վատնի քսակ և յանձնէ հասուցից» : Ի պատճառս որոյ բարում գրամն առեալ էր ի նմանէ, զոր տուեալ առ Գրիգոր ազայն Թօրբաքալիքի և ի ձեռն նորա առաքեաց ի Պօլիս Էհան հրովարտակ արքունի, կանուզ զիշանութիւնն Պատեագիտու և լինիլ փաշայ :

Իսկ Պալուր բգեշին չկամեցեալ զնասիւ նորա անդք, առաքեաց ի ձեռն զօրացն տալ պատերազմ ընդ նորա, յորմէ տապաստ անկեալ զօրացն Պալուր

փաշային և երկուցեալ մնացորդաց փախտակայ տնկան ի վանդ մեր . և ամքաց-
եալ անդէն՝ կացին ընդուժմ Համբար բէշչին , չթողուլ զնու անցանել և գնուլ ի
Փաեաղիս :

Այլ Համբար բդէշին առաքեաց երիցա անգամ դեսպանս առ Խաչատուր
փարդապետն և առ վահահայրն , եթէ Անհամ գամ առ ձեզ կոռւել և պատրաստ
մերուք եթէ այր յիշքք : Խսկ որ ի մէջ փանուց էին զօրքն լուեալ դայն զհասա-
բոկ գիշերաւն փախուստ առեալ դնացին :

Զայն լուեալ Համբար բդէշին , և առեալ ընդ իւր զզօրականս հանդիրձ
առենայն պատերազմական պատրաստութեամբ եկն և եմուս ի վանու . ուր յետ
քանի մի աւուրց զերիս հազարն ի զօրտցն ցրուեաց ի չըջակայ դիւղօրէս . և ին-
քրն մնաց անդէն արկու հազար արամբ իրբե ամիսս երիս :

Ապա տեսեալ թէ չէ հնար մտանել զօրացն ի Պաեաղիս , և չէր կարօղ
աղքատիկ վանքն այն կերակրել դայնչափ բազմութիւն , եթող զերիս հարիւրսն
ի վանա՞ հանդերձ պատերազմական զինուուք . և ինքն առ ընդ իւր զիշաչատուր
փարդապետ (յորմէ երկուցեալ թէ զերկիրն և դվանքն մատնէ Պալուր բդէշին)
գնաց ի Թօրքաբարձարայ :

Ապա տեսեալ մեծաւորին եթէ չէ բաւական սուրբ վանքն այն ի կերա-
կրել զզօրա՝ առաքեաց զվարդապետ մի Սարգիս անուն ի մերձակայ աւանս և
ընդ զիւզու ժողովիւ զպարքէն աւուր , հանդերձ հրովարտակառ բդէշին , զոր
ինքն առեալ էր յիրդալ իւրում :

Եւ աճապէս մինչեւ զպարնանային եղանակս կէս մի քաղց , և կէս մի
յագ մնացաք կացաք մինչեւ բարցու իշխանութիւն Համբար բդէշին . ապա
դերձեալ և Խաչատուր փարդապետի եկն ի վանս . և որ ի վանս էին թողեայ զոր-
քրն ի բդէշին , գարձան և զնացին :

Զինք ամի միոյ Համբար պէկ՝ ընդ որ և Հիւսէն աղայ Զիլանցի՝ նա-
խանձելով ընդ Պալուր փաշային և Զէշան օղլի բդէշին՝ ետուն և անցուցին զի-
լաշկերտ և քբաղաքն Թօրքազայայ առ պարսիկ Հասան իւանն : Յորմէ պատճառ-
ուրս առեալ պարսիկ ազգին սկսան այսր և անդր տարածիլ և վնասս գործել :
Ուստի ծանեան եթէ չունի մնալ երկիրն այն ի ձեռու իւրեանց , թելաղութեամբ
Հիւսէն աղային՝ Հասան իւան ետ հրաման իւրայնոց . և զնացին յերկիրն Խը-
նուուայ և Մանազկերտու , կալան անդէն զքանի մի գիւղ , և ընդ իւրեան իրբե
զգերի փարէին տանէին յերկիրն Պարսին :

Խսկ այր ոմն հայ ազգաւ եկեալ ի դիմաց ժողովուրդն առ մեծաւորն ,
ազերսէր զնա եթէ՝ «ժողովուրդք առաքեցին զիս առ տէրդ մեր . և աղաչէն՝
տրդ ժամ է Հասանիլ նոցա յօնութիւն և ազտուել ի զերութենէ» :

Խսկ մեծաւորն լոււրեալ ասէր . «զի՞նչ արարից , չունիմ զօրս՝ որովք
փրկեցից »: Խսկ Խաչատուր փարդապետ կամէր զնուլ , այլ չեթող մեծաւորն :

Այլ իրբե լուաւ զան տղէտալի պատճեթիւն առն , որպէս արիակա-
նաց է օրէն , հանդուրժեալ ի մտածմանէ ընդ դուռն եկեղեցոյ՝ թմրութիւն
անկանէր ի վերայ նորա , ի նոյն կէս մի արթուռ և կէս մի քուն . յայտնի տեսյ-
եամբ երկէր նմա ոմն յալիս ծերութեան , և ասէր . «Ալիք կա՛ց , ընդէ՞ր երկե-
չիս , և զնա՞ աղտանել զազդդ ի ձեռաց պարսից , ահաւասիկ ես ընդ քեզ եմ , և
հասանիմ քեզ ի թիկունս , և օգնեմ քեզդ : Այս եկն երիցս անզամ մեծաւ ստիպ-
մամբ . իսկ Խաչատուր փարդապետ չիմանալր թէ ո՞վ ի իցէ երմեալն այր . ապա
փառեալ հողով զբահաւարեալ զինու , ել ի ձի երկուստան արամբ փութով էւաս
ի զլուել կամրջի նփրատ գետոյն , ընդ որ պարսիկն ունէր անցանել : Ապա Խա-
չատուր փարդապետ հանդերձ իւրայնուքն ապաւինեալ յիստուած , և ի բարե-
խուութիւն Սըրոյ Հոււրաւորչին՝ խաղայր խրոխտայր առիւծանման ի վերայ
զօրուն պարսից , յորոց ընկեց անշունչ զսրս իրբե տասն և վեց : Եւ մնացեալ

պարսիկք մագավուր ճողովրեալ թագեան ի լերինս և ի քարանձաւ : Եւ ըր ժողովուրդն ապատեալ Խաչատուր վարդապետի՝ ած անվնաս ի վանս , ընդ որ զարժացեալ ամեներեան միարանութեամբ վառ մատուցանէաք տուղին զայնպիսի սիրտ և արութիւն , առ ի փրկել զքրիստոնեայ յանօրինաց :

Եւ յայրմանէ զիապուածոյ պատճառս առեալ պարսիկ ազդին՝ դիմեցին առ Հասան խանն և պատմեցին նմա զոր ինչ Հասուցեալ էր առ նոսա Խաչատուր վարդապետն , թէ որպէս պատերազմեցաւ ընդ նոսա և կոտորեաց զոմանս ի նոսանէ և զգերիս դարձոյց յետո :

Զոր անհնարինս բարկացեալ սրտմրառւթեամբ Հասան խանին , զումարեաց զօրս բազումս և եկին ի վերայ վանուց . զոր իրեւ լոէր Խաչատուր վարդապետ՝ փութով պատպամարեր առաքէր և գողովէր առ ինքն զոր միանդամ բնակիր ի գիւղօրայս շրջակայ վանուցն , և յական թօթափեյ ես ածել զաւատերազմական նիւթ վառօթս և զհրացանս : Եւ եղեալ զյոյր իւր առ բաժգերեան՝ իրր պարիսպ և կաց ընդէմ պարսիկ զօրուն . առ որ մատչէր Հասան խան ո՛չ միան նու , այլ և զրովանդակ շինութիւն վանուցն հիմնարատակ կործանել : Եւ թէ զի՞ն քաջակործութեանս եցոյց անդէն վարդապետն Խաչատուր անպատմելի է լիզուաւ , բայց միայն աշօք նկատեն և տեսանել : Եւ այս պատերազմ և կրոխ բազմիցս լինէր և տեէր ցրուր ամ մի . և չկարաց Հասան խանն շարիս ինչ հասուցանել և որ եղեալն էր ի միտս նորա ի թերեւ եկանէր :

Եետ այսր ամենայնի զայր Հասանէր Արքապար արքայ որդին պարսից , առնոյր դՊանակիս և տիրէր գրեթէ Համօրէն գաւառաց քաղաքաց մինչև ցըՄուշ : Եւ ապա գրգռեաց պատերազմ ընդ աշքութեան օսմանեան ի գաւառն Արյակիրտ և բազումք տապաստ անկեալ ի զօրացն օսմանեան . և եղե գաւառն այն ոտնակուն և աւերսիկ :

Եւ այսպէս յաղթօղ զտեալ պարսիցն , զնէր ուխտ խաղաղութեան ընդ Խաչատուր վարդապետն . կոչէ զնա առ ինքն , և զգեցուցանէ նմա Հանդեր մեծապին . և խոստանայր նմա թէ Շնէրէմ քեզ և խնայեմ քաջութեան քոյ՝ թէն դրազումն ի զօրոց իմոց սպանէր . ահա գու իմ ես Համարքալ յարս Հետէ» : Զինի զայնպիսի սանելոյ մինչ բաժանեալ ի նոցանի Արքապար արքայ , որդին դհաց :

Ապա ի պատճառս շրջելոյ եկեալ Հասան խան ի վանս՝ կալաւ զնաչատուր մարդապետն , և յաւար էտա կողպատեաց զուուր վանս , և տարաւ ընդ իւր ի Հերիան , ուր զթոյնն ի սրտի ծածկեալ՝ Հեղոյր արտաքս յորդորէր զնա բատիպմամբ մեծաւ ուրանազ և թողուր գհաւատս քրիստոնէական , և ես տամ , առէր , քեզ իշխանութիւն և ալակութիւն յառաջանալ ի ստանալ զանում , որ մեծ է քան զրոյց հաւատ . ապա թէ ոչ երդուեալ է իմ շմորու զքեզ կինդանի» :

Խոկ արին այն չառնոյր յանձնն և պատասխանէր . «իսոստումդ այդ որ ինձ իրբ ստուչը և երազ . նաև և սնոտի և անցաւոր՝ զոր գիտեն միամբ որք կամմին փառս որսալ ի մարդկանէ , և երեւիլ մարգկան . քա՞ւ լիցի ինձ թողուր ըդ հաւատս իմ . լաւ է ինձ մեռանի , քան երեւիլ յարցի իմում վատանումք :

Եւ այնպիսի հրամանաւ տարեալ զնա ե եղին ի բանտ , ուր չարչարէին զնա մաշարեր տանջանօց և ագրի ազդի զործեօք . և յաւելին արկանել զնա ի Դուրս Տամի ասացեալ մահառիթ վայր մի ներքազոյն տեղուող , յաւուրն զմի փոքրիկ ինչ նկանակ տալով յերդոցն : Եւ այնպէս անտանելի ի թշուառութեամբ եկաց մնաց զամ մի ողջոյն ի խաւարտչին տեղով . զոր բազմիցս տեսանէին պարսիկ անցնիք զյոյր պայծառ վառեալ շուրջ զնովաւ . յարում ինքն ստէ՛պ ստէ՛պ ազօթէր առ Աստուած :

Խոկ զկնի միոյ ամի՞ Սիրուանեան Ասլան ազայ Արքապար և Օսկար աշզայ ի Տիեսարին գիւղաքաղաքէ , որք բարեկամք և սիրելիք էին Հասան խանին , աղերս մատուցին առ նաև և բազում գրամս տուեալ նմա և պատեցին զթաշա-

առուր վարդապետն, որ յետոյ եկեալ ի վանս ետես եթէ վանքն տւերեալ և կարուս մնայր ի տառապանս, չկարտցեալ համբերել անտանելի տեսոյեան վանուացըն։ Թող զի և ինքն վիրաւորեալ մարմնով կաղ ոտիւք ի վերայ երկոցուաց փայտից շրջէր։

Ապատառեալ ընդ իւր զմի ի վարդապետոց՝ եկն յԱրզուամ, և կամէք հրաման առուույ յիշխանաց անտի՝ զնալ ի Պօլիս, առ ի յօդնութիւն վանուցն։ Եւ նոքա արգելուին զնա, թէ «Մեք Աստուծոյ Հողամք, և հասանեմք ի թիկունըս որչափ և կար իցէ մեր, և զպակասութիւն սրբոյ վանուցդ ընումք Աստուծոյի, բայց զու տեսնախ ժողովին զմերձակայ գիւղս և զէինա»։ Եւ նա այնպէս շրջէր աստ և անդ՝ ի պէտս վանուց և առաքէր միտնպամայն ի վանս յապրուստ միարանից։ և ամսպէս զնալով գնայր մինչև ի Կորայ ի վանս սուրբ Դանիէլի։ Եւ անդէն վաղճան ընկայնոյր երանելի և քաջ վարդապետն Խաչատուր։ Եւ ուր թաղեցան՝ տեսին վանահայրն և բոլոր միարանք զլոյտ պարծառ ծագեալ և իթեալ ի վերայ գերեզմանին։ Եւ չեն ինչ դարմանք եթէ երանելիս այս վարդապետն, ի փառս Աստուծոյ զուն գործեաց յաղագս սրբոյ վանուցն, և վանս առդին իւրոյ։ Եւ որ մեծն է՝ անրիծ և անարատ պահեաց զոուրբ հաւատու իւր. զորոյ զնոգին Տէր լուսաւորեսցէ, և ընդ երջանիկս դասեսցէ յաշակողման իւրոյ։

Զորոյ յատուկ նշան երջանկութիւնն տեսանմեմք, ի գեղեցիկ յանուանակոչութենէ տուեալ նմա յԱստուծուստ անունք Խաչատուր իրը թէ տուեալ ի խաչէն և կամ պարզեեալ, մինչ զի և ինքն կամաւ համբեր շարչարանց։ նրւիրեաց զինքն ի խաչ, և ի ձեռն խաչին, առ խաչեալն. որում փառք յամենոյշնի. ամէն։

Զայս պատմապրութիւն զոր համառօս ի գիր արձանացուցի՛ անձամր անձին ականատես եմ եղեալ ի բարդութեանց, ես անարժան մահատեսի Մանուկ դպիրս Խլիֆոյեցի Շահնազարեան, հանգուցեալ Յօհաննէսի որդի, որ այժմ ի Սուրբ Կարապետի հրաշալի վանս, որ ի Կեսարեայ։ Ուստի զայս յայն սակս արձանապրեցաք, զի որ ընթերցնդք գտանին զայս՝ ծանիցն թէ որչափ ի մեծի նեղութեան և ի բազմապիմի վտանգաւորութեան կայ այն հոչակաւոր մենաստան, և զի՞նչ կը ի թշնամեաց մինչ յայժմ, և որ ի նմա բնակեալ միարանք քանի հոգով չափ զուն գործեալ ի պէտս վանուցն ուկեսպատ նեղութեամբ դերին ի պաշտպանութիւն նոյն սուրբ ուկատի, յուրաց երևելին էր վերոյիշեալ Խաչատուր հանգուցեալ վարդապետն, որ յետ զայնքան թշուառութիւնս կը ըստ՝ ի փառս Աստուծոյ՝ յանձն էատ զնահատակութեամբ ևս մեռանիլ. զի առել նահատակութիւն, ո՛չ է հեղմամբ արեան, այլ կամաւոր շարշարանօք զման յանձն առնուլ, որ է կործ մեծ ի սէր Քրիստոսի. զորոյ զնոգին Տէր լուսաւորեսցէ, զինքնամի աղօթքն անպակաս ի մէնջ արասցէ. ամէն։

Հրատ. Ահեծիս Գ. ՍԱՆՃԵԼԻՆ

Լոս Աննելոս, Գալիֆորնիա

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱՐԱՅ ԲԱՆԱՍՏԵՂՑՈՒԻՆԻ

ՄԱՐԻ ԱԹՄԱԺԵԱՆ

Բարեկամներէս մին, ինքն ալ բանաստեղծ, փափաքեցաւ որ «Սիրն»ի չջերէն, որուն իր թանկագին աշխատակցութիւնը բերաւ յօնախ Տիկ. Մառի Աթմաճեանը, բաժնեկից ըլլամ բանաստեղծունի նկատմամբ իր ունեցած հիմացմբն :

Նոր մը չէ Մառի Աթմաճեանը: Երեսունչ աւելի տարիներու վաստակաւրի մը գործին առջևն ենք և այս պարագան պիտի բաւէր որ մասնաւոր կարիորութեամբ մօտենացինք իր հինգ հատորներէ բաղկացած գործին. Գողգոքայի Շուշաններ, Ասպահաղաք, Ցալիտենական Ռւդիններ, Գաղքաջարիի երզեր, Ռսկի Գեղօն, որոնք իր հոգիէն ծորող կաթիլներ են, մանանայի մը քաղցրութեամբ :

Իր ստեղծագործութեան մէջ քերթողուհին անցած է անշուշտ գրական որոշ յեղացրումներէ, երիտասարդական տպաւորութիւններէն մինչև հասունութիւնը, սակայն պահած է իր հոգիին բարեխառնութիւնը: Երեսուն տարիներու ընդմէջն թաւալող այս հատորները կը պահեն գլացումի և ոճի հասարակացիր մը, որ թերութիւն մը ըլլալէ աւելի բան մըն է, անով յատկանցներ բանաստեղծուհիի սկզբնական բիումբ մշտնինաւորող խանորդ, որ իր հոգիի կրակին կարմրած թելով մը կը լուսաւորի իր բոլոր քերթուածները:

Եթէ յետպատերազմեան Սփիւռքի մեր քերթողութիւնը երեսել ուղենք, կնանք ըսել թէ ան գլխաւոր երկու ուղղութիւններ ունեցաւ. Մէջին Արևելքի բանաստեղծներ և Փարիզեան գլորցը, Եթէ մեծ չի հնչեր բառը: Չենք յիշեր Ամերիկան և յետպատերազմեան Պոլիսը, որոնք համեմատարար մասցին գունաթափ, առանց յաւելումք: Միշին Արևելքի քերթողները հաւատարիմ մընցին համաշխարհային առաջին պատերազմէն առաջ իրագործուած մէր գըրտկան աւանդութեան: Փարիզի գրողները փորձեցին ժամանակին միջազայրին հետ ըլլալու առանց մնեն նուածութեներու: Մառի Աթմաճեանը հակառակ Փրանսահայ մը ըլլալուն, առաջին ուղղութեան հետեւող մը եղաւ:

Հոս պէտք է շեշտել թէ մեր օրերու Սփիւռքի գրականութիւնը ուշագրաւ է իր միութեան պակասով: Ոչ մին յետպատերազմեան մեր գրողներէն զետեղելի է իր միջավայրին և ժամանակին մէջ: Համաշխարհային զոյք աղէտները և անոնց անդրադարձը ինչպէս Արևելան մեծ երկիրներու, այնպէս ալ մեր մէջ իրենց բաժինը ունեցան անշուշտ: Մենք մեր առաջին մեծ աղէտին զոհ տուինք հարիւրաւոր տարիներու մատյանութիւն մը, հետևաբար Սփիւռքի մէջ տակաւին յունինք հոգեյատակը երբեմնի մեր ժողովուրդին, նոյն հիւսքով, բարեխառնութեամբ և նուածութիւններով ու: Սփիւռքի մէջ նոր կազմուած գաղութները, հակառակ իրենց ծաւալին և տարրութեան, գեռ չեն գտած բիւրեղացման անհրաժեշտ նկարագիրը, ծուռնդ կարենալ տալու իմացական գործունէութեան: Սրտառուց է ջանքը, բայց նուազ իսանգամառող իրազործումը:

Գրականութիւնը, ինչպէս բոլոր արտեսաները, ունին իրենց պրոտոքին և ներքին պայմանները և Առաջին՝ առելի առարկայական բնոյթով և երկրողը՝ հնագայական։ Գրագիտը ծնունդ է ժամանակի մը, բայց ժամանակը չէ զայն ծնողը։ Գալով իր ընկերային հանգամանքին, անիշտ որքն ինքզինքին նոյնքան ընկերութեան կը պատկանի։ Եթէ ամբողջութիւնը ընկերութեան պատկանի, այս բոլորանուէր զիջումը թոյլ չի տար իրեն որ ան արտակոսի վլանին բարձրանայ, միւս կողմէն եթէ ուրանայ ընկերութիւնը, նուրէն կը գաղրի արուեստի իրտիկան դործերու հեղինակ ըլլալէ։ Որովհետեւ եթէ պատկանի ինքզինքին, իր ներքին նշարաւութեան, կը զառնայ վերացական։ իսկ եթէ պատկանի միայն ժամանակին, այլինքն ընկերութեան, կը մնայ ժանձագութեան մը, և կայ ժամանակի առօրեան։ Կայ կեանքի անփոփոխ իրականութիւն մը, և կայ ժամանակի առօրեան։ Պրագէտի պարտքն է զանոնք ներգաշակել։

Անհատական թէ ընկերութիւն ըլլալու հարցը թեթև կշռուելիք խնդիր մը չէ։ Ստեղծագործողը մեծ է երբ կրնայ իր ինքանները ընկերութեանը ընել, լուծելով այս կերպ անձին և ընկերութեան առերկոյթ հակամարտութիւնը։ Ի վերջոյ պէտք չէ մոռնալ սր գրագէտը ձայնն է իր ժողովորդին, հողի մը առաջարկ տալու համար կամուրջն է, կամարդ բառերու հմայքով, աննիւթական ըլլալու աստիճան։ Ըստ Անորէ Ժիտի, «գրականութիւնը գեղեցկութեան նախադասուած իսէալի մը ենթարկել է իրականութիւնը, կարելի եղածին չափով»։ Ներաջասութիւններու և պատկերներու յառաջնադասուածը մեղի չի տանիր կեանքի լոյսին։ Շատուկ այդ լոյսին կ'երթան բայց քիչեղ կը հասնին անոր։ Անոնք կը խօսին լոյսին, առանց ճանչնալու յաճախ մութը։ Կը մեկնին դադապարներէ, դպացումներէ, անոնց գրայ փակցներով գուրսէն պատկերներ։ Մասի Աթմանեան զիտէ իր ներշնչումներն ու զգացումները արուեստի լոյսին քերել իրեն յատուեկ արդարայալութեամբ։

Աթմանեանի լեզուն անթերի է։ Գեղեցիկ լեզու մը ունենալը գրագէտ ըլլալ չէ անշուշաւ, սակայն ընդու մը կազմակերպել և գայն գրականութեան մեծարդէք դործիք մը ընելը ինքնին գրական աշխատանք է, ժանաւանդ մեր մէջ, սր գժուարէ է գրականութիւնը լեզուն տկառաղրել։ Ի վերջոյ պէտք չէ մոռնալ որ գեղուած մարմինն է հոգիին և իրու շնչք և պրայալութիւն շատ բան կրնայ գրսերէ մեր չութենին։ Լեզուն միւս կողմէ այն խմորն է որ իր վրայ կը կրէ ժամանակի և մտայնութեանց կնիքը, Բառերը ջիղ և զգայութանց ունին և կը ծառային իրքն մարտկոցներ գադապարներու, Գեղեցիկ է Սիփուռքի կարգ մը կեղուններու մէջ մշակուած լեզուն, օրինակ Փարիզի մէր գրտղներու հաճանչաւոր և զլուա պրայալութիւնները, բայց ան կը հանդերձէ բաճակ մարմիններ, որոնք քիչ անդամ մերը եղան։

Այսօր իսկ երբ կը բանանք «Յեզին Աիրտը», «Հեթանոս Երգերը», և Ճարաշալի Յարութիւնը, Հպարտութեամբ և սիրանքով կը ժտածենք անոնց տրանք իրենց պատկերու պրագան ուկողաներէն ծորեցին այն դաշնակութիւնը, ուր ցեղը, ոդին և արուեստը իրաբռ եկան, իրը յաղթանակ և վկայութիւն մէր արժէ քնիրաւն։ Երբ ցեղի մը հոգին շանցնիր իր զիցքերուն, ոյտ զիցքերու հաղիւ թէ կը պատկանին իրենց ժողովուրդին։ Սփիւռքի գրականութեան լե-

զուն չէ աղճառուած անշուշտ, ընդհակառակն ժամանակակից տիրող մէր մշակոյթներուն հետ շփուկալով իւրացուցած է որոշ ճկունութիւնն և չնորհ, սակայն առնոնց կարգին նաև հեռացած այն դոլին և միզամածային արարչութիւնն որ մեր ցեղին է, որ մէր անցեալին է և դարձած այսօր տժդոյն; Մեծարենց, Վարուժան և Թէքէտան ուրիշ բան չըրին եթէ ոչ առնել այդ խսկութիւններէն շիթեր և անոնցմոյն կախարզած իրենց բառերը ստեղծել ամք՝ ինչ որ պիտի մնայ իրենցմէ իրեր կերպարանք և արժէք մէր ցեղին; Տիկ. Մաւր Աթմածեանի քերթուածները հայեցի աւազանին մէջ ընդունած են իրենց մկրտութիւնը, կրութով Հայ Հոգիի միւսոնին դրոշմը: Իր հաւատքը, հետո մշուչէն, զի՞ ունի և իր ոգեկոչումները, անցեալին թէ ապագայէն, կեանքի մետաղը կը բերեն մեղի, քարու սրտի մը թրթուացումներով:

Անձնական և ազգային լարին կից է ընկերային լարը իր քերթողութեան մէջ, որ կը բխի կեանքի և մարդոց հակառակութիւններէն, յարաբերութիւններէն մէծատունին ու չքառարին, լուս զանգուածներուն, որոնք կը բային կեանքի մութին և տիզմին մէջչն, կարմիր դրօշ պարզած, քաղցած, լը-ուած ու արհամարհուած հարածական հզօրներէն դէպի անծանօթն ու անսառյ-դր վաղուան:

Միւս կողմէն եսակեդրն բանսատեղծուհի մը Հետն ենք, եթէ գէց չի Հնչէր բառը, որ համայնական ապրումներ երգելու պարագային իսկ կը մէկնի անձնական գլացումներէն: Իր ողեկոչումներն ու անքնչանքը, քաղցր ու թափացի, անձնական այս շեշտուած լարն է որ կը հնչեցնեն: Նկուն և ոռմանթիք յոռեւտեսութեամբ կը նայի կիտնքին: Բանսատեղծուհին սիրտը ճանչած է կեանքին գառնութիւնն և բնակնանաբար երադանքին կ'երթայ: Ապրած է պահէր, խսրունք սարսուռներով, ու յետոյ, տամայի հոգիփոք, կը վհնտու զանոնք և կը լցուի անցեալով, ուր լացոյ գէմքեր կան պաշտելի և սփոփաբար:

Հետաքրքրական ուրիշ յատկանիշ մը Տիկ. Մառի Աթմանեանի դրականութեան մէջ այն՝ որ ո՛չ ընութիւնը, ոչ կեանքը, ոչ ալ բնանկարը կամ սէրը առանձին չեն : Անոնք շատ յաճախ, կը ներկայանան միասին, տիրական ու չեցտուած գիծով մը : Օտարութեան ցաւը և մեկնող սիրելիներու կոկիծը խորոնկ է իր մէջ : Կեանքի վայելքն հեռու, անոր խորոնկ տեխչանքը ունի, նախրատը լույս պատրանքը իրականութենէն : Տոհմիկ ապրումներու խուզց մըն է իր հոգին : Հայաստանը իրեն համար տիեզերքի սիրոն է, ապրելու իմաստը, տեելու կամքը : Մայրենի յեզուն, Հայ Եկեղեցին՝ կարօտի մարմացումը իր սիրտին : Ան ներկայացուցիչն է կարօտախակ տառապղո իր սերունդին : Ընկերութեան սրցաւ անդամ մը, որուն հոգին կ'արթինի աշխարհի ցաւոյ :

Աշխարհը իրպես բանաստեղծ տեսնելու իր կցուածքը անթերի է: Իր քերթուածները լիցուն են անցեալ և ներկայ զեղումներով, տեսիներով և փոխաբերութիւններով: Բանաստեղծութիւնը հոգիին պարն է որուն մէջ մէր իմացական բոյոր տուրքերը կը խայտան ներգանակ ներդնչումներով: Մասի Աթմաճեան իրբես բանաստեղծ ունի առաքինութիւններ: զորս մէր յետպատերազմեան զրոյներէն շատ քիչեր ունին: Զգացումներու զեղում, ինամուած ուն և իրեն յատուկ ինժնատպաւթիւն: Հակառակ որ մէր զսասական ժախոյթին կը յարի, արդիական շեշտ մը կայ իր գրուածներուն մէջ, որ թէն չի նայնանար մէր նորադոյն քերթողութեան նորաստաց նկարադիրներուն, Թօփայեան, Սարաֆեան և ուրիշներ, բայց մեզի չի նեղեր, թերևս անոր համար որ իր զորքին ընդունի մտանութիւններ այ զայի են:

Բանաստեղծութիւնը չենք սահմաներ, վասնդի գուռար է միակարծիր բայց Սակայն սիսայի մէջ չենք. եռո ոնց Հանուու տեսահայոցնա մը աեւ են-

առջև նկատի ունենանք անձնական լարը և հանրային լարը : Եւ այս բաժանումը պարզ մերժեցման համար, վասնղի կը հաւատանք թէ բանաստեղծութիւնը մէկ է, բային իսկ ստուգաբանական ճնշումով մեզի պարտադրուած : «Ստեղծում» որով բանաստեղծը մինչև քերթուածին գրուելու ժամանակը իր նմանը չունեցող ապրում է և արտայալութիւն : Սփիւռքի մեր քերթողները կը լրացնն բանաստեղծութեան մէկ պայմանը միայն, անձնական ապրումի պայմանը : Կայ նաև ձեւի պայմանը որ նոյնպէս կարևոր է : Մատի Աթմանեանի քերթողութիւնը կը լրացնէ նուազագոյն շափով զոյզ այս պայմանները :

Սփիւռքի մեր քերթողներէն Բ. Թօփակեան, մեզի պիտի բերէր իր ներքին տրամութիւնը : Սարաֆեան՝ մերկութիւն, բրոտութիւն և սինիդը : Սակայն այս Քէշ մը ջրուա և կմախքային կերպարանքերը չէին բերը համայնական խորութենէ մը, ոգիէ մը, ցեղէ մը որ դիւցազներութիւններու նկարագիրն է, այլ կուգային անձնական մտասիեռումներէ, կիրքերէ, աւելի ճիշդ ինքնատիպ րլրալու ճիգէն : Մ. Իշխան՝ կարօտի և կորսուած գեղեցկութիւններու ձգուումը : Մառուկեան՝ հաղորդ Վարուժանեան պայծառատեսութեան, տաքութեան, բայց Սփիւռքէն մաշած թևերով և խղղուելու սահմանուած տադնապով մը ձեւի : Վահէ Վահեան՝ նորքի, մտածման, կոռուցման լայն չնորհներով : Մատի Աթմանեան իր մէջ ունի այս բոլորը, քաղցր ու հայեցի թնկալչութեամբ :

Անշուշտ թէ քարոզի բաժին մը կայ իր քերթուածներուն մէջ, ինչպէս նաև թիթե յունեսութիւնն մը, որոնք կը բիխն սակայն աւելի իր թեաւոր ըդդացումներէն քան բառեր մտրակող շաշիւնէն : Մեր ամենամեծ դրողներէն չատեր, Վարուժանէն սկսեալ, տուած են իրենց տուրքը այս տիրակալ իշխանին : Սակայն իրական արուեստագէտը վեր է նման բոլոր պայմաններէն : Մատի Աթմանեանն ալ կրնայ ըսել Վերէնի հետ . Հերր գժրախտ եմ, տիուր քերթուածներ կը զրեմ, երբ երջանիկ՝ զուարթ քերթուածներ կը տողեմ, ես իմ ընազդունիմ իրեւ կանոն :

Բանաստեղծը սոխակի կը նմանի, ըսած է պարսիկ մեծ սիրերգակը, ուրուն սիրոր գարդի փուշէն խոցուելի վերջ կ'արձակէ իր սիրոյ և վշտի եղերական աւաշը : Մատի Աթմանեանին սիրա արիւնող սլաքը իր բանաստեղծ եղրօր մտնէ չ, որուն առթած լիքքէն զիտացած է յօրինել իր երգը, որ իր խոր բըթուացումներով կը յուզէ մեղ, մոռցներ, տալու չափ արուեստի պայմանադրական պահանջները :

ԵՂԻՎԱՐԴ:

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ «ԵՂ ԱՇԱՆԴՈՅ»Ի ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ՝ ՄԱՍԻՆ

23. Բայց քեզ գայն եւս իշխացեն ամբարշտել, քեզ եւ որ պատճառ բատօւերին է, ի միջոյ բառմալոց իցեւ (Մ 99·25-26, Բ 225) — «Սակայն համարձակում են անօրինաբար այն էլ ասել, թէ ինչ որ ստուերի պատճառն է, մէջտեղից վերանալու է» (143):

Խօսքը Պղատոնի եւ հետեւորդների մասին է · թարգմանիչը նրանց վերագրել է մի միտք, որ նրանք չեն արտայայտել: Եղնիկը Պղատոնի մասին գըրմել է: «Իսկ Պղատոն, որ Աստուած եւ Հիւզ եւ իդոս էւուրեամբ գնէ» (Մ 99·8, Բ 224) եւ «Զաշխարհ արարած եւ եղծանելի ասէ, եւ երբեմն եւ այլքն՝ մշտրեցինաւորակից Աստուծոյ» (Մ 99·20, Բ 225): Պղատոնը եւ միւսները չեն ասել, թէ Աստուած, որ ստուերի, այսինքն՝ այս աշխարհի պատճառն է, մէջտեղից վերանալու է: Եթէ ասած լինէին, Եղնիկը իշխնիցն ստորադասականով չէր մէջբերի նրանց միտքը: Կարծում ենք, որ այս բայցը ներկայուժ թարգմանելու չէ եւ բնագրի գայն բառի վրայ բացարանշական նշան գնելով կարդալու ենք այդ նախադասութիւնը, որով Եղնիկի հեղնանքն է արտայայտուել: «Բայց թէ ա՛յն էլ համարձակուելու են ամբարշտաբար ասել, թէ ինչ որ ստուերի պատճառն է, այն էլ մէջտեղից վերանալու է»:

26. Ի հասուն հասակի եկն յաշխարհ ի կատարեալ գիտութիւնն, որպէս յայնմ աշխարհի մարքի հասանել գիտութեան (Մ 102·22-24, Բ 232) — «Հասուն հասակում աշխարհի մէջ հասալ կատարեալ գիտութեան, որովհետեւ այս աշխարհում կարելի է հասնել գիտութեան» (146):

Այս թարգմանութիւնը Գ. Խաչատուրեանի թարգմանութիւնից տարրերում է միայն նրանով, որ բնագրի մարքի բայցը մէկը թարգմանել է «աէտք է» (Խաչ., որ սիալ է), խսկ սա՞ «կարելի է», որ ճիշտ է:

Մարիէսը Գ. Խաչատուրեանի (ինչպէս եւ Վերմէրի) թարգմանութիւնը քննադատելի նկատել է ուուել իրաւամք (ծան. 822), որ բնագրում ունենք յաշխարի՝ ուղեւորման հայցական, որ թարգմանուել է «աշխարհի մէջ»՝ ներդոյական «աշխարհում» նշանակութեամբ: Սա ճիշտ կը լինէր, եթէ բնագրում լինէր «յաշխարհ»: Մարիէսը Շմիդ-Գալէմքեարեանի թարգմանութեան հետ համաձայն է: այսաեղ եկն յաշխարհ արտայայտութիւնը նշանակում է «ծընուեց»: Ուստի (Պաւղոս) ի հասուն հասակի եկն յաշխարհ ի կատարեալ գիտութիւնն բառերը նշանակում են: «(Պօղոսը) հասուն հասակում ծնուեց կատարեալ գիտութեան»: Շարունակութիւնը՝ որպէս յայսմ աշխարհի մարքի հասանել գիտութեան՝ «ինչպէս որ (որքան որ) այս աշխարհում կարելի է հասնել գիտութեան»: այս նախադասութեան մէջ բնագրի որպէս բառը չի նշանա-

¹ Եզնիկ Կողբացի, Եղջ ԱղԱՆԴՈՅ. Աղամանների հերքում: Թարգմանութիւնը, ներածութիւնը և ծանօթագրութիւնները Ա. Ա. Աբրահամեանի: Երեւան, 1970:

կում «որովհետեւ», ինչպէս թարգմանել են Գ. Խաչատրութեանը եւ Ա. Արքահամեանը:

27. Գոնեայ հիւղեայն լիցի նմանող, որ ընդ գետինն Էարշէր՝ եւ եղեւ հաղորդ արարչութեամ արարչին (Մ. 110. Զ-4, Բ 251) — «Գոնէ նմանուէր Հիւտին, որը (աստծուն) դէպի գետին հաշեց եւ սուղծողի արարչութեանը մասնակից դարձաւ» (156):

Մարշէսի Հետ (թարգմանութիւն թ 359) կարծում ենք, որ ընդ գետինն արարշէր բառերը նշանակում են «զետանի վրայ էր քարշ գալիս» կամ «սողում»։ այսինքն՝ արարշէր անցեալ անկատարը չեղոք սեռի նշանակութիւն ունի այս տեղ, եւ ընդ գետինն ուղեւորման հայցական է։

Մեր դիսուզութիւնների մէջ յաճախ յենուել ենք նոր հայկացեան բառարանի վրայ։ սակայն այս անկամ համակարծիք չնքն նրան, ուր քարշէր բարի «քայել», քաշչել, քաշկրտել իջուցանել» ներգործական սեռի նշանակութեան համար բերուած վկայութիւններից մէկը նշնիկի նախադասութեան քընդ դեմքնն քարշէր հատուածն է։

Մեզ թւում է, որ Ա. Արքահամեանը եւ նրանից պուած Գ. Խաչատրեանն այս բառերը («աստծուն» դէպի կետին քաշեց) թարգմանելու համար նը-կատի են ունեցել հետեւեալը։ Եզնիկը գրել է, թէ ըստ Մարկիոնի, «հիւղը բը-նակում էր երկրի վրայ («յերկրի հիւղն» էր), «օստար տատուածը»՝ առաջին երկնում, «օրինաց աստուածը»՝ երկրորդում, երրորդում, վերջինիս զօրքերը լին էին։ Օրինաց աստուածը իշնում է երկրի վրայ եւ հիւղից առած կաւին ողի ներշնչելուս ստեղծում է Աղամին։ Աւելի լաւ է լսենք Եղիկինին։ «Եւ տեսեալ աւրինաց աստուածոյ՝ թե գեղեցիկ է աշխարհս, խորհեցաւ առնելի ի ամա մարդ։ Եւ իջեալ առ հիւղն յերկիր, ասէ. տուր ինձ ի կատոյդ քումէ, եւ յինէն ոսմ ոգի։ Եւ արացցուք մարգ ըստ նմանութեան մերում» եւ այլն (Մ. 107. Զ-7, Բ 244)։ Աւստի օրինաց աստուածն իիննակամ է իջել երկիր։ Եւ ոչ թէ հիւղն է նրան հաշել դէպի գետին, այս այլի բուն կամ փոխարերական՝ «հրապուրելիք բառաստով։

Քանի որ հիւղը երկրի վրայ էր բնակում, ուստի կարծում ենք, որ ընդ գետինն արարշէր բառերը նշանակում են «գետինի վրայ էր քարշ գալիս» կամ «սողում»։ Եւ այս արտայայտութեան մէջ նկատելի է Եզնիկի հեգնանքը։ Գետանին սուլալով հանդերձ հիւղը հաղորդակից եղաւ Աղամի արարչագործառ թիւն՝ «եղեւ հաղորդ արարչութեան արարչին» (Ծղնիկ)։

Ա. Արքահամեանի եւ Գ. Խաչատրութեամի թարգմանութիւնը քերական նօրէն է անընդունելի է թւում մեզ նրանով, որ քարշէր անկատարը թարգմանուել է անցեալ կատարեալավ, ինչպէս յաջորդող եղեւ-ը։ Մինչդեռ կարծում ենք, որ սյուտեղ անկատարն արտայայտում է այն ժամանակի աեւուղաւթիւնը, երբ հիւղը «ընդ գետինն արարշէր», եւ օրինաց աստուածը երկրի վրայ իջաւ ու նրա համագործակցութեամբ Աղամին ստեղծեց։ Իսկ եղեւ կատարեալն արտայայտում է արարչագործութեան նրա մասնակից իիննելու վիասար։ Աւստի այդ երկու քայերի միջեւ գրուած եւ շաղկապը ներհակական է եւ նշանակում է «քայց, սակայն, այնուհանդերձ»։ բայց ոչ «եւ», ինչպէս թարգմանուել է։

28. Ենք իմչ ընդիւտ ի հերթանուաց (մարկիոնականքն. Մ. Մ-1)։ Այլ որպէս նոքա աստուածն բազաւմ լինեմ, եւ առքա աստուածն քարօզեն (Մ. 110. 10-11, Բ 252) — «Հեթանուներից ունչով չեն ասքրերում։ որովհետեւ ինչպէս որ նրանք բազմաթիւ աստուածներ են ընդունում, սրանք էլ նոյն աստուածներն են քարոզում» (156)։

Բնապրի այլ բառը չի նշանակում «որովհետեւ», այլ՝ «ընդհակառակը»:

Հեթանոսներն իրօք բազմաքիւ աստուածներ են ընդունել. իսկ «ուը բանք», այսինքն՝ մարկոնականները, նոյն աստուածները չեն քարողել, այլ՝ որինաց աստուած», Հիւզը՝ «զարութիւն երկրի» և «օտար աստուածը»: Ենոյին բառը չկայ բնագրում, ուստի կարիք չկայ արդպիսի ճշգրտութիւն զերապերու հեղինակին: Այդ բառը փակադերում անձամ դրուած չէ թարգմանութեան մէջ:

29. Յո՞ր սակա եւ հարքն մեր սուրբ եպիսկոպոսի սահմանեցին կանոնը: Եթե ո՞ւ հաւատացեալ միս ոչ ուտիցէ, եւ բանջար ընդ մայ հիշեալ իցէ, եւ ի բանջարոյն ոչ կամիցի նաշակել, նոպիսալ լիցի: Ընդէ՞ր ։ նախ ։ . . . (Մ 124. օ-8, թ 287) — «Եթիս համար ել մեր Հայրերը՝ սուրբ եպիսկոպոսները, այս կանոնը սահմանեցին՝ Եթէ միս չուտող որեւէ Հաւատացեալ մասով բանջար եւ փելու դէպրում ։ կամ ենայ այն բանջարից ուտել, թող նզովուած լինի: Ինչո՞ւ: Նախ ։ . . .» (176):

Մարիէսը նախադասութեան սկզբի յոր սակա բառերը մեկնարանել է որպէս Հարցական, նկատել տալով, որ գրա հոմանիշն է յաջորդ նախակառութեան ընդէ՞ր Հարցականը: Համաձայն ենք նրան, որովհետեւ թարգմանչի «դրա համար էլք բառերը ոչ մի հմէք չունեն նախորդ տողերում»:

Կարծում ենք, որ բնապրի կանոն բառոր թարգմանելու է «կանոններ», ինչպէս արել են Գ. Խաչատուրեանը (էջ 142) և Մարիէսը (թ 412): Արդարեւ, Հակառակ Թարգմանութեան, մէնք բնագրում երկու կանոն կամ երկու նորմք նոր նկատում: 1. Թող նզովուած լինի միս չուտող հաւատացեալը («Եթէ ոք հաւատացեալ միս ոչ ուտիցէ»): 2. Թող նզովուած լինի նաեւ այն հաւատացեալը, որ ոչ միայն միս չի ուտում՝ այն պիզծ համարելով, այլեւ մոի հետ եփած բանջարից էլ է Հրաժարուում ճաշակել («. . . եւ բանջար ընդ մասոյ ։ . . է կամիցի ճաշակեր»): «Կամ նազգիր հայոց Հրաժարուիթեան երկու համունքներում (աշխատասիրութեամբ Վաղդէն Ցալկորեանի, Հատ. Ա., Երեւան, 1964, Հատ. Բ, 1971) առարկայական ցանկերից օստուելոյ (միս եւ բանջար)՝ զըրտանք քի կանոն, ուր նզովքի երկու էկտերն էլ միասին սահմանուած լինեն: Այլ՝ առանձին կանոնում կարդում ենք հետեւեալը մասկերութիւնը պիզծ համարողների մասին: «Եպիսկոպոս կամ երէց կամ ասրկաւագ կամ բնաւիխն կոկ ի քահանայական կարգէ յամունութենէ, ի մայ եւ ի գինոյ ոչ վասն ճնշուուրութեան, այլ պիզծ վարկանելով, զայնոսիկ ի բաց մեկնի, մոռացեալ թէ աւենայն ինչ յոյժ բարի է, զի արու եւ էղ արար Աստուած զմարդն, այլ Հայութիւնը անզունեսցէ զուրծաւորութիւնն՝ կամ ուղղեսցի կամ լուծցի եւ յեկեղեցւոյն ի բաց ընկենցը: Ամանպիս եւ ժողովրդական ոք» (Կանոնազիր հայոց, Հատ. Ա, էջ 88, Կանոնք Կղեմայ):

Հետեւեալ երկու կանոնները վերաբերում են մասով եփուած բանջար ուտելոց Հրաժարուուղիներին: «Ոլք յուիսի անդ իցեն երիցումնք կամ սարկաւագունք կամ այլ ոք ի պաշտանէից եւ Հեռի իցեն ի մայ եւ միտք իւրեանց յաւժար իցեն ի ճաշակել, Համարձակ կերիցեն եւ մի պաղտնարար: ապա թէ կամք իցեն՝ պահիցեն, ընկունին կանոնք դերկուին: Ապա երէ ոք պիզծ համարիցի կամ զրամաք եւ զիաց, որ մասու իցէ, ոչ ընդունին զնա կարգք եկեղեցւոյ» (Անդ էջ 164, Կանոնք Անկիրեայ): «Ոլք յուիսի իցեն երիցումնք եւ սարկաւագունք, եւ Հեռի իցեն ի մայ, կամ եղեւ զի ճաշակենցեն, ապա եթէ կամեացին՝ պահեսցեն ի մասոյ, ապա երէ պիզծեսցին կամ պիզծ համարեցին մինչեւ դրանջարն որ ընդ մայն անկամիցի կամ հպիցի ի միսն չուտիցեն, եւ ոչ ան-

ուայցին կանոնացու, լուս լիցին յաշտիճանէ քահանայութեանը (Մադ, Համ, Բ, էջ 77, կանոնք երկրորդ նիկիականը) :

Այսպիսով կարծում ենք, «որ նորովքին վերաբերող նախողասութիւնը կարելի է թարգմանել, բայ այդ կանոնների. «Եթէ հաւասացեալ մէկը միու չուտէ, եւ («եթէ» առաջին կանոնի երեն-ն վերաբերում է նաեւ երկրորդին կամ պայմանի ստորոտասական նախոգասութիւններից նաեւ երկրորդին, ինչպէս յաճախ նզնիկի երկում») մսի հետ բանջար եփուած լինի, եւ բանջարից էլ չկամենայ ճաշակել, թող նզովուած լինի»; Գ. Խաչատուրեանի թարգմանութիւնը շատ յատակ չէ. «...Սուրբ եպիսկոպոսները կանոններ սահմանեցին. 'Եթէ հաւասացեալ մէկը միս չ'ուտեր, եւ միսով բանջար ևիուած ատեն՝ բանջարէն չ'ուղեր ուտել, — նզոյեալ ըլլայ» (էջ 142). «բանջարէն» բառից յետոյ պէտք է «ալ» բնագրի եւ շաղկապը թարգմանելու համար:

30. Եւ Առաքեալ՝ այր հաւատարիմ՝ կոչէ զկուսանսն: Բայց հայեցեալ ի բնուրիւթ՝ չիշխի յայր հրաման տալ, այլ ակնարկելով յաւթարեցուցանէ. որպէս եւ Տէրն ակնարկէ, այլ ոչ ստիպէ (Մ 124. 20-22, Բ 298) — «Եւ առաքեալը կյուսերին կտուակի մարդ է համարում, բայց, նայելով բնութեանը, չի համարձակում բացայացորդէն հրամայիլ (կոյս դատնալ), այլ հասկացնելով համողում է, ինչպէս որ տէրն էլ հասկացնեմ է եւ ոչ ստիպում» (175-176):

Եթէ բնագրի այր հաւատարիմ կոչէ զկուսանսն բառերը նշանակէին «կոյսերին պատահելի մարդ է համարում», Գ. Խաչատուրեան՝ «ընդունելի մարդ կը կոչէ կոյսերը» (էջ 143), ապա դասական գրաբարի գերականութեան համաձայն սովորաբար կ'ունենայինք «արս հաւատարիմս», որոնք թուով համաձայնած կը լինէին զկուսանսն ուղիղ խնդրի հետ. «Եթէ ներդործական բային սեռի խնդրիր յոգնակի է, գյուղական բնութեան խնդրիր սովորաբար յոգնակի կը դրուի» (Քերականութիւն հայկազնեան լեզուի, 1885, էջ 225): Արդ, հենց թարգանութեան մէջ ունենք «զոյսական բնութեան խնդիր»՝ այր, հաւատարիմ ածականը սրա որոշին է: Ուստի սխալ է թարգմանութիւնը:

Մարիէսը հրատարակութեան մէջ բութ նշանը գնելով Առաքեալ եւ հաւատարիմ բառերի վրայ, այր հաւատարիմ բառակապացութիւնը որպէս բացայաշիք է ընդունել Առաքեալ ենթակային՝ «Եւ Առաքեալ՝ հաւատարիմ մարդ, կոչ է անում կոյսերին» (տղամարդ կամ կին) կամ կուսութեան: Եղնիկը չի մէջրերել այդ կոչը, որի ազբիւրը ցոյց է տուել Մարիէսը՝ Ա Կորնթ., է, 25, ուր կարդում ենք. «Անը վասն կուսունաց հրաման ինչ ի Տեառնէ ոչ ունիմ, բայց խրատ տամ որպէս ողորմելոյ ուրուք ի Տեառնէ հաւատարիմ լինել». ուստի Առաքեալն է հաւատարիմ իր Վարդապետի ուսմունքին եւ կուսութեան մասին ոչ մի հրաման չի տալիս, քանի որ այդպիսի հրաման չի ստացել:

Թարգմանութեան մէջ «հրամայիլ» բայցից յետոյ փակագեերում աւելացուած է «կոյս դատնալ»: Քանի որ ըստ մարգակային բնութեան սա ակնարելի է, ուստի նախընտրելի էր «մնալ» փոխանակ՝ «զառնալ», եթէ երրէք այս յաւելումն անհրաժեշտ էր: Թարգմանիչը թէրեւս առարկէ, թէ «կոյս դատնալ» անելով հասկանում է այսօրուայ իմաստով կկուսակրօն, վանական կոյս դատնալը եւ այլն: Բայց ինչպէս Առաքեալն իր Փղթի է գլխում, այնպէս էլ նզնիկն այստեղ խօսում է ամուսնանալու կամ ամուրի մնալու մասին:

31. Եւ զինը կսակարան աւտարուի համարի ի հնոյն եւ յախմանէ, որ ի նմայն խաւելը:

Զյարութիւն մարմնոյ արհամարիէ (Մ 128. 29-30, Բ 297) — «Նոր կը տակարանը նմին խորթ է համարում եւ նրամից էլ արհամարհում է մարմին երի յարութիւնը, որի մասին խօսում է այնուղ» (180):

Կարծում ենք, որ Ա. Աբրահամեանը ամենեւին չի հասկացել Եղնիկի միտքը: Թերեւս պատճառը Վենետիկի Հրատարակութեան կետադրութիւնը եւ նախագասութիւնների վաս բաժանումն է. «Եւ զնոր կտակարանս օտարութիւնը համարի ի հնոյն. և յայնմանէ, որ ի նմայն խօսէր, զյարութիւն մարմնոյ ար համարհէ»: Ինչպէս տեսանք, Մարիկսն իրաւամբ առանձին նախագասութիւն է համարել վերջին երեք բառերը: Քննարկուազ փոքրիկ հատուածում, որ Մարիկոնի աղանդի քննագասութեան պէտքը եղբափակող վերջին էջից է, իրօք ունենք մարկինեան երկու դրոյթ:

Առաջին մարկիոն «Եւ զնոր կտակարանս աւտարութիւնամարի ի հընոյն եւ յայնմանէ, որ ի նմայն խաւսէր» — «Մարկիոնը նոր կտակարանը օտարութիւնը է համարում հնոյն եւ նրանից, որ խօսում էր սրա (այլինքն՝ Հին կտակարանի) մէջ»: Բնագրի յայնմանի բացառականը քերականորէն աւտարութիւն ածականի խնդիրն է, ինչպէս ի հնոյն բացառականը: Իմամութիւն տեսակիտից այդ յայնմանը գերանուանի տակ մննք հասկանում ենք հոգին սուրբ, որ պատգամներ էր տալիս Հին եւ նոր կտակարաններում: Եղիշէն այդ մէկ նախագասութեամբ ամփոփել է սկզբում ասած հետեւեալ մաքերը. Մարկիոն «Եւ այնչափ յանդզնեալ սատանայութեան ոգուղին, մինչեւ ի պատգամաց հօգույն սրբայ քաղ հանել. զիէս տեստարանի ընտրել առնուլ՝ եւ զիէսն իբրեւ զիսուան ի բաց թողուլ. նոյնպէս եւ զատաքելական թղթոցն. եւ զիէն կտակարանն ամենենին սրանալ, որպէս թէ յանգամաէտ տուեալ իցեն ևր ոչ ի բարւոյ (Մ էջ 10-111, Բ 253): Այսպիսով ամենեւին ընդունելի չէ յայնմանի բացառականի «Եւ նրանից էլ» թարգմանութիւնը, որ հաւանաբար նշանակում է «այդ պատճառով էլ»: Անընդունելի է նաև «որ ի նմայն խաւսէր» բառերի «որի մասին խօսում և այնտեղ» տարօրինակ եւ մութ թարգմանութիւնը. մութ, որովհետեւ յատակ չէ, թէ «այնտեղ» գերանուան տակ ո՞ր կտակարանն է հասկացուաւ:

Մարկիոնի երկրորդ դրոյթը, որ Եղնիկն ամփոփել է քննարկուող վերջին նախագասութեան մէջ, հետեւեալն է. Մարկիոն «Զյարութիւն մարմնոյ արհամարհէ» — Մարկիոնը «Աբրհամարհում է մարմնի յարութիւնը»: Այս կարծ նախագասութեամբ Եղնիկը յիշեցնում է Մարկիոնի հետեւեալ դրոյթը, որ ըստ կրում ինքը քննագատել եւ մերժել է մի քանի էջում: «Այլ եւ յարութեան մարմնոց չհաւատալ ուստի՞ իցէ Մարկիոնի եւ Մանեայ եւ այլոցն նոյնպիսիւաց: Ասեն. Առաքեալ ասաց՝ թէ մարմնին եւ արին զարգայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն» եւ այլն (տե՛ս Մ 126-4-7, Բ 290-291 եւ շարունակութիւնը): Այսպիսով այս դրոյթը, որ քննարկուող հատուածում արտայայտուած է երեք բառանի կարծ նախագասութեամբ, կապ չունի առաջինի հետ: Խոկ Ա. Աբրահամեանը, հետեւելով Գ. Խաչատրուեանին, խառնել է դրանք:

* * *

Այստեղ ընդհանում ենք բայեն թարգմանական սխալներին վերաբերող մէր միւր գիտողութիւնները և նշում այլ կարգի թերութիւններ:

ա. Զքարգմանուած բառեր

Ա. Աբրահամեանը թերացել է թարգմանանձ բառերի այնպիսի բառեր, որոնք ամենեւին աւելորդ չեն. ահա մէք քանի օրինակ:

1. Ու ի մի միայն կողմն՝ ի հանդէպ երեսացն եւեթարշակին (Մ 18-27-28, Բ 18) — «Ու թէ միայն դէպի առաջ է արշատում» (37):

2. Դ Դ Դ Թարգմանուած չեն բնագրի ընդունուած բառերը՝ «Ու միտյն մէկ կողմ»:

2. Պատերազմունք շարժին, ուր մեղասր եւ արդար ու հասարակ կոտրին (Մ 14.17-18, Բ 20) — «Պատերազմներ են տեղի ունենամ, մեղաւոր ու արդար հաւասարապէս կոտրում են» (38):

Թարգմանուած չէ բնագրի ուր բառը:

3. Ո՞վ է Ալիդրմ եւ գործից տյնիսի անպատճից, բայց եթե իցէ ինչ չար գործութիւն, որ... (Մ 14.20-21, Բ 20) — «Ո՞վ է այսպիսի անպատճութիւնների սկզբնապատճանն ու սրանք կատարողը, եթէ ոչ ինչոր չար գործիւն, որը...» (38):

Թարգմանուած չէ բնագրի իցէ բայլը՝ «Եթէ չինի», որ այստեղ կարեւոր է, քանի որ Եղիսիկի ընդդիմակացները հաւատում էին, թէ գոյուրիւն ունի մի չար գորութիւն:

4. Ցալթմւթեան և պասկի ոչ ցանկանայցեն (Մ 29.27, Բ 57) — «Յադ-թանակի չձղտեն» (56):

Թարգմանուած չէն բնագրի եւ պասկի բառերը:

5. Զմանէն յուրաստ էր, թե չեն գու իմ որդի, եւ զմիւսմէն խոստուկ, թէ որդի իմ է (Մ 61.29-30, Բ 136) — «(Ջրուանը) ուրացաւ՝ (ասելով, ...)» (96). Ժողովուած չ բնագրի զնմանն բառը, որին Հակարուում է զմիւսմէն դեռանունք. ուստի պիտի ասուէր՝ «(Ջրուանը) ուրացաւ երան...»:

6. Եթե իբրեւ ի չարէ յուրաստ էր, ապա և յուրեանն զնա չէր պարտ արժանի առնել, այլ անցէն իբրեւ ի չարէ յուրշել (Մ 61.31-32) — «Եթէ ուրանում էր նրան, որպէս չարի...պիտի խորչէր չարից» (96):

Թարգմանուած չէն բնագրի իբրեւ բառը. «Նրանից պիտի խորչէր իբրեւ չարից»։ Հմատ. նախադասութեան սկզբի «իբրեւ ի չարէ բառերը»:

7. Այլ յալղայթ սնամալյա՞ եւ ի մտաց իսկ անկանի մարդ (Մ 80.12, Բ 180) — «Աւզեղի դատարկուելուց մարդը ցնորուում է» (118):

Թարգմանուած չէն բնագրի այլ եւ իսկ բառերը։ Առաջինն այստեղ նշանակում է «այլեւ, այլ զէպէքրում»։ Երկրորդը՝ «Առյօնիսկ, անզամ, մինչեւ իսկ»։

8. Վասն լուսատու լիմելոյ միայն արարան (լուսաւորքն) եւ ի նշանն եւ ի ժամանակու յաւուրս, յամիսս եւ ի տարիս (Մ 82.25-26, Բ 185-186) — «Ստեղծուեցին՝ միայն լրյու տալու եւ ժամանակները, օրերը, ամիսներն ու տարիները նշանակելու Համար» (122):

Թարգմանուած չէն բնագրի ի նշանն Հայցականը կամ թերեւս թարգմանուել է որպէս «Նշանակելու Համար»։ Գ. Խաչատուրեանի թարգմանութիւնն էլ նոյնն է (էջ 91)։ Սակայն Եղիսիկն այլ բառին աւելի մեծ կարեւորութիւնն է տուել, քան թարգմանիչները։ Դա երեւում է ոչ միայն դրան նախորդող «եւ» շաղկապից, որ դրէի ընդդիմարկում կարող է լինել, այլև անմիջապէս յաջորդ տողում նա բաւելացրել է։ «Ոչ իբրեւ զկնողանիս, այլ իբրեւ ըգուսաւորս լուսատու լիմել ի ներքոյ երկնից եւ զծածս աստուածդիտութեան ցուցանել, եւ զանձրեւաց եւ զաւցոց փոփոխմանց», որ ճիշտ է թարգմանուած «...աստուածանանայման, ինչպէս նաև անձրեւների ու եղանակի փոփոխմաների նշանները նշանները ցոյց տարու Համար» (էջ 122)։ Կարծում ենք, որ առաջին նախորդասութեան մէջ կատարուելիք որրազուութիւնը հիմա պարզ է։

9. Եւ այլոց անամոց ոչ նոյնպիս (Մ 93.14, Բ 211) — «Բայց անաւունների (կենանութիւնը) նոյնպիսին չէ» (135):

Թարգմանուած չէն այլոց բառը. Պատճառը կործում ենք այլ է, որ

